Բակին

Pakine

ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
ԱՐՈՒԵՍՏ
ԻՄԱՑԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Վարիչ խմբագիր՝
Յակոբ Պալեան

Խմբագիրի օգնական՝
Արփի Համբարեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ
Անուշ Թրուանց (Լիբանան)
Սարգիս Կիրակոսեան (Լիբանան)
Մովսէս Հերկելեան (Լիբանան)
Հրանդ Մարգարեան (Միացեալ Նահանգներ)
Արքմենիկ Նիկողոսեան (Հայաստան)
Յարութիւն Պէրպէրեան (Գանատա)
Յակոբ Տէր Ղուկասեան (Լիբանան)
Զաքար Քէշիշեան (Լիբանան)

Էջադրում՝
Զարեհ Զէօրէքճեան

Հասցէ՝
Պուրճ Համուտ,
«Շաղզոյեան» կեդրոն
Բ. յարկ
e-mail :
pakin@hamazkayin.com
Հեռ. 00961-1-241072

Տպագրութիւն՝
Համազգայինի «Վահէ Սէքեան» տպարանի

Ցրուումի կեդրոն՝
Համազգայինի Գրատարած, Շաղզոյեան կեդրոն, Պուրճ Համուտ
Հեռաձայն՝
(01)241263/4
Ֆաքս՝
(01)260329
Փոստարկղ՝
80-1096 Պ. Համուտ
E-mail :
imphamaz@inco.com.lb

Հրատարակութիւն
Համազգայինի
Կեդրոնական Վարչութեան



ԲԱԳԻՆ

ՄԱՐՏ 2009
Է. ՏԱՐԻ ԹԻՒ 1

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ, ԻՆՔՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ - 1

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ - ՄԱՐՈՒՇ ԵՐԱՄԵԱՆ - 2

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ - ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ - 5

ՊԱՏԱՌԻԿՆԵՐ ՋԵՄՄԱ ԳՐԻԳՈՐԵԱՆԷՆ - 9

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ - ԱՐԵՒՇԱՏ ԱՒԱԳԵԱՆ - 15

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ - ՅՈՎՍԷՓ ԷՍԿԻՃԵԱՆ - 17

ԱՍՏՂԸ - ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ - 19

ՅՈՐՁԱՆՈՒՏ - ԿՈԼԻԱ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ - 23

ԱՂՋԻԿՏԵՍԸ - ՍԻՐՈՒՆ ՍԻՍԵՌԵԱՆ-ՀԱՃԷԹԵԱՆ - 36

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԿՈՍՏԱՆԴԵԱՆ - ԴՈԿՏ. ՍԵԴԱ ՔԻԼԷՃԵԱՆ - 39

ՔԱՆԱՔՕ՝ ՃԱԲՈՆՈՒՀԻՆ... ՅԱՐՈՒԹԻՒՆ ԿԱՐԵՒՈՐԵԱՆ - 44

ԳՐԵԼ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆ Է, ՆԱԵՒ՞ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ - ՀԱՅԱՑՈՒՑ՝ Յ. ՊԱԼԵԱՆ - 49

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՆԽՈՆՋ ՄՇԱԿ ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ 70ԱՄԵԱԿ - ՄԱՐԳՈՒՏ ԽԱՉԱՏՐԵԱՆ - 54

ԵՐԳԻՇԱՆՔԻ ԼԵՋՈՒԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ Գ. ՄԱՀԱՐՈՒ ԱՐՁԱԿՈՒՄ - ՍԷՐԳԷՅ ԱՂԱՋԱՆԵԱՆ - 63

ԱՆՏԵՍՈՒՈՂ ԽՈՐԻՄԱՍՏ ՄՇԱԿՈՅԹ ՄԸ՝ ՍՆՆԴԱՌՈՒԹԻՒՆԸ ՀՈԳԵԿԱՆ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐՈՒ ՈՒՂԻՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ - ԺԻՐԱՅՐ ՅՈՎՍԷՓԵԱՆ - 71

ՎԱՀԷ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ ԼՈՒՍԱՐՁԱԿՆԵՐԷ ՀԵՌՈՒ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ՄԸ - ԲԱԳԻՆ - 75

ԳԻՐՔԵՐՈՒ ՀԵՏ - 80

ՄԵՐ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԸ ՅԱՆՁՆԵՆՔ ՀԵՏԵՒԵԱԼԸ.

«ԲԱԳԻՆ» ԱՐՏԱՏՊՈՒՄ Չ'ԸՆԵՐ, ՀԵՏԵՒԱԲԱՐ ԿԸ ԽՆԴՐԵՆՔ ՈՐ ՄԵԶԻ ՂՐԿՈՒԱԾ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԻԱԺԱՄԱՆԱԿ ՉՂՐԿՈՒԻՆ ԱՅԼ ՏԵՂ: ԿԸ ԽՆԴՐԵՆՔ ՆԱԵՒ, ՈՐ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄՆԱՆ ԱՌԱՒԵԼԱԳՈՅՆ ՊԱՐԱԳԱՅԻՆ ՄԵՔԵՆԱԳՐՈՒԱԾ ՎԵՑԷՆ ԵՕԹԸ ԷՋԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ:

ԽՄԲ.

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ, ԻՆՔՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՄՇԱԿՈՅԹ

Ինչպէ՞ս կենսագործել խորագիրի եռեակով ըմբռնուող պարզ-բարդ կացութիւնը եւ նաւարկել նիւթապաշտական ակնկալութիւններէ, կարգախօսներէ եւ ոչինչ նշանակող ճառերէ տարբեր ջուրերու վրայ:

Հայ երիտասարդութիւն տարազը ոչինչ կը բացատրէ, երբ չկան հասարակաց չափանիշներ եւ մշակութային ենթահող, հասարակաց լեզուն դիմագիծ կը փոխէ, կամ կը կորսուի, նոյնիսկ եթէ փոքրամասնութիւն մը կը շարունակէ իր ինքնութիւնը ապրիլ անով: Ընտանեկան պատկանելիութեան ազդակը, առանց ազգայինի նկատառման, հետզհետէ կը վերածուի պաշտօնատնային արձանագրութեան, անձնագիրի: Երբեմն կը լսենք՝ *իմ ծնողքս ալ հայ են*... Հայ երիտասարդութիւնը տարիքի շերտ կը բնորոշէ եթէ չկայ բովանդակութեան խնդիր: Դրական են հայ երիտասարդներու խմբաւորումները, անոնք չնչին տոկոսն են իրենց տարեկիցներուն: Ամբողջով միայն կրնայ գոյանալ հայ երիտասարդութիւնը: Այդ ըլլալու համար՝ պէտք է ժառանգեն:

Նիւթապաշտութիւն եւ զուարճութիւն-զբօս ամէն օր քիչ մը աւելի կը փակեն արժէքներու, կրօնական, քաղաքական յանձնառութեան, եւ մշակոյթի դռները: Շրջապատի հոսանքին մէջ ենք, եւ յաջողելու համար պարտաւոր ենք, կամ այդպէս կը զգանք - նաեւ ծնողներու ճնշման ներքեւ – մեր արմատներէն զիջումներ ընելու:

Ի՞նչ ընել որպէսզի զիջումը չյանգի հրաժարման եւ ազգայինը չբանտարկուի ADNի մէջ: Պարզ չէ՞ որ ADNը ծագում կը ճշդէ, եթէ փնտռող ըլլայ: Ազգային պատկանելիութիւնը մնայուն լարում է, մասնակցութեամբ անհատին եւ հաւաքականութեան, հաւասարապէս: Այսինքն, հաւաքականութիւնը - ընտանիք, պետութիւն, մտաւորականութիւն - պիտի ստեղծէ ազգի երիտասարդութեան որպէս այդպիսին կայացման պայմանները: Կը կատարուի՞ այդ՝ազգային հարազատ հեռանկարով: Կը փորձուի՞նք ընել եղածի եւ չեղածի անխարդախ եւ թափանցիկ հաշուեկշիռը, նկատի ունենալով նաեւ որ Մփիւռքի պարագային պետութիւնը դերակատար չէ հայու ինքնութեան պահպանման համար:

Եթէ անմիջականի պատեհապաշտութեամբ եւ շահախնդրութեամբ առաջնորդուինք, հայ երիտասարդութիւնը կը փոխարինուի յաջողած երիտասարդներով, իբրեւ երաշխիք մեր զաւակներու երջանկութեան եւ բարօրութեան: Եթէ արգելք է «հայ»ը, կարելի է զայն մէկդի դնել, ըսել՝ թէ յետոյ կը տեսնենք: Քաղքենիական հոգեբանութիւն՝ որ միայն քաղքենիներուն յատուկ չէ:

Հաւաքականութիւնը նախ ինք պէտք չէ կորսնցնէ իր իւրայատկութեան արժէքները եւ զայն փոխանցնէ: Ինքնութեան կերտման համար անշրջանցելի է ՄՇԱԿՈՅԹը. լեզու, գրականութիւն, եկեղեցի, երգ, պար, թատրոն, արուեստ: Ազգային լեզուն եւ մշակոյթը ինքնութիւն կը կերտեն, արգելք չեն ուրիշ լեզուներու եւ մշակոյթներու իւրացման: Հայերէն շարականներ երգող Աշոտ Մալաքեան, ծանօթ Հանրի Վերնէօյ, եղաւ շարժանկարի աշխարհի մեծերէն: Հայ երիտասարդութիւն ունենալու համար հարկ է հայացնել երիտասարդութիւնը, ոչ գործնապաշտութեան դէմ, այլ փոխհարստացման ճանապարհով, հաւաքականութեան ուժը նպատակասլաց կերպով գործածելով:

Մեր ժամանակներու մեծագոյն գիւտը կազմակերպութիւնն է: Այդ կը ծառայեցնե՞նք երիտասարդութիւնը լայն առումով ազգային հարազատ մշակոյթի մէջ պահելու, ստանձնելով նիւթական եւ մարդկային պատասխանատուութիւններ, ոչ միայն բանիւ:

Ծագումով հայ երիտասարդներէն կը յառաջանայ հայ երիտասարդութիւն, եթէ առաջնահերթութիւն դառնայ, հայերէնախօսութիւնը ազգային քաղաքականութեան առանցք, չբաւարարուելով զգացումով *հայ ենք*ով, ստեղծենք պայմանները հայ գրականութիւն իմանալու, եկեղեցին չհամարելու միայն աղօթատեղի, այլ ազգային հարազատութեան կռուան, վառ պահելով հայրենահանման սուր գիտակցութիւնը:

Ծագումով հայ երիտասարդները հայ մշակոյթի աւազանին մէջ միայն կը դառնան հայ երիտասարդութիւն: Այս՝ մեր գոյատեւման անշրջանցելի մարտահրաւէրն է: Իսկական ինքնահաստատման համար, առանց բարդոյթի եւ խուսափումի, ան հայ գիրի եւ գրականութեան ընթերցող եւ ստեղծող պիտի ըլլայ, այդ ընելու ճամբան պէտք է հարթել:

ԲԱԳԻՆ

«Վերսայ», Էմիլ Քաջաջ 80 սմ.

ԴՌՆԵՐ

Բանտիս դռներն էին եօթը
մուտքերով
մտերիմ ու անքարտէս

եօթ դարպասներ
եօթը կողպէք պատմութեան
եօթ հմայիլ աքսորի

պատուհան չկար որ երկինք մը
սահմանէր
մուտքերէն դուրս անապատ մը
կը լայնար
եւ անոր մէջ ցեղս ինքզինք
կը փնտռէր

ո՞վ փակեր էր դռները
ու յետոյ
լծուեր զանոնք բանալու
առեղծուածի պորտին վրայ
ապրելու
չմեռնելու
ծանրութեան տակ բառերու եւ
շղթաներու
ոսկեզօծ ու թիթեղեայ

Բանտիս դռներն էին եօթը
մուտքերո՞վ թէ ելքերով

թափանցիկ են անունները
ժանգոտած ծխնիներով

որո՞ւ արիւնն էր որ լուաց ժանգերը
եւ իւղեց ծխնիները
ելումուտը դարձաւ կարծես կարելի

Դռները վաւերական
պատմութեան կամ առասպելի
կնիքով

անկիւնի սեւամորթը
- միակն այստեղ -
տեսարժան վայրերու կարգին
դասուած



յաւիտեանս խարսխուած
խարկուող պիստակներու
ծխնելոյզին առջեւ
պատմուածը կը կնքէ
իր կնճիռներուն թիւով

ծանծաղ՝ հոսքը մարդերուն
սակայն հզօր՝ հոսքը սեռին
որ կը պահէ ամբողջ ցեղ մը
խաբկանքներու սօսնձուած
գոհացումով գիջութեան

բանտախուցերուն մէջ միայն
ազատութիւնն իմաստ կ՚առնէ
եւ բոլորը կը միանան միայն մէկը
գոնէ մէկը
փրկելու

բանտիս դռներն էին եօթը ելքերով

ՔՈՅՐԵՐ

Բագոսուհիներ լռութեան բարբառին
հեռու մտերիմ
նայեցայ ձեր աչքերուն
հոսեցաւ գինին ժամանակին

կարկառուն էին մեր ձեռքերը
անջրպետէ անջրպետ
ու թէեւ քանդեր էինք ճաղերը
դեռ ամբողջ չէր կամուրջը որ
պիտի բերէր մեզ իրարու
լուռի ու ցաւի գաղտնաբառով

թուղթ չունէինք
մեր մորթին տաղեցինք պատմութիւնը
զոր դուստրերը պիտի կարդային
գտնելու ելքը լաբիւրինթոսին

իսկ մելանը՝
դանկըտեցինք աղ ցանեցինք վէրքերուն
ու դիտեցինք գիշերին մէջ
կողոպտիչները արեան

ԲԱՆԳԻՆ

քամեր էինք գոյնը աչքերէն
ա՛լ պէտք չունէինք
կարմիրին
քոյրեր էինք սկիզբէն
ջուրերը մեզ սահմանեցին
բաժնեցին

բարձր էին պատերը
ճեղքերէն դիտեցինք զիրար
ու տեսայ ամպը
որ կ՚իջնէր Ֆարողզադի ուսերուն
բիւրերորդ պատ որպէս
բայց լռութիւնն էր միակ միջոցը
իրեն հասնելու

մինչեւ հասայ
  թռչուն դարձեր
          թռչեր էր

ատեցի բոլոր թեւաւորները
եւ կարծրասիրտ անուանեց զիս
ամուսինը
որուն խօսքի ջրհեղեղին տակ շնչահեղձ
կը թպրտար
կիսատ տողը

տաք մոխիր իսկ չունէինք
չիր սարքելու մեր ցաւերու շարոցներէն
մանեակի պէս մեր վիզերուն
ծանրաքար

ծովանոյշներ
հողին վրայ կ՚ապրէինք
եւ խօսքը արգիլուած էր

մինչեւ հատուցում

ՄԱՐՈՒԾ ԵՐԱՄԵԱՆ



«Յուսակատարություն», Մարդ

ՀԱՁԱՐ ԵՒ ՄԷԿ ԳԻՇԵՐՆԵՐՈՒ ՎԱԽՃԱՆԱԿԱՆ ՀԱՆԳՐՈՒԱՆԻՆ

Գարնանային գիշեր մըն էր,
Երբ Շեհրազատ, մեղկապաճոյճ պչրուհին,
Քալեց յուշիկ դահլիճն ի վեր պալատին՝
Նազելաշուք վայելչութեամբ.
Եւ բազմեցաւ մահիճին մէջ արքայական,
Ուր կը սպասէր զինք անթարթ՝
Վեհապետը՝ Շահրաեար:

Գիշերն էր զով
Եւ կիսաբաց պատուհանէն ննջարանին՝
Հովը գարնան վարդ ու խայտանք կը բուրէր:

ԲԱԳԻՆ

Հմայագեղ հեքիաթներով շարայարուած՝
Հազար եւ մէկ գիշերներու
Հասած էր պահը գերագոյն,
Վերջին րոպէն գիշերական,
Երբ Շահրաեար, փոխան զուարթ ողջոյնի,
Նետեց նայուածք մը մռայլ
Շեհրազատի դէմքին յանկարծ,
Որ լռելեայն
Գուշակելով հանդերձ միտքը չարակամ
Խոժոռադէմ արքային,
Փորձեց բանալ վերստին
Հեքիաթներու իր հոգեգրաւ շարքն անվախճան,
Սկսելով ճիշդ այն կէտէն,
Ուր ակամայ կանգ էր առած նախորդ գիշեր:

- «Լռէ՛, ով կին»- գոչեց արքան Շահրաեար,
«Ալ կը բաւէ, քանի՛ գիշեր
Օրօրեցիր ուշքն իմ անվերջ՝
Խորհուրդներովդ մտացածին.
Օրօրեցիր էութիւնն իմ՝
Կախարդական հնարքներովդ քնաբեր,
Որ ես դառնամ ստրուկն անխօս՝
Իգական նազանքներո՛ւդ վաւաշոտ.
Օրօրեցիր կեանքն իմ ամբողջ
Ցնորաբե՞ր քաղցրութեամբ,
Որ դո՛ւն միայն տիրես կամքիս,
Իշխես սրտիս՝
Պերճաղիճի քմայքներովդ տոչորուն:
Բայց չեմ յիշեր,
Թէ ո՞վ արդեօք արքնցուց զիս
Հազար եւ մէկ գիշերներու
Դամբանաբոյր թմբիրէս.
Եւ փրկեց զիս խաբէական խօսքերուդ
Անկարեկիր կալանքէն:
Լսէ՛, ո՛վ կին, ալ չես կրնար դիւթել զիս՝
Քու երբեմնի շարժումներովդ ծեքծեքուն.
Ո՛չ ալ կրնաս յանձնել զիս՝
Գրգանքներուդ կորստաբեր յորձանքին,
Զի ալ զգաստ եմ հիմա
Եւ շնորհիւ իմ խորազգաց արքնութեան՝
Կրնամ դիւրաւ կռահել
Շարժառիթը անիմաց՝
Ձգտումներուդ մթասքող»:

- «Տէր իմ, արքա՛յ»,- պատասխանեց Շեհրազատ,
«Ես ուզեցի պահել քեզ
Հեքիաթներու խայտաճամուկ բնաշխարհին
Մթնոլորտին մէջ չքնաղ,

Որ մնաս զերծ, մնաս հեռու
Քեզ ջլատող դառն խոհերէդ ցերեկային.
Եւ տանջակոծ խաժամուժին մէջ կեանքին՝
Սրտնեղութիւն չունենաս:
Ես ուզեցի պարփակել քեզ
Վանդակին մէջ թեւերուս,
Որ կարենամ հաղորդակից պահել քեզ՝
Իմ մարմնական շնորհներուս բնատուր,
Որ ողջունես զուարթութեամբ կենսալիր՝
Լուսածագերն ամէն օր»:

- «Մի՛ ողոքեր զիս երբեք՝
Ստապատիր խօսքերով»,
Ըսաւ արքան զայրացած.
«Եւ մի՛ ժպտար աչքերուս՝
Աղերսարկու նայուածքով,
Զի խեղդեցիր բազում իղձեր սրտիս մէջ՝
Ճակատագրի պէս դաժան:
Հազար ափսոս ցնորքներուս հաճոյական,
Որ թօշնեցան շունչիդ ներքեւ,
Դարձան տերեւ հողմատատան.
Հազար ափսոս բաղձանքներուս գիշերական,
Որ թեւերուդ սարդոստայնին մէջ տամուկ՝
Դարձան զոհեր արիւնաքամ:
Հազար ափսոս, որ զոհեցի՛ քեզի՛ համար
Ձմեռնական այնքան երկար գիշերներ,
Գարնանային այնքան պահեր սխրալի,
Զորս կրնայի յատկացնել
Հազար եւ բիւր էակներուն կանանոցիս,
Որոնք, ո՛վ կին, առաւել քաղցր են եւ դիւթիչ
Եւ առաւել գեղեցիկ,
Քան առինքնող երեւոյթը քու խաբուսիկ:
Հազար եւ մէկ գիշերներու
Արարքներէդ խաբեպատիր՝
Յոգնած ես դուն եւ տարօրէն անշքացած.
Ու փոխարէն ողորմելի էութեանդ
Եւ քու տեսքիդ զառամեալ,
Ես կրնայի անյագօրէն ըմբոշխնել
Հազար եւ մէկ տարփուհիներ ծաղկատի
Եւ ունկնդրել՝
Հազար եւ մէկ սիրավէպեր սրտառուչ:
Մինչ դուն միայն մահաքունով թմրեցուցիր
Խանդն ու աւիւնն իմ առնացի.
Եւ վարուեցար ինծի հետ՝
Ըստ կանխորոշ հաշիւներուդ ծածկախոհ:
Եւ քու յանցանքն անքաւելի՝

ԲԱԼԳԻՆ

Մահո՛վ միայն պիտի քաւես:
Վաղն առաւօտ, քեզ գլխատել պիտի տամ
Եւ վճիռն այս պիտի ըլլայ վճռական
Ըլլայ հատու»:

- «Տէր իմ, արքայ»,- պատասխանեց Շեհրազատ,
Եւ յանցապարտ լռութեամբ
Ակնարկելով իր գաղտնասքող յղութեան՝
Յարեց մեղմիւ.
«Գիտեմ թէ զիս պիտի մահուան դատապարտես՝
Քեզ անարգած ըլլալուս.
Բայց, խնայէ՜ գէթ քու զաւկիդ կեանքը բողբոջ,
Որ, ժամ առ ժամ, կը խլրտի եւ կ՚աճի՝
Որովայնիս մէջ ահա»:

Եւ խստասիրտ արքան յանկարծ
Խոր զարմանքի մատնուած,
Դիտեց անձայն, դիտեց երկար եւ ուշադիր
Շեհրազատի արգանդն յուռթի,
Ուր հոգի մը սաղմնաւոր՝
Օրըստօրէ կը մեծնար:
Ու խորացաւ, խորացաւ
Լուռ ստրջանք մը իր մէջ,
Վերյիշելով այն ջերմ պահերն հեշտանքի,
Որոնք անցան երազային բերկրութեամբ՝
Իր մահիճին մէջ բուրեան:
Եւ պարուրեց կարեկցանք մը իր հոգին
Հանդէպ քնքուշ Շեհրազատին,
Որուն սիրտը կը լիանար՝
Մայրական ջերմ ապրումով:
Եւ համակուած յուզումով՝

- «Գնա՛»,- ըսաւ, հպարտ արքան Շահրաեար,
«Այսուհետեւ քեզ պերճաղիճ չեմ կոչեր.
Եւ փոխանակ քեզ մատնելու կորստեան՝
Պիտի ներեմ այս անգամ
Վասն սիրոյն այն մանկան,
Որ պիտի գայ լոյս աշխարհի,
Իբրեւ ոգին մարմնաւոր
Եւ ծնունդը հարազատ
Հազար եւ մէկ գիշերներու
Պատրանքո՛վը քաղցրացած՝
Մեր սիրաջերմ մտերմութեան»:

ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Անծանօթ մնացած վաղամեռիկ բանաստեղծուհի մը՝

ՋԵՄՄԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ

ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԷ.- Նիւ Եորք, հրապարակային հանդիպման մը աւարտին, գեղանկարչուհի Էմմա Գրիգորեան ԲԱԳԻՆի յանձնեց իր քրոջ՝ Ջեմմա Գրիգորեանի բանաստեղծութիւններէն փունջ մը: Ջեմմա Գրիգորեան ծնած է Գիւմրի, 1937ին եւ մահացած է 1985ին: Եղած է Երեւանի Պետական համալսարանին մէջ կենսաբանութեան գիտաշխատող եւ դասախօս: Գրած է արձակ եւ չափածոյ շուրջ ութսուն բանաստեղծութիւններ եւ լայնաշունչ բանաստեղծութիւն մը՝ «Աստուածներու խրախճանքը Գառնիում», նուիրուած հեթանոսական տաճարը վերանորոգողներուն: Պէյրութ գտնուած շրջանին գրած է, բանաստեղծութիւններ՝ ձօնուած քաղաքին եւ տեղի հայութեան: Լոյս ընծայած է տասնեակ մը գիտական յօդուածներ: Ջեմմա Գրիգորեանի շրջապատին մէջ արուեստը եւ գրականութիւնը միշտ ներկայ եղած են. իր կրտսեր եղբայրն է գեղանկարիչ Բագրատը, նոյնպէս վաղամեռիկ: Անաղմուկ եւ նրբազգաց բանաստեղծուհիէն պատառիկներ կը հրամցնենք հայ գրասէրին, յուսալով որ հատորիկով մը լոյս կը տեսնեն միւս էջերը եւ վերլուծողներ կ՚ըսեն իրենց խօսքը:

Բ.

«Դիտում», Տպրս

Փոթորկոտ ծով ես դու, ամեհի, հսկայ, որ առել ես ինձ քո ալիքներին եւ օրօրում ես տաշեղի նման:

Իսկ ես նման եմ անղեկ մակոյկի, յանձնուած քո կամքին, փոթորկոտ կրքիդ, քո գերին եմ ես, յաւերժ քո գրկում, ու թէեւ գիտեմ, որ խորտակուում եմ, բայց վերջին ձայնը, որ ուզում եմ լսել՝ թող լինի շառաչն ալիքներիդ եւ մռնչիւնն ալեկոծուող հոգուդ:

*
* *

Անքուն գիշերներիս երբեմն այցելում է լուսնի շողը: Դալուկ եւ թախծոտ ներս է թափանցում պատուհանից եւ ընկնում անկողնուս, մեղմօրէն խաղում է մազերիս, աչքերիս, դէմքիս հետ, փարուում է կրծքիս եւ ինձ թուում է, թէ ես զգում եմ քո շրթունքների հպումը, լսում եմ քո շունչը, սրտիդ բաբախումը: Եւ երբ լուսնի շողը քո պատկերով շնչաւորելուց յետոյ ուզում եմ գրկել նրան, նա հալուում է, դալկանում, կորչում՝ թողնելով ինձ մենակ, ձեռքերս կրծքիս խաչած...

*
* *

Վերադարձրու սրտիս գէթ մի տրոփիւնը,
Թռիչքիս գէթ մի վայրկեանը,
Յուզումներիս գէթ մի պահը,
Ալեկոծման գէթ մի պահը,
Ալեկոծման գէթ մի ալիք,
Երջանկութեան մի պատառիկ,
Եւ արեւից, որ վերցրի ամբողջութեամբ՝
Մի փոքրիկ շող...
Բոլորը քեզ տուեցի...
Ո՞ւր են հապա...

ԷՔՍՊՐՈՄՊՏ

Կիմային

Ճկուն եղէգի պէս ճօճւում է Բէյրութը,
Հաստատուն հող իմ, քեզ եմ կարօտել:

Շուրջս հայեր են, բայց օտար է երկինքը,
Իմ հայրենի տուն, քեզ եմ կարօտել:

Ծխում է Բէյրութը, տագնապ կայ ամենուր,
Իմ խաղաղ լեռներ, ձեզ եմ կարօտել:

ԲԷՅՐՈՒԹԻ ԳԻՇԵՐԸ

Ծովը նազանք է բաժանում վերից,
Արմաւենին իր մեղմ փսփսոցը,
Երկինքը հարբել է Լուսնի սիրուց
Մոլորուել, ընկել է ծովի ծոցը:

Ճամբան շփոթուել է ու մութի հետ
Ցած է գլորուել կրծքից լեռների,
Խճճուել, դառել կծիկ ոսկեթել,
Դէմ առել մանրիկ աւազին ափի:

Ալիքների մեղմ նուագակցութեամբ,
Սօսափիւնի տակ գիհու ճիւղերի
Լուսինն է պարում երկնակամարում
Որպէս գիշերուայ չքնաղ դիցուհի:

Ու շուրջը ամէն բան հմայուած է
Լուսնի նազելի պարով սիրաբաղձ,
Արեւելեան մութ գիշերն արբած է
Այս կախարդանքով մինչեւ լուսաբաց:

*
* *

Հին Փիւնիկիայի չքնաղ տարփուհին,
Որ երթն է յիշում Մակեդոնացու
Ու դեռ պահում է իր տաք շուրթերին
Հպանցիկ համբոյրը Կորսիկացու:

Արեւելքի վառ գոյներով շողուն,
Արեւմուտքի նուրբ ձեւերով ճկուն,
Մինչեւ հիմա էլ սրտեր է գերում,
Հմայքներով իր գայթակղում:

Մարմինը յանձնել է ծովի քմայքին,
Դէմքը ողողել արեւի շողով,
Ինչպէ՞ս դիմանամ այս հրապուրանքին,
Ինչո՞ւ է կանչում ինձ հեռուից ձեռքով:

Դէմ առ դէմ կանգնած իրար ենք նայում,
Հոգու տագնապով զննում ենք իրար,
Նա՝ արեւելքի ադամանդն անգին,
Ես որ իմ հոգում ունեմ ադամանդ:

Այլ է մօտիկից... Տեսնում եմ ահա
Որդեհալած մօր դէմքը ծաղկատար,
Մարմինը տանջուած, հոգին երկուկէս
Եւ որդիները՝ թշնամի իրար:

Օ, մայրական սիրտը պէտք է տոկայ,
Չէ որ այն երբեք կիսել չի լինի,
Մինչ որդիների խելքը դարձի գայ,
Նա պէտք է տոկայ:

Չքնաղ տառապեալը Արեւելքի,
Կորցրած հանգիստ ու աչքի քունը,
Յոգնած մարմինը յանձնել է ծովին
Ու դեռ տոկում է...

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՄԱՅՐԻՆ

Ծովափին կանգնած մայրին մենաւոր
Հողմից թեքւում է մէկ ձախ ու մէկ աջ,
Քամուց հալածուած ալիքը ծովի
Վազում է, գալիս նրան ընդառաջ:
Ծովը շոյում է ոտքերը մայրու,
Ծովը մաքրում է վէրքերը նրա,
Իսկ մայրին թեքուել է ծովի վրայ,
Ճիւղով սրբում է արցունքը նրա:

*
* *

Անթիւ, անհամար վարագոյրներով,
Մի բռունցքի չափ թատերաբեմ է
Մարդկային սիրտը:
Սակայն ինչպիսի ընդգրկումների
Տեսարաններ են խաղացուում այնտեղ...
Այստեղ են ահա դերասանները՝
Սէր, կարօտ եւ խանդ,
Ատելութիւն եւ գութ,
Խիղճ ու վեհութիւն՝
Կրքերը բոլոր:
Զգացմունքի այս խաղն է ահա,
Սիրտ կոչուած բեմահարթակի վրայ,
Որ մարդու լեզուով
Կոչուում է հոգի, հոգեկան աշխարհ...
Ինչ էլ անում ենք՝
Սիրում կամ ատում, ծիծաղում, լալիս,
Կեղծում ու ստում՝
Վարագոյրներն ենք մենք միայն փոխում.
Խոր եւ անեզր
Բեմահարթակ է մարդկային սիրտը...

*
* *

Մրսում է հոգիս,
Դողում է ցրտից,
Մերկ է մնացել
Աշնան քամու դէմ:
Փչում է քամին,
Սպառնում հանգցնել
Հոգուս կրակը,
Եւ տեղը թողնել
Ծխացող մոխիր...
Ծխացող մոխի՞ր...
Նոյնն է, ինչ մահը...
Թէ մի ձեռք լինէր
Գգուող ու ուժեղ,
Որ պարիսպ դառնար
Փչող քամու դէմ
Փրկէ՛ր կրակս...
Կը բոցավառէի նրա դէմ պայծառ,
Կը դառնայի խարոյկ,
Թէկո՛ւգ մոխրանայի:
Այդ մոխրանալը ո՛ւրիշ է արդէն:

*
* *

Թախիծը շրջեց ողջ աշխարհով մէկ
Եւ եկաւ, թառեց իմ աչքերի մէջ:
Ծուարել է նա ամենախորքում
Եւ ողողել է ողջ էութիւնս:
Այլ եմ ես հիմա, թախծոտ եմ դառել,
Ինձ չես ճանաչի, թէ հիմա տեսնես:
Ինձ երկար-երկար թողեցիր մենակ...
Աչքերս այնքան դատարկ մնացին,
Քո տեսքին կարօտ,
Որ թախիծն եկաւ, գրաւեց տեղդ...
Այլ եմ ես հիմա,
Ինձ չես ճանաչի, թէ հիմա տեսնես...

ԲԱՅԳԻՆ

*
* *

Մի պայծառ ժպիտ ունեմ քեզ համար պահած.
Մի քնքուշ հայեացք, հոգում՝ մի անկիւն,
Մի գաղտնի հոգոց, կարօտ ու թախիծ,
Եւ մի բուռ արեւ, որ եթէ շաղ տամ տառապած հոգուդ՝
Կը բուժուեն վէրքերը քո սիրտը խոցող,
Կը չքուի մշուշը քո հոգին տանջող:
Եկ ինձ մօտ, սիրելիս...

*
* *

Ողջ կեանքս անցաւ
Իմ իսկ կառուցած պատրանք ամրոցում,
Ուր սիրեցի ես, վեհ, քնքուշ սրտեր,
Որ կեանքում չկային,
Շնչաւորեցի ծաղկին ու քարին
Եւ ստեղծեցի արեւներ բազում
Ու տեսայ նրանց չքնաղ լոյսի տակ
Տժգոյնը՝ պայծառ...
Եւ հիմա քամին, իրական քամին,
Քշեց ու տարաւ հրաշք ամրոցս,
Յաք-ցրիւ արեց,
Ճիշդ խատուտիկի սերմերի նման:
Եւ տակն ինձ բաժին
Ոչինչ չմնաց...

*
* *

Քամուց խաբուել են
Սկզբում պարել,
Յետոյ թափուել են
Այս տերեւները:
Խշշում են հիմա
Իմ քայլերի տակ
Աշնան այգու մէջ
Իմ խաբուած,
Թափուած
Յոյզերի նման
Յուսախաբ եղած
Այս տերեւներից:

ԱՐԵՒՇԱՏ ԱՒԱԳԵԱՆ

Բանաստեղծ, գեղանկարիչ եւ մշակութային-հասարակական գործիչ: Արժանացեր է գրական մրցանակներու: Վարած է Հայաստանի Ազգային հեռատեսիլի գրական-գեղարուեստական հաղորդումներու խմբագիրի պաշտօնը: Հիմնադրած է «Նաւասարդ» մշակութային հանդէսը: Նախագահն է մշակոյթի հայկական Ֆոնտին: Ստեղծած է «Ծիր կաթին» գիտամշակութային միութիւնը:

ՀՈԳԵԿԵՐՏՈՒԱԾՔ

Իր էութեան մէջ պատսպարելով
Բջիջը լուսածին,
Հայրս բերել էր իր նախնիների գոյնն ու գծերը
Հանգրուաններով կեանքի ու մահուան
Իր մէջ բերել է
Նախապապերիս մէկի արիւնը,
Մէկի հայեացքն է բացել գարնան դէմ,
Մէկի թրթռուն սրտի զարկով է
Սիրոյ գաղտնիքի դռները թակել,

Իր նախնիների երազանքների
Գանձատուփերը պահած իր մտքում,
Հայրս բերել է ծագումնաբջիջը հայի,
Ազգիս նախնական հոգեկերտուածքի
Թանկ ու հարազատ գծերն է բերել:
Հայրս եկել է ու պիտի գնայ,
Նա դեռ ապրում է իմ էութեան մէջ.
Իմ աչքերով է նայում աշխարհին
Եւ մեր նախահօր գուրգուրանքով է
Շոյում գլուխը չորեքթաթ անող
Իմ թոռնիկների:
Իր էութեան մէջ պատսպարելով,
Ազգս կրում է բարութիւնն իմ հօր,
Պապիս հաւատը եւ ապուպապիս
Այն համոզմունքը, որ անմահութեան
Ու վերյառնումի հերթափոխերով
Աշխարհ են գալիս հները նորից՝
Մայրամուտ ապրող
Ու արշալոյսուող Արեգակի պէս:

ՀԱՅՈՑ ԵՐԿԻՐ

Լեռնաշխարհի բոլոր կողմերում,
Պահապան զինուորի նման
Կանգնած են զօրաքարերդ,
Ծիծեռնակներդ թրատում են երկինքը:
Երկնքի ու երկրի ներթափանցումների միջով
Անցնում է հոգեհոսքը այգի՝
Երակների խորքով հողի ու արեան:
Ամէն մի հայորդի
Մի շարժունակ կոթող է
Քո սրբազան հողում:

«Երասխաձոր տարեր» - Արեգնազ Ամիրեան

ԻՂՁ ԱՌ ԱՍՏՈՒԱԾ

Կ՚ուզէի որ իտէալ Սէրը՝
Աղբիւր դառնար մշտահոս,
Ու վարարէր անդադար
Հասնէր՝ պապակ շրթներու,
Դպչէր մոլոր սրտերու,
Անօթեւան մարդերու.
Ըլլար՝ գետ մը մեղրածոր,
Ըլլար Արփի կենսաւէտ
Անպարագիծ լոյսի ծով,
Լուսաշաւիղ առաւօտ,
Միւռօնաբոյր ճանապարհ,
Երթ՝ երջանիկ գալիքի,
Կապոյտ երագ եթերի,
Անմեղ խաղեր մանկական
Մայրական գիրկ Եդեմի,
Չար ուժի դէմ՝ լայն վահան,
Ըլլար գօտի յաղթութեան,
Երգ՝ անխարդախ դաշինքի,
Ու ծիածան հաշտութեան,
Սաղմոսագիրք Աղօթքի,
Անճար խորհուրդ՝ Պատարագի,
Սրբագործող՝ բալասան,
Անհատնո՛ւմ Սէր,
Սէ՛ր անվհատ,
Նախապայման՝
Մարդ էակի լինելութեան

Պէյրութ, 2008

ՆԱՅՈՒԱԾՔՆԵՐՈՒ ԼԵԶՈՒՆ

Նայուածքներ կան՝ խոնարհ, խոհո՛ւն,
Ծով սրտերու՝ երագ անհուն,
Նայուածքներ ալ՝ վեհ ու վսե՛մ,
Կեանքի ճամբուն հաւատքի վէմ.

Նայուածքներ կան հրապուրող,
Ակնթարթով՝ բերդ գրաւող.
Նայուածքներ ալ՝ խո՛ր ու մթի՛ն,
Վարդ ժպիտներ՝ հոն կը սպառին.

Նայուածքներ կան՝ ջինջ, անապակ,
Կապոյտ երազ, համակ գգուանք.
Նայուածներ ալ՝ անտակ անդունդ,
Տեսքին որոնց՝ սիրտ կ՚ելլէ թունդ.

Նայուածքներ կան՝ մեղմ ու բարի,
Ոսկի կամար՝ ծիածանի.
Նայուածքներ ալ շանթահարող,
Նե՛տի սլացք, չարն զգետնող.

Նայուածքներ կան զերթ հայելի,
Հայելով իսկ մարդ կը զմայլի.
Նայուածքով մ՚ալ անհո՛ւն անձաւ,
Սիրտ մը դողով գերի դարձաւ:

Պէյրութ, 1955

ՄԱՅՐԱՄՈՒՏԻ ՇՈՂԵՐՈՒ ՀՄԱՅՔՈՎ

Սարալանջի գիւղէն վար,
Պուրակներէն ալ անդին,
Արահետ մը կը ձգուի.
Ու ամէն օր,
Ոսկեփոշի շաւիղէն՝
Երկու սրտեր տենդահար,
Ընդելուզուած կ՚ընթանան՝
Հասնելու հոն՝
Ձմրուխտածածկ ձորի եզրին,
Երկինքն ի վեր աշտանակուող բարտիին մօտ՝
Սիրուած վայրն այդ հանդիպման:

Մայրամուտի շողերով արբշիռ՝
Յափշտակեալ զոյգն այդ խենթ,
Վերացումով կը դիտէ՝
Հորիզոնի բոցավառող գոյներու հրաշքը անօրինակ.
Պահի վեհութեամբ լուսազարդ,
Զոյգը սիրահար,
Ծիրանավառ բնութեան անձեռակերտ խորանին առջեւ՝
Կ՚ուխտէ՝ Սէր անանձնական:

ՅՈՎՍԷՓ ԷՍԿԻՃԵԱՆ

Շուֆ, 1967

«Երաշտում» - Գլուռ Եղիազարեան

ԱՍՏՂԸ

Երգի աւարտին չկրցաւ զսպել ինքզինք ու խելայեղ ծափերուն հետ «պռաւօ»ն թռաւ բերնէն բարձր ու անկաշկանդ, շուրջիններուն ուշադրութիւնը ակնթարթ մը իր կողմ շեղել տալով։

Չկրցաւ տեղը նստած մնալ ու ոտքի ելաւ։ Կը ծափահարէր ամբողջ ուժով, մինչ աչքերէն արցունքները կը հոսէին այտերուն վրայէն։ Իսկ ինք կարեւորութիւն չէր տար.

Երգ չէր այդ, հրեշտակային գեղգեղանք էր, մարդկային ձայնի ամենանուրբ, ամենասրտառուչ, քաղցր, ամբողջ ապրում ու զգացում... գեղեցիկ ձայնի հանդէպ մասնաւոր տկարութիւն ունէր։ Կը յուզուէր ու չէր կրնար զսպել արցունքները։ Իսկ այս երգը գլեց անցաւ իր ներաշխարհը տակնուվրայ ընող բոլոր չափանիշները։

Ոչ մէկ բռնագրօսիկ ձեւ, ոչ մէկ ճիգ... բառերը մեղեդիին հետ կը հոսէին, երբ կը կատարէր «Ծաղկած բալենի» երգը։

Թէքէեանի «Եկեղեցին հայկական» բանաստեղծութեան մէջ տող մը դարձած էր հոգեթով երգի աննման նկարագրական ու գնահատանք, զոր իւրացուցած էր ու դարձուցած իր սեփականութիւնը.

«... ու տօթակէզ ցերեկին անտառ մըն է ստուերոտ,
Ուր շուշաններ կը ծաղկին շարականի գետին մօտ...»։

Այս երկրորդ տողը գլուխ-գործոց պատկեր էր իրեն համար, հանճարեղ գիւտ, ու կը տարուէր երեւակայելու ստուերոտ անտառ մը, ուր նման հոսող երգի մեղեդիին քովն ի վեր շուշաններ կը ծաղկէին...

Հիմա իր սրտին մէջ ալ շուշաններ ծաղկած էին ու ափերը կարմրելու աստիճան կը շարունակէր ծափահարել։

Միջնարարին չհամբերեց, վազեց բեմին տակը, ուր խցիկներ կային եւ ելոյթ ունեցողները սովորաբար կը հանգստանային, «ո՞ւր է, ո՞ւր է բալենին կատարողը» պոռաց... բոլորը իրեն նայեցան զարմացած. անծանօթ մարդիկ էին, եգիպտահայ երգչախումբի անդամներ ու յանկարծ խցիկէ մը գլուխ մը դուրս ելաւ քիչ մը վախուռած դէմքով.

- Այո՛,- ըսաւ աղջիկը,- գի՛ս կ՚ուզէք։

Նկատեց զինք. հեռուէն այնքան յստակ չէր տեսած դէմքը. անուշիկ աղջնակ մըն էր. մօտեցաւ ու գրկեց զինք, ապա համբուրեց ձեռքը.

- Այդ ի՛նչ երգ էր, խենթացուցիր զիս, այսպիսի երգ չեմ լսած...

Աղջկան զարմանքը քիչ մը աւելի շեշտուեցաւ այս յորդ զգացումներուն դիմաց, ապա փորձեց ժպտիլ ու շնորհակալութիւն յայտնեց։

Տղան չէր գիտեր դեռ ինչեր ըսել, կարմրեցաւ. կը շարունակէր նայիլ աղջկան իր թաց աչքերով, ապա ձգեց աղջկան ձեռքն ու շուրջի մարդոց իր վրայ գամուած նայուածքներուն տակ դուրս ելաւ ու սրահ բարձրացաւ։

Եգիպտոսի քոյր միութեան փոքր երգչախումբն էր, հազիւ քսան հոգինոց, որ Հալէպ եկած էր համանուն միութեան մշակութային ձեռնարկներու փոխանակման ծրագրով։

Փոքր երգչախումբ, սակայն անթերի կատարողական մակարդակ ու մենակատարներով հարուստ ամբողջութիւն մը, ուր տաղանդաւոր խմբավարին աշխատանքը լիովին արտացոլուած էր։

Որպէս տուեալ կազմակերպութեան պատասխանատուներէն մին, խումբի կեցութեան օրերուն, զանազան առիթներով չհեռացաւ աղջկան մօտէն, դեռ հմայուած անոր անթերի կատարումէն ու ոսկեձոյլ ձայնէն կը շարունակէր իր ուշադրութեան կեդրոնին մէջ պահել երգչուհին։

Հասաւ մեկնումի օրը. ողջագուրուեցան ու բաժնուեցան։ Աղջկան մայրը, որ կ՚ընկերանար խումբին, շատ ալ հաշտ աչքով չէր նայեր այս բոլորին ու բաժանումի վայրկեանին յստակ կը կարդացուէր անոր դէմքին հանգստութիւնը՝ «երթանք ալ ազատինք այս տղուն ձեռքէն...»։

Իսկ տղան աղջկան ձայնէն զատ ուրիշ հետաքրքրութիւն ու նպատակ չունէր. սիրահարուած էր այդ հրեշտակային ձայնին ու չէր կրնար զգացումները թաքցնել։

Երեւի աղջկան մայրը այլ մտավախութիւն ունէր. չէր հաւատար որ տղուն «սիրահետումները» զուտ գեղարուեստական մղումէ էին։

* * *

Անցաւ տարի մը, գուցէ՝ աւելի։ Երգին ձայնագրութիւնը յաճախ մտիկ կ՚ընէր ու

կրկին ու կրկին կը յուզուէր։ Կարօտ մը սկսած էր բոյն դնել մէջը, կարօտ՝ երգչուհին տեսնելու, խօսելու, անգամ մը եւս լսելու անոր թովիչ ձայնը։

Առիթը յանկարծ ներկայացաւ՝ հրաւէրը փոխադարձելու համար Գահիրէ պիտի երթային ու ինք, իբրեւ պատասխանատու, պէտք էր ընկերակցէր մարզական խումբին։

Անսահման էր ուրախութիւնը աղջկան կրկին հանդիպելու հեռապատկերը գինովցուցած էր զինք։ Թէեւ աղջիկէն առած հեռախօսահամարով քանի մը անգամ փորձած էր հետը խօսիլ, սակայն չէր յաջողած։

Զարմանալի է զգացումներու այս ամբողջ մակընթացութիւնը միմիայն անոր ձայնին համա՞ր էր, թէ՞... «թէ»ին չկրցաւ ճշգրիտ պատասխան տալ։

Գահիրէ հասած օրէն իսկ սկսաւ փնտռել աղջիկը, աջ-ձախ հարցուց, բայց այնքան ալ դիւրին չեղաւ գտնել զինք։ Վերջապէս այն օրը, ուր հայկական շքեղ թատերասրահի մը մէջ, ի պատիւ հիւր խումբերուն եւ պատուիրակութեանց գեղարուեստական յայտագիր մը կը մատուցուէր, եւ ուր երգչախումբն ալ ելոյթ պիտի ունենար, բարձրացաւ բեմ կողմնակի դռնէ մը ու վարագոյրին ետեւ շարուած խումբին մէջ նկատեց աղջիկը, մօտեցաւ ու... միայն ձեռքը թօթուեց՝ որքա՜ն պիտի ուզէր գրկել զինք ու համբուրել, սակայն շուրջիններուն նայուածքները արգելք եղան, որ երկար ժամանակ փայփայած հանդիպման մանրամասները ի կատար ածուին։

Աղջիկը նոյն ջերմեռանդութեամբ չպատասխանեց՝ քաղաքավար ժպտեցաւ՝ մէկ-երկու բառ փոխանակեցին ու վերջ։ Երգչախումբի տղաքն ու աղջիկները զարմացած կը նայէին ու տարօրինակ կը գտնէին տղուն ինքզինքին արտօնած համարձակութիւնն ու մտերմիկ մօտեցումը։

Տեղւոյն վրայ փորձեց ժամադրութիւն մը առնել աղջիկէն, որպէսզի ձեռնարկներէն դուրս տեսնուին ու աւելի ազատ խօսին։ Աղջիկը ոչ չըսաւ, սակայն ժամադրութեան չեկաւ։

Հալէպի ելոյթին տպաւորութեան տակ տղան թղթակցութիւն մը յանձնած էր հայկական թերթի մը, ու անհամբեր էր աղջկան կարծիքը իմանալու, գուցէ նաեւ զայն սիրաշահելու՝ բայց աղջկան կարծիքէն առաջ հասաւ անոր մօր կարծիքը, երբ մարզադաշտին մէջ իրարու հանդիպեցան։ Մայրը, որ Հալէպի մէջ ալ հաշտ աչքով չէր նայած այս մտերմութեան, իր դժգոհութիւնը յայտնեց, որ իր աղջկան հայ ըլլալը հրապարակուեր է...

Տղան չհասկցաւ՝ ինչպէ՞ս թէ, հայ չէ հապա ի՞նչ է... վերջապէս տեղացի մը փարատեց հարցականներով լեցուն տղուն շփոթը՝ ըսաւ, որ այս երգչուհին սկսած է արաբերէն երգել, եւ թէ տեղացիները մեծապէս կը գնահատեն անոր կատարումները՝ մայրը ամէն միջոցի կը դիմէ, որ աղջիկը մտնէ եգիպտական հեռատեսիլի աշխարհէն ներս, ու կը վախնայ, որ երբ իմանան անոր ինքնութիւնը, դժուարութիւններ ծագին...

Տղան լսած էր, որ աղջիկը մէկ-երկու անգամ, Եւրոպայի մէջ Ֆրանքօ-Արապ երգի փառատօններուն Եգիպտոսը ներկայացուցած է ու մրցանակ շահած, նոյնիսկ ձայնագրուած երիգ մըն ալ մտիկ ըրած էր, սակայն բնաւ չէր տպաւորուած՝ ո՛ւր էր անոր հայերէն կատարումը, ո՛ւր՝ արաբերէնը... ու մէջը վախ մը սպրդած էր, որ չըլլայ թէ յանկարծ աղջիկը լքէ հայկականն ու լրիւ փարի արաբերէնին։

Հիմա կասկածները հիմնաւորուած էին՝ ճիշդ է, որ ան դեռ կը շարունակէր մաս կազմել եգիպտահայ երգչախումբին, սակայն արդէն շատ հազուադէպ, յատուկ խնդրանքով, յատուկ առիթներով, որպէս մենակատար։

Ափսոսաց, սրտանց ափսոսաց՝ որքան ցաւալի պիտի ըլլայ այսպիսի ձայն մը

կորսնցնել։ Եգիպտահայ տղաքն ալ նոյն կարծիքէն էին, սակայն ապագայի հեռանկարները այնքան շլացուցիչ էին, որ դժուար թէ ան համոզուէր կանգ առնել, յատկապէս որ այդ ճամբան հարթող, իր կռնակին գօրաւոր մայր մը ունէր։

Եգիպտոս, արաբական աշխարհի երգարուեստի ու ֆիլմարուեստի Մեքքան էր, ուր կրնային մտնել ու փայլիլ բացառիկներ միայն, թէեւ քանի մը հայերու ալ վիճակուած էր այդ բախտը, իրենց տաղանդին շնորհիւ, ինչպէս Գալֆայեան քոյրերը՝ Ֆերուզ, Միրվէթ, Նելլի, ինչպէս Լուպլուպան...

Տղան գլխիկոր վերադարձաւ Հալէպ։ Գրեթէ ամէն օր ձայներիզի վրայ կը լսէր «Ծաղկած բալենի»ն ու կը յուզուէր կրկնակի յուզումով, մին երգին ազդեցութեան տակ, միւսը՝ կատարողը կորսնցնելու ցաւէն։

Շատ ժամանակ չանցաւ, քանի մը տարի ետք երգչուհին մտաւ արաբական երգաշխարհ, ապա՝ ֆիլմաշխարհ, դարձաւ աստղ, առաջնակարգ, սիրուած ու գնահատուած...

Արաբական աշխարհը չահեցաւ զինք· անոր աստղազարդ երկնակամարին վրայ փայլուն աստղ մըն ալ աւելցաւ, աստղ մը, որ կրնար մեր հայկական երկնակամարը զարդարել, ինչպէս իրմէ առաջ շատ մը եգիպտահայեր զարդարած էին հայոց երկնակամարը· ո՞ր մէկը յիշել, Գոհար Գասպարեա՞նը, Սարուխա՞նը, Աշոտ Զօրեա՞նը, Յակոբ Յակոբեա՞նը...

Այո, եթէ մնար ան, անկասկած կը դառնար մեր հպարտութիւններէն մին, սակայն...

Սակայն եւ այնպէս, ի հեճուկս բոլոր կատարումներուն, երգերուն ու դերակատարումներուն, ի հեճուկս իր բոլոր նուաճումներուն, ձեռքբերումներուն եւ յաջողութիւններուն, անոր հայերէն երգի կատարումը, խոր ապրումով, ամենաանկեղծ զգացումներով, իր արմատներէն ու բջիջներէն բխող արուեստով, մնաց անմրցելի, անհաւասարելի։

Ճերմակ բալենին հայ երգին մէջ ծաղկեցաւ, բայց պտուղը ուրիշ պարտէզի մէջ տուաւ, պտուղ մը, որուն քաղցրութիւնը այն չէ...

ՅԱԿՈԲ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ

Յուլիս, 2008



ՅՈՐՁԱՆՈՒՏ

Հազիւ մէկ տարի մնացած էր բարձրագոյնը աւարտելուն, ծնողները որոշեցին Էտկարին ուղարկել Փարիզ՝ այնտեղ շարունակելու ուսումը։ Այսպիսով նրա առջեւ բացւում էին կրթութեան ու զարգացման աւելի խոստմնալից հեռանկարներ։ Էտկարը յուսախաբ չարեց ծնողներին եւ մի քանի տարի անց փայլուն նիշերով աւարտելով տնտեսագիտական մասնագիտացաւ արդիւնաբերական ղեկավարման բնագաւառում։ Փարիզը յղկեց երիտասարդին՝ դարձնելով կիրթ, նրբաճաշակ ու գրաւիչ։ Դրան նպաստեցին նաեւ նրա առնականութիւնը, համաչափ դիմագծերը, բարձր հասակը, արեւելցու ջերմ խառնուածքը... Էտկարը յանկարծ իրեն շրջապատուած զգաց օտարազգի աղջիկներով։ Սակայն նա զգուշանում եւ խուսափում էր յարաբերութիւնների խորացումից՝ մղուած ծննդավայրում թողած իր սիրած աղջկայ՝ Անիի հանդէպ տածած սիրուց։ Այնուամենայնիւ, պարասրահներում եւ այլ հասարակ վայրերում հետզհետէ սկսուեց անցողիկ հանդիպումների նոր շրջան՝ ամուսիններից բաժանուած կամ ազատ կեանք վարող հարուստ եւ սեռական յարաբերութիւնների կենսափորձով յագեցած կանանց հետ։ Դա չէր յարուցում կապուածութիւն կամ նիւթական

«Նոյն ալեակը-I»-Նոյնի թեմայով

որեւէ յանձնառութիւն։ Սակայն դա էլ երկար չտեւեց. Էտկար մտերմացաւ իրենից տարիքով մեծ Ֆինլանտուհի Անաբելլայի հետ ու տեղափոխուեց նրա յարմարաւէտ չքեղ բնակարանը, ուր մնաց մինչեւ Փարիզից հեռանալը։ Անաբելլան օդանաւային վթարի զոհ գնացած հարուստ մի Ֆին գործարարի այրին էր, որ ամուսնու մահից յետոյ ժառանգութեան հարկային պարտաւորութիւններից խուսափելու համար հեռացել էր Ֆինլանտայից ու բնակութիւն հաստատել Փարիզում։ Նրանց առաջին հանդիպումը տեղի էր ունեցել հայոց ցեղասպանութեան ճանաչման համար պայքարող մի կազմակերպութեան կենտրոնում, որի գործունէութեանն իր ակտիւ մասնակցութիւնն էր բերում նաեւ Անաբելլան։ Դա խանդաղատանքով ու համակրանքով էր լցրել Էտկարի սիրտը՝ կանացի հմայքներն ու թարմութիւնը դեռ լիովին պահպանած այս օտար կնոջ նկատմամբ...

Տարիներ անց Էտկարը այդ կապը բացատրում էր տարբեր կանանց հետ շփուելու հետեւանքով առաջացած յոգնածութեամբ ու անբաւարարուածութեամբ, ինչպէս նաեւ Անաբելլայի անմնացորդ նուիրուածութեամբ ու կրքոտ սիրով։ Աստիճանաբար խամրում էր Անիի պատկերը նրա վտարանդի հոգում։ Իսկ կապուտաչեայ, շէկ մազերով Անաբելլան ասես ստեղծուել էր լոկ սէր խաղալու համար։ Նա այնչափ ըծախնդիր էր իր թանկարժէք գեղեցիկ հագուստների, փարիզեան նուրբ օծանելիքների ու կրքայարոյց ներքնազգեստների ընտրութեան հարցում...

Ուսման աւարտի հետ ինքնաբերաբար լրացաւ նաեւ Էտկարի ուսանողական կարգավիճակով կեցութեան ժամկէտը։ Այլեւս հնարաւոր չէր մնալ Ֆրանսիայում։ Ճիշդ է, նա այնչափ կարօտել էր ծնողներին ու հարազատներին, բայց դեռ մնում էր զինուորական ծառայութեան թնճուկը, որի պատճառով վարանում էր վերադառնալ տուն ու ձեռքից տալ եւս երկու տարի։ Իսկ չծառայելու դէպքում կորցնելու էր թէ աշխատելու եւ թէ երկրից դուրս գալու իրաւունքը։ Ի զուր անցան Անաբելլայի բոլոր ճիգերը երկարաձգելու նրա օրինական կեցութեան ժամկէտը, որի պատճառով զրկուեց նաեւ արտադրական մի ընկերութեան մէջ զբաղեցրած իր ժամանակաւոր պաշտօնից։ Ստեղծուել էր անորոշ իրավիճակ։ Էտկարը չգիտէր՝ ինչպէս վարուել։ Սակայն դիմանալով հարուստ ու շուայտ կեանքի բազում գայթակղութիւններին՝ նա կտրուկ մերժեց Անաբելլայի հետ «հէնց այնպէս» ամուսնանալու միջոցով կեցութեան իրաւունք ապահովելու առաջարկը...

Տեղեկանալով որդու դժուար կեցութեան մասին, հայրը յորդորեց նրան ճամբորդել Երեւան, յայտնելով, որ իրենք էլ պատրաստւում են մեկնել այնտեղ։ Առիթ է, կը հանդիպեն, կարօտը կ՚առնեն ու խելք-խելքի տուած կը խորհեն հետագայ անելիքների մասին։ Ինչպէ՞ս իր մտքով չէր անցել այդ ցանկալի տարբերակը... Ճիշդ այն պահին, երբ թւում էր բոլոր դռները փակ են նրա առաջ, յանկարծ պարզւում էր, որ անարգել բաց է ոչ շատ հեռու անցեալում միշտ գոց՝ մայր հայրենիքի հիւրընկալ դուռը... Նա խանդավառուած էր ու երջանիկ, թէեւ դժուարութեամբ էր համակերպւում Փարիզից հեռանալու մտքի հետ։ Ասես բնազդով զգում էր, որ էլ չի վերադառնալու այնտեղ...

Հասաւ բաժանման տխուր պահը։ Էտկար յուզուած, գրկից բաց չէր թողնում Անաբելլային, որը սակայն աւելի քան հինգ տարուայ միատեղ կեանքից յետոյ թէեւ թաց աչքերով, բայց արտաքուստ անտարբեր ու համակերպուած ճակատագրի հետ՝ բարի երթ մաղթեց Էտկարին...

*
* *

Թէ՛ Էտկարի եւ թէ հարազատների համար Երեւանում ապրած իւրաքանչիւր օր ասես տօն լինէր։ Քաղաքի կենտրոնում վարձակալած փոքրիկ բնակարանում նրանք անցկացրին ուրախութեան ու վայելքի անմոռանալի պահեր։ Այնքա՛ն պատմելու բան կար, այնքա՛ն անպատասխան մնացած հարցեր, չասուած խօսքեր, որոնք չէին դադարում մինչեւ անգամ շրջագայութիւնների ընթացքին։ Այնուամենայնիւ, նա պարզորոշ զգում էր, որ ժամանակի ընթացքում բաժանող մի անջրպետ է գոյացել հարազատների ու իր միջեւ։ Զկար անցեալի հեռուներում մնացած՝ չարաճճիութիւններով ու անհանգիստ բնաւորութեամբ անբիծ պատանին։ Նա յուսահատ փորձեր էր կատարում վերամարմնաւորելու իր նախկին էութիւնը, սակայն աւա՛ղ, ամէն բան դուրս էր գալիս բռնագրօսիկ, արհեստական... Այնչափ մակերեսային ու մշուշոտ էր հարազատների պատկերացումը Փարիզում վարած իր յախուռն կեանքի, կանանց հետ ունեցած յարաբերութիւնների ու Անաբելլայի մասին։ Դա աւելի էր խորացնում վիհը։ Նա սրտնեղութեամբ շրջանցում էր իր ապագայ ամուսնութեան առնչուող ծնողների յամառ ակնարկներն ու հարցապնդումները...

Փարիզում, ծանրաբեռնուած ու կլանուած նոր միջավայրով, Էտկարը շատ քիչ էր գրել Անիին, անպատասխան թողնելով նոյնիսկ սիրայոյզ, քնքուշ բառերով ծայրէ ի ծայր լցուած նրա վերջին նամակը։ Դրանից յետոյ, ասես փոխադարձ պայմանաւորուածութեամբ, երկուսն էլ լռին էին... Ինչո՞ւ ի զուր բորբոքել անթեղուած կրակը, երբ մի կողմից էլ Անին ուզել էր գաղթել Միացեալ Նահանգներ։ Նախատական երանգներ կային քրոջ ձայնի մէջ, երբ պատմում էր այն մասին, որ մինչեւ քաղաքական ապաստանեալի կարգավիճակով Ամերիկա գնալը, Անին աւելի քան մէկ տարի բնակուել էր Աւստրիայում, սակայն վիրաւորուած ինքնասիրութիւնը թոյլ չէր տուել կապուել Էտկարի հետ։ Մի կողմից էլ անօգուտ էր համարել նոր հանդիպումը՝ պատճառաբանելով «ճամբաների բաժանումը»։ Զմեղադրելով Էտկարին, նա առմիշտ «քար էր դրել իրենց անյոյս սիրոյ վրայ»՝ վերջին անգամ գրելով քրոջը Վիեննայից։

Էտկարը մնաց Երեւանում։ Գնեց ու կահաւորեց մի նորակառոյց բնակարան։ Զեռք բերեց նաեւ Հայաստանի Հանրապետութեան յատուկ կարգավիճակով կեցութեան անձնագիր։ Ուրախութիւնից երեխայի պէս ձեռքում շուռումուռ էր տալիս մուգ կապտագոյն ոսկետառ անձնագիրը, թերթում էր էջերը, կարդում գրութիւններն ու զննում կնիքը... Շատ արագ համակերպուեց ոչ իր կամքով առաջ եկած նոր իրադրութեան հետ։ Զէր տրտնջում կեանքը նրան սովորեցրել էր լինել համբերատար, ժուժկալ ու հեռատես։ Իսկ կենցաղային պայմաններով, նորագոյն շքեղ խանութներով, ռեստորաններով ու գիշերային զուարճավայրերով Երեւանը մի փոքրիկ Փարիզ էր։

Անաբելլան երբեմն կապւում էր նրա հետ հեռախօսով կամ էլեկտրոնային նամակով, սակայն հետզհետէ նուազում էր դրանց յաճախականութիւնը... Մի օր էլ ուղարկեց Էտկարի գրքերն ու այնտեղ մնացած մի քանի անձնական իրեր։ Դրանից յետոյ կապը ջրի պէս բարակեց ու կտրուեց... Պարզ էր, որ դիւրափոփոխ եւրոպացի կինը յանուն հեռաւոր ու վերացական դարձած սիրոյ, իրեն չէր զոհաբերի՝ հրաժարուելով առօրեայ հաճոյքներից, ու կը փնտռէր նոր կապեր...

Էտկարը զուր չվատնեց ժամանակը։ Տարեց հարեւանուհին թոշակի անցած մանկավարժ դուրս եկաւ, հայոց լեզուի հմուտ գիտակ։ Ծանօթ էր նաեւ Ֆրանսերէն լեզուին։ Էտկարի խնդրանքով նա սկսեց իր հետ հայոց լեզու պարապել ու դասերին զուգընթաց ծանօթացնել նաեւ երկրի հարկային ու վարչական օրէնքներին։

Չէր անցել մէկ ամիս, երբ տնօրէնի տեղակալի պաշտօնով ու բաւարար ռոճիկով աշխատանքի անցաւ արդիւնաբերական մի խոշոր ձեռնարկութեան մէջ։ Նա, շնորհիւ իր հաղորդական բնաւորութեան ու վարչական կարողութեան արդի մեթոտների կիրառման, արագօրէն շահեց ընդհանուրի համակրանքը։ Նա ցանկալի հիւր դարձաւ իր գործակիցների տներում, ուր առիթը բաց չէր թողնում ուսումնասիրելու եւ իւրացնելու երեւանցիներին բնորոշ յատկանիշները, խօսելաձեւը, տիրող սովորոյթները, ընտանեկան աւանդոյթները, կնոջ ու տղամարդու յարաբերութիւնների ոլորտը։ Երեւանն, անտարակոյս, այս առումով Փարիզ չէր, սակայն անհամեմատ մօտ էր իր սրտին ու հոգուն, թէեւ զարմանքով էր ընկալում այն մեծ տարբերութիւնը, որն ակնյայտօրէն առկայ էր տեղացիների ու սփիւռքահայերի միջեւ...

Աղօտանում էր նաեւ Անաբելլայի կերպարը։ Դա չէր վշտացնում Էտկարին։ Չէր զգում նաեւ ափսոսանք։ Հասկանում էր, որ սէրը չէր եղել նրանց անվաւեր կապի գլխաւոր առանցքը։ Եւ որքան էլ զարմանալի թուար, հարազատների մեկնելուց յետոյ, նրա մտապատկերում անվերջ յառնում էր Անին՝ աղջկական իր ողջ հրապոյրներով... Ցիշում էր նրա հետ անցկացրած անմոռանալի հանդիպումները, անմեղ գրկախառնումները, առաջին համբոյրի քաղցրութիւնը, որի նմանը երբեք չէր ըմբոշխնել Փարիզում...

Մենութեան ու տուայտանքի պահերին նրա հոգում ծնւում էր սիրելու ու սիրուե-

«Նրա պատկերը-Անան Թանդեան»

լու բուռն պահանջ։ Սակայն ցաւով էր զգում, որ չի գրաււում աղջիկներով։ Ամէն անգամ սրճարանից կամ որեւէ հաճոյքի վայրից հերթական աղջկան տուն ուղեկցելուց յետոյ, նա՝ ոչ այն է հիասթափուած, ոչ այն է բաւարարուած, թթուած ու յուսահատ, մենակ ու գլխիկոր վերադառնում էր իր թափուր բնակարանը՝ վերստին դեգերելու հին յուշերի անդաստանում... Ճակատագրի խաղերի բերումով, ասես ծերացել էր ժամանակից շուտ։ Նրան աւելի շատ ճգտում էին տարեց ու կեանքի համը ճաշակած կանայք... Եւ ինքն էլ չհասկացաւ, թէ ոնց սիրահարուեց գործատեղիի քարտուղարուհիներից մէկին՝ երեսունիննամեայ Զառային...

Զարմանալին այն էր, որ առաջին ծանօթութեան ժամանակ Զառան վանող տպաւորութիւն էր թողել Էտկարի վրայ։ Նրա ճուաճեւ դէմքը՝ դուրս ցցուած այտոսկրներով, աղեղաձեւ յօնքերով ու մեծ քթով, ինչ որ անսովոր էր։ Գեղեցիկ էին աչքերն ու կզակը։ Չէր շպարւում, բայց օժտուած էր կանացի բնական ձգող գրաւչութեամբ։ Բալագոյն շրթների վրայ յարատեւօրէն գծագրուած էր թովիչ կիսաժպիտ, որի շնորհիւ երկու հմայիչ կոր գծիկներ էին գոյանում բերանի անկիւններում։ Քչախօս էր, առեղծուածային։ Դիմացի անձերին նայելիս սովորութիւն ունէր գլուխը թեքել մի կողմ՝ ի ցոյց դնելով սլացիկ, հարթ մաշկով ճերմակ պարանոցը։ Իսկ բարձրակրունկ կօշիկներով շորորուն քայլուածքը գրաւում էր մինչեւ իսկ անտարբեր մարդկանց... Առաջին հայեացքից նա թողնում էր դիւրամատչելի կնոջ տպաւորութիւն, սակայն միշտ էլ պատշաճ հեռաւորութեան վրայ էր պահում իր շուրջը պտտուող երկրպագուներին։ Նման ճակատագրի արժանացաւ նաեւ Էտկարն իր սիրահետումների ժամանակ...

*

* *

Զառան ամուսնացել էր շատ վաղ տարիքում։ Ամուսինը, հազիւ մէկ տարուայ միատեղ կեանքից յետոյ, լքել էր նրան յղի վիճակում ու մեկնել Ռուսաստան։ Ծնուել էր աղջիկը, մօր գուրգուրանքի ու հպարտութեան առարկան՝ Սոնան, որն արդէն տասնութ տարեկան էր՝ սլացիկ հասակով ու անթերի կազմուածքով տիպիկ գեղեցկուհի։ Տղամարդկանց հանդէպ հակակրանքով լցուած Զառան չէր խուսափել յանուն նիւթական բարօրութեան կրկին փորձել բախտը մի քանի յամառ երկրպագուների հետ, սակայն որոշ ժամանակից յետոյ կամ ինքն էր ընդմիշտ վռնտել նրանց իր կեանքից, կամ իրենք էին թողել ու հեռացել՝ նրա սրտում աւելի բորբոքելով տղամարդկանց նկատմամբ ատելութեան կրակը...

Աւելի ուշ, գտնելով կայուն աշխատանք ու եկամուտ, նա դարձել էր ինքնավստահ՝ այլեւս կախում չունենալով ուրիշներից։ Դրան նպաստում էր նաեւ քաղաքի կենտրոնում հօր մահից յետոյ ժառանգաբար իրեն փոխանցուած երեք սենեականոց բնակարանին տէր լինելու գիտակցութիւնը։

Եւ ահա, երբ թւում է հաշտուել էր ճակատագրի հետ ու մինչեւ կոկորդը կուշտ էր նոր ծանօթութիւններից ու սիրավէպերից, յանկարծ նրա հորիզոնում յայտնւում էր իրենից տարիքով փոքր, Փարիզից եկած բարձր պաշտօնով հմայիչ մի երիտասարդ, որի համար խենթանում էին գործընկերուհիներից շատերը... Գայթակղութիւնը մեծ էր, սակայն անհեռանկարային։ Նա միանգամայն բացառում էր ամուսնանալու տարբերակն ու համոզուած էր, որ ուշ թէ շուտ Էտկարն էլ, միւս բոլոր տղամարդկանց նման, կը լքի իրեն ու կ՚անհետանայ։ Իսկ դստեր ներկայութիւնը նրան այնպէս էլ հեռու էր պահում սեռական արկածախնդրութիւններից...

Հիմնականում, Զառան աւելի շահագրգռուած էր Սոնայի, քան իր կեանքով։

Շնորհիւ նրա անդուլ ջանքերի՝ Սոնան արդէն երաժշտանոցի ուսանողուհի էր, սովորել էր օտար լեզուներ, յաճախել էր պարի դասերի, հետեւել էր համակարգչային տարբեր դասընթացքների։ Սակայն Զառային մտահոգում էր աղջկայ աճող հետաքրքրութիւնը հակառակ սեռի նկատմամբ։ Փաստօրէն յաճախակի էին դարձել ուսանող ընկերների հետ նրա առանձին հանդիպումները։ Զրկուած լինելով հօրից, յամենայնդէպս նա միշտ էլ առիթ ունեցել էր շփուելու իրենց բնակարանը այցելող «քեռիների» հետ։ Բոլորը սիրում էին քաղցրիկ ու ծիծաղկոտ փոքրիկ աղջկան, նուէրներ էին բերում, գրկում, փաղաքշում, գուրգուրում էին նրան։

Մի օր, ուշ գիշերին արթնանալով, դեռ եօթ տարին չլրացրած Սոնան պատահաբար տեսել էր կիսամերկ մօրը՝ գահաւորակի վրայ մի քեռու հետ համբուրուելիս... Նրա մտապատկերում դրոշմուած էր մնացել մօր սպիտակ ազդրերի վրայ վեր ու վար սահող քեռու սարդանման մազմզոտ ձեռքը, որ բարձրանալով կորել էր վեր քչտած փէշի տակ... Հաւանաբար նա երկար էր դիտել այդ տեսարանը, որովհետեւ դրանից յետոյ օրեր շարունակ դարձել էր ինքնամփոփ, լռակեաց ու առաջին անգամ լրջօրէն հետաքրքրուել էր հօր մասին՝ դժուար կացութեան մէջ դնելով Զառային... Մեծ ճիգեր պահանջուեց վերականգնելու երեխայի հոգեկան խախտուած անդորրը։ Այդ օրուանից Զառան երդուեց իր կապերը խզել դժբախտութեան աղբիւր հանդիսացող բոլոր տղամարդկանց հետ... Երիտասարդ, լքուած կնոջ համար, դա, ի հարկէ, հեշտ չէր, բայց այնքան մեծ էր նրա սէրը աղջկայ նկատմամբ, որ պատրաստ էր գնալու աւելի զոհաբերութիւնների։

Թէեւ ներկայ պահին նա կարող էր Սոնայի հետ ազատօրէն խօսել մտերմիկ հարցերի շուրջ, բայց նախընտրում էր չբացել վարագոյրը, որը սակայն վայր իջաւ մի օր, երբ այլեւս չկարողանալով զսպել իրեն՝ պատմեց Էտկարի մասին։ Հակառակ սպասածի, Սոնան հանգիստ ու անտարբեր ընդունեց այդ լուրը։ Նա նոյնիսկ քաջալերեց մօրը՝ ձեռքից բաց չթողնել ստեղծուած պատեհութիւնը։ Ինքը շուտով ընկերուհիների հետ երկու շաբաթով մեկնելու է Սոչի, մայրը միանակ չի մնայ... Զառան ուղղակի շշմել էր... թւում էր, չի ճանաչում աղջկան. նա այնքան հանգիստ էր խօսում երկսեռ յարաբերութիւնների մասին, որ ասես կեանքի փորձ ունեցող կին լինէր... Այդ օրուանից մայր ու աղջիկ յաճախ էին մտերմիկ զրոյցներ ունենում նման թեմաներով։ Զառան ճգնում էր Սոնային իրազեկ դարձնել տղամարդկանց անհաւատարիմ ու յեղյեղուկ բնոյթի մասին՝ օրինակ բերելով հօր տմարդի վարմունքը... Սակայն անօգուտ... Նոր ժամանակների ազատամտութիւնը իր բոյնն էր դրել աղջկայ հոգում անդառնալիօրէն... Ինչեւէ, հակառակ Սոնայի ամէնօրեայ յորդորներին, Զառան անդրդրուելիօրէն հաւատարիմ մնալով իր երդմանը, անառիկ բերդի պէս դիմակայում էր Փարիզից ժամանած գրաւիչ երիտասարդի գրոհներին ու գայթակղութեանը...

Անցաւ եւս մէկ ամիս։ Էտկարի բոլոր ջանքերը՝ Զառայի սիրտը նուաճելու համար, անցնում էին ապարդիւն... Դա աւելի էր բորբոքում նրա անսահման սէրն ու տենչանքը այդ, իրօք, առեղծուածային ու ոչ սովորական կնոջ նկատմամբ։ Փարիզում երբեւէ պարտութիւն չկրած յաջողակ արուն մատնուել էր խուճապի... Զառայի կտրուկ մերժումները երբեմն նրան հանում էին հաւասարակշռութիւնից, սակայն միշտ էլ վերջին պահին կարողանում էր ճիգով տիրապետել իրեն։ Երբեք չէր դիմում մեքենայութիւնների կամ ճնշման։ Փորձով գիտէր, որ դրանք ոչ միայն չեն ներգործում ընդդիմացող կնոջ վրայ, այլեւ արծարծում են հակառակ զգացումներ՝ փճացնելով ամէն բան։ Զառային որեւէ աշխատանք յանձնարարելիս կամ պահանջելիս ծայր աստիճան քաղաքավարի էր, մեղմաբարոյ ու համբերատար՝ նրա դիւթիչ հայ-

«Նուռ պատմաքը-III»-Նուռ Թումանյան

եացքի մէջ որսալով փոխադարձ սիրոյ ու երախտագիտութեան կայծեր, որոնք այն ամէնն էին, ինչ Զառան տալիս էր իրեն... Ճիշդ է, ծանօթութեան վաղ շրջանում նա թոյլ էր տուել Էտկարին մի քանի անգամ տուն ուղեկցել իրեն ու մի երեկոյ մինչեւ իսկ ընթրել էին միասին քաղաքի լաւագոյն ճաշարաններից մէկում, բայց երբ Էտկարը բացայայտել էր իր զգացումները, նա կծկուել էր փշոտ ոզնու պէս ու խուսափել նրանից։ Նման կտրուկ շրջադարձը Էտկարը բացատրում էր միայն իրենց տարիքային տարբերութեամբ ու այն փաստով, որ երեւանցի ամուսնաթող կանանց հոգեբանութիւնը հեռու է հաճոյքն ու կեանքի վայելքները ամէն բանից վեր դասող եւրոպացի կանանց անասնական բարքերից։ Նրա կարծիքով խանգարիչ երեւոյթ էր հանդիսանում նաեւ ազգային աւանդութիւնների կաշկանդող տաբուն...

Այնուամենայնիւ, Էտկարը չէր վհատւում։ Հաւատալով ճակատագրի խաղերին՝ նա սպասում էր յոյսով ու լաւատեսութեամբ։ Միայն ուժեղներն ու կատարեալները չեն գնում իրենց կամքին հակառակ։ Սովորական մարդիկ այլընտրանք չունեն, նրանք ջրի մէջ ընկած տաշեղի պէս քշւում են կեանքի հոսանքների հետ՝ այս ու այն կողմ... Ինքը չի պատկանում ուժեղների թուին, ահաւասիկ բախտը նրան էլ բերել ու նետել է այստեղ, ապուպապերի հինաւուրց երկիրը։ Ինքը երազել էր դառնալ կինոդերասան՝ դարձաւ մէնէջմընտ։

Ցանկանում էր ամուսնանալ Անիի հետ՝ ինչ դուրս եկաւ... Ուրեմն, պէտք է սպասել, նա համոզուած էր, որ Զառան երկար չի դիմադրի... Նրանց իրար դէմ բերած ճակատագիրը մի գեղեցիկ օր կը միացնի իրենց...

*
* *

Վերջին օրերին Զառան անտրամադիր էր ու ջղային։ Անհետացել էր ժպիտը։ Մէկ ամիս առաջ, երբ Սոնան մեկնել էր Սոչի, նա դարձեալ մտահոգ էր, բայց ոչ այսքան։ Էտկարի կարծիքով տեղի է ունեցել ինչ որ կարեւոր իրադարձութիւն, որը հիմնովին տակնուվրայ էր արել նրա կեանքի անդորրը... Օգնելու բարի ցանկութեամբ նա յարմար առիթ գտնելով՝ հետաքրքրուեց այդ մասին, սակայն Զառան աչքերը խոնարհելով նախընտրեց լռել... Իսկ շաբթուայ վերջին, երբ ըստ սովորականի միայն Էտկարն էր մնացել հիմնարկում՝ խորասոզուած համակարգչի մէջ, յանկարծ կիսաժպիտը դէմքին՝ երկչոտ ներս մտաւ Զառան ու կարճ զրոյցից յետոյ նրան հրաւիրեց իրենց տուն՝ ընթրիքի... Վաղուց էր ուզում դա անել, չէր ստացւում, Սոնան էլ շատ կ'ուրախանայ եւայլն, եւայլն... Էտկարը ցնծում էր. ճակատագիրն այս անգամ էլ բարի էր գտնուել իր հանդէպ, սակայն բնազդը յուշում էր, որ ինչ-որ տեղ, ինչ-որ բան այն չէ. Գուցէ Զառայի նկատառումները տարաբնոյթ էին, գուցէ ճարահատուած էր դիմել իրեն, առաջ եկած խնդիրը լուծելու միտումով... Ինքը պատրաստ է, չի զլանայ ամէն կերպ օժանդակել նրան, որով վերջապէս կը գրաւի նրա սիրտը...

Ընթրեցին երեքով։ Այստեղ ամէն, ամէն բան հաճելի էր ու առինքնող՝ սկսած բնակարանի պարզ ու ճաշակաւոր կահաւորումներից ու վերջացած անուշահամ խորտիկներով ու խմիչքով։ Էտկարը անսքող հիացմունքով էր դիտում արտիստիկ գեղեցկութեամբ օժտուած Սոնային ու զարմանում տարբեր նիւթերի մասին նրա դրսեւորած ուրոյն մօտեցումների ու խելացի արտայայտութիւնների վրայ։ Կարճ փէշը, լայնաբաց պլուզն ու ճերմակ՝ մերկ ուսերին թափուած հարթ մազերը լիովին համապատասխանում էին նրա անկաշկանդ ու համարձակ վարուելակերպին։ Մայրը, ինչպէս միշտ, քչախօս էր ու աւելի շատ՝ ունկնդրողի դերում։ Էտկարը հետագային էլ յիշում էր, որ ամբողջ երեկոյի ընթացքին Զառային չէր լքում վերջին օրերի անտրամադրութիւնը, տագնապալի հայեացքն ու տխրութիւնը, որոնք ջանում էր ծածկել շինծու ուրախութեամբ... Էտկարը փորձեց խօսք բացել այդ մասին, բայց նա վարպետօրէն փոխեց խօսակցութեան թեման...

Նրանք մինչեւ ուշ գիշեր զրուցեցին զանազան հարցերի շուրջ։ Պատճառաբանելով յոգնածութիւնը՝ Սոնան գնաց քնելու։ Էտկարի գլուխը պտըտւում էր, չգիտես խմիչքի՝ թէ՞ օրուայ տպաւորութիւններից։ Միտքը զգօն էր, բայց աչքերը փակւում էին... Այսպիսի բան իր հետ երբեք չէր պատահել։ Մտքում մեղադրում էր իրեն շատ խմելու համար, գոնէ այս գիշեր զուսպ լինէր... Չէ՞ որ Զառան այնքա՜ն մօտիկ էր, հնազանդ... Էտկարն ամբողջ սրտով ուզում էր մօտենալ, գրկել նրան, բայց ամէն անգամ Զառան ընդդիմանում էր անխօս ցոյց տալով Սոնայի սենեակի դուռը ու խնդրում չշտապել...

Ուշ էր։ Մի կերպ վեր կացաւ ու պատրաստուեց տուն գնալու։ Ենթագիտակցօրէն զգում էր, որ իր մնալն աւելորդ է, ո՛չ, նա իրեն չի սիրում... Սակայն Զառան կրկին անակնկալ մատուցեց. չի կարելի խմիչք գործածած մեքենայ վարել՝ կը տուգանեն, վաղն էլ հանգստեան օր է, ի՞նչ կայ որ... Նա կարող է գիշերել իրենց տանը։ Էտկարը քաշւում էր, շնորհակալութիւն յայտնեց ու նորից փորձ արեց հեռանալու, սակայն Զառան մօտեցաւ ու շոյեց նրա վառուող այտերն ու ձեռքը քնքշօրէն բռնելով՝

առաջնորդեց ամուսնական զոյգ մահճակալով ննջասենեակը, մայրական հոգատարութեամբ օգնեց հանուելու, պառկեցրեց ու ցուցամատը շրթներին դրած՝ անշշուկ հեռացաւ սենեակից...

Չէր յիշում որքան էր անցել, քնա՞ծ էր, թէ արթուն... Նա աչքերը կկոցեց ներս խուժած լոյսից, որի շնորհիւ բացուած դրան շրջանակի մէջ՝ թափանցիկ գիշերազգեստի տակից մի ակնթարթ՝ նշմարուեց իր անուրջների կնոջ մարմնի ուրուանկարը՝ հերարձակ, գերող... Յետոյ դուռը զգոյշ փակուեց ու մթութեան մէջ թաթերի վրայ յուշիկ քայլերով մէկը մօտեցաւ անկողնուն... Էտկարը ասես երազի մէջ լսեց վար սահող գիշերագգեստի շրշիւնն ու զգաց կանացի մերկ մարմնի ջերմ ու խենթացնող հպում... Ապա ընկնելով երանութեան ու ինքնամոռացութեան մէջ, այնուամենայնիւ, նրա մշուշոտ գլխում մի պահ ճառագայթեց ու մնաց այն միտքը, որ ստինքների պրկութեամբ, որովայնի ձգուածութեամբ ու հարթ մաշկով Զառան միանգամայն տարբերւում էր Անաբելլայից... Դա ինչ որ յարիր չէր նրա տարիքին...

...Առաւօտեան արթնացաւ անցնող ինքնաշարժի անժամանակ շչակի ձայնից։ Գլուխը ծանր էր։ Սենեակի անծանօթ առարկաները նրան յուշեցին իր ուր լինելու մասին։ Յորդեց խանդավառութեան մի հզօր ալիք ու ողողեց նրա ողջ էութիւնը։ Նա ժպտաց յաղթական, ինքնագոհ... Նոյնիսկ Փարիզում երբեք չէր զգացել այդպիսի վայելք... Ռունգերի մէջ դեռ զգում էր կանացի նուրբ օծանելիքի անոյշ բոյրը, որը յաւերժ դաջուեց նրա յիշողութեան մէջ... Զգոյշ վրայից դէն նետեց վերմակը, նստեց անկողնու եզրին ու շրջուելով՝ սիրատենչ հայեացք նետեց Զառայի կողմը։ Բայց յանկարծ խայթուածի պէս վեր թռաւ տեղից ու կորցնելով շարժուելու ունակութիւնը՝ շանթահարուած քարացաւ տեղում...Անկողնու մէջ՝ մետաքսեայ մագերի խուրձը անխնամ բարձի վրայ տարածուած, մուշ-մուշ քնած էր Սոնան...

Զառան չկար։ Հիւրասենեակի սեղանի վրայ թողած երկտողով նա յայտնում էր, որ գնացել է Դիլիջան՝ հիւանդ մօրաքրոջը տեսութեան...

*

* *

Ինչպէս երկնաքեր շէնքն է փլւում դղրդոցով ու փոշին ցրուելուց յետոյ շէնքի տեղում բաց տարածութիւնն է իշխում՝ փոխելով շրջապատի բնապատկերը, այնպէս էլ Էտկարի սրտում միանգամից փլուզուեց Զառայի սիրոյ ապարանքը՝ տեղի տալով թախծալի ունայնութեան։ Սակայն առաջացած դատարկութիւնից այն կողմ, նրա աչքերի առջեւ անդադար ուրուագծւում էր մի նոր բնապատկեր՝ Սոնայի երկիւղած, խոշոր աչքերի տեսքով... Ոչ մի կերպ չէր յաջողւում մտահան անել նրա սիրատոչոր ու աղերսալից հայեացքն այն պահին, երբ ինքը՝ Զառայի երկտողը ձեռքին ետ վազելով ննջասենեակ ու կոպտօրէն արթնացնելով նրան՝ սկսել էր կատաղած բղաւել՝ բացատրութիւն պահանջելով կատարուածի մասին... Ներբակիրթ Փարիզի բովով անցած ու յղկուած Էտկարից նշոյլ անգամ չէր մնացել... Նրա մէջ գլուխ էր բարձրացրել խաբուած տղամարդու մոլուցքը... Սոնան բացուխուփ էր արել շրթները, ուզել էր ինչ-որ բան ասել, սակայն ինքը եղել էր այնքան մոլեգնած, որ արագօրէն հագնուելով ու շարունակելով անիմաստ հարցապնդումները, աղջկայ կշտամբալից հայեացքի տակ դուռը ամուր շրխկացրել էր ու դուրս նետուել բնակարանից...

Անկարելի էր Զառան տեղեակ չլինէր կատարուածին։ Բացառւում էր նաեւ Էտկարին տիրանալու ցանկութիւնից դրդուած Սոնայի անգիտակից արարքը... Ո՛չ, կասկած չկար, դէպքերի յաջորդականութիւնը խօսում էր այս ամէնի կանխամտածուած ու ծրագրուած լինելու անժխտելի փաստի մասին։ Բայց ինչո՞ւ, ի՞նչ էին հե-

«Նոյեան պատմութիւն-IV»-Նոյեան Թուղթերեն

տապնդում մայր ու աղջիկ... Նա ոչ մի կերպ չէր կարողանում գտնել իրականութեան համապատասխանող համոզիչ ու խելամիտ գէթ մի տարբերակ։

Յաջորդ օրերն անցան առանց միջադէպի։ Կեանքն ընթանում էր սովորական հունով, սակայն նրան պաշարել էին իրարամերժ մտքերն ու անձկալից ապրումները։ Չէր ներում իրեն խմիչքը չարաշահելու ու գռեհիկ արարքի համար։ Իսկ առեղծուածը դեռ մնում էր չլուծուած... Մենակ էր, չկար մէկը սիրտը բացէր, քննարկէր տարօրինակ պատահարը, որի մանրամասները մէկիկ-մէկիկ վերապրում էր տասնեակ անգամներ՝ աւելի շատ զգալով... երանութիւն ու քմայք, քան նողկանք ու ցասում... Զառան առերես զուսպ, բայց ներքուստ սպասում էր հակահարուածի, որի ուշացումը ակներեւաբար մտահոգում էր նրան... Իրականում ներքին մի ձայն յուշում էր Էտկարին՝ առաջ չընկնել, համբերել ու սպասել։ Այնքան միամիտ չէր՝ որ հաւատար, որ նախապէս մշակուած սցենարը կ'աւարտի միայն մէկ արարով...

Իսկ յաջորդը իրօք, շատ չուշացաւ...

Չէր անցել երեք շաբաթ, երբ մի օր Զառան հերթական գործը յանձնելիս ասաց, որ ցանկանում է առանձին զրուցել։ Էտկարը անմիջապէս համաձայնուեց։ Ժամադրուեցին հանդիպել երեկոյեան, ծանօթ սրճարանում։ Եւ ահա երկուսն էլ լարուած ու մտախոհ նստած էին դէմ-դիմաց։ Էտկարը տարակուսում էր, թէ ոնց սիրել է այս

կնոջ այնքան զօրեղ, այնքան նուիրուածօրէն։ Երեւի Զառայի մէջ ինք փնտռել է Անարելլային։ Իսկ գուցէ դա եղել է պարզապէս անցողակի կրքի զգացո՛ւմ, տարփա՛նք... Գուցէ պաշտամունքի հասնող իր հայրենասիրութեան մի պատառիկ էր արտացոլուած տեսել նրա մէջ, չէ՞ որ երկար տարիներից յետոյ Զառան եղել էր առաջին հայ կինը, որ տեղ էր գրաւել իր օտարացած ներաշխարհում...

Իսկ Զառան հարցը դրեց կտրուկ, առանց դէսուդէն ընկնելու։ Ինք տարիքով մեծ է Էտկարից, նրանց սիրային կապը, անկասկած, չէր յանգի ամուսնութեան։ Դա կը լինէր լոկ մարմնական հաճոյք, որը ժամանակի հետ կը կորցնէր իր համն ու բոյրը։ Նա չէր կարող նայել նրա ծնողների աչքերին։ Երկուսն էլ գուր տեղ կը տառապէին։ Իսկ ինչո՞ւ է դերերի այս փոփոխութիւնը։ Միթէ՞ նա չէր զգացել, որ Սոնան սիրում էր իրեն։ Ինք չէր կարողացել հակառակ գնալ աղջկայ բուռն ցանկութեանը... Ինչո՞ւ էր կոպտել նրան... Ինք միշտ էլ Էտկարին համարել է նրբակիրթ ու զարգացած անձնաւորութիւն եւ եթէ ուրիշը լինէր իր փոխարէն, թոյլ չէր տայ, կ՚ընդդիմանար ամէն գնով... Ինչո՞ւ չի փորձում մտերմանալ Սոնայի հետ, աւելի մօտիկից չփուել։ Նրանք հիանալի զոյգի տպաւորութիւն են թողնում...

Էտկարը չչմել էր այսքան պարզ ու հասարա՞կ... Չգիտէր ինչ ասել։ Գլխում խառնաշփոթ էր... Զառան լռեց ու գլուխը կախ գցեց։ Խօսակցութիւնը թւում էր սպառուած։ Էտկարը աչքերով փնտռում էր մատուցողին։ Նրան տիրել էր... հեռանալու անյագ ցանկութիւն, երբ յանկարծ լսեց.

- Սոնան երեխայ է սպասում քեզանից...

*

* *

Պահանջուեց մի քանի րոպէ, որպէսզի լուրը իր ողջ ծաւալով տեղաւորուի նրա ուղեղում։ Այ թէ որտեղ էր թաղուած շան գլուխը... Միտքը պայծառացաւ ու... դառը ժպտաց։ զաւեշտական էր թւում այն հանգամանքը, որ այդ մասին աղջկայ փոխարէն լսում էր մօրից... Կեանքն ու գիտելիքները նրան սովորեցրել էին դժուարութեան դէպքում չկորցնել հոգու արիութիւնն ու սառնասրտօրէն ծանր ու թեթեւ անել բոլոր հնարաւոր տարբերակները։ Սակայն դեռ փոքր տարիքից նա ընդվզել էր անազնուութեան ու կեղծիքի դէմ, եւ այժմ էլ որոգայթի մէջ ընկնելու գիտակցութիւնը նրան վերստին հունից հանեց... Ի՞նչ է, աւելի քաղաքակիրթ միջոց չգտա՞ն... Ի՞նչ կարիք կար թաքուն ինտրիգների... Իրեն յիմարի տեղ են դրել, հա՞... Եթէ կարծում են սրանով ծնկի կը բերեն, չարաչար սխալւում են... Իսկ միթէ՞ այդքան հեշտ է խաղալ դստեր ճակատագրի հետ... Եթէ իրենք անփոյթ են գտնուել, ապա ինք ոչ մի պարտաւորութիւն չի զգում, մայր ու աղջիկ կարող են գնալ գրողի ծոցը...

Էտկարը ձայնը այնքան էր բարձրացրել, որ հարեւան սեղաններից զարմացած նայում էին նրանց։ Զառան ընկճուած վեր կացաւ ու գլուխը կախ, առանց մի բառ ասելու հեռացաւ...

Տուն վերադառնալու ցանկութիւն չունէր։ Նա սկսեց մեքենան աննպատակ վարել Երեւանի փողոցներում...

... Փարիզում խաղի կանոնները այլ էին։ Ազատ յարաբերութիւնների հոլովոյթում տղամարդիկ հագուադէպ էին ներգրաււում հետեւանքների մէջ։ Մի օր Անարելլայի արդուզարդի սեղանի վրայ նկատել էր յղութեան ստուգման դրական արդիւնքի վկայագիրը։ «Դա իմ հարցն է»,- ասել էր նա, երբ Էտկարը ուզել էր իմանալ եղելութիւնը։ Ճիշդ է, հետագային պարզուել էր, որ թիւրիմացութիւն է տեղի ունեցել, եւ երկուսն էլ ազատ չունչ էին քաշել, բայց ինք համոզուած էր, ինչ էլ պատա-

«Նրան պատրաստեր-V»-Նատա Թեոդոսեան

հէը, Անաբելլան իր վրայ կը վերցնէր խնդրի լրիւ պատասխանատուութիւնը։

Զառան էլ ուղղակիօրէն ոչինչ չպահանջեց նրանից, բայց առանձին խօսակցութեան հանգամանքը, ամուսնութեան մասին արուած ակնարկներն ու տղամարդու մէջ տարբեր ընկալումներ առաջացնող տուեալ լուրի անակնկալ արծարծումը, հիմնականում վկայում էին Էտկարի վզին բարոյական պարտաւորութիւններ դնելու նրա յետին միտումի մասին... Զէ, այս խմորը շատ ջուր կը վերցնի... Զուր չէր «քեզանից»ը շեշտելը, չէ՞ որ նա կարող էր պարզապէս ասել. «Սոնան երեխայի է սպասում», բայց առանց «քեզանից»ի... Միթէ՞ նա այդքան համոզուած էր...

Սակայն Էտկարին աւելի շատ մտատանջում էին իր կրկնուող բռնկումները։ Ինչո՞ւ չի կարողանում տիրապետել իրեն։ Գուցէ դա լեռնային կլիմայի ազդեցութի՞ւնն է, գուցէ տարւում է իշխող սովորոյթներո՞վ, վերադառնում է... իր արմատների՞ն։ Գեռ չէր մոռացել Սոնայի հայեացքը, հիմա էլ ամէն վայրկեան Զառան էր աչքի առջեւ՝ ընկճուած ու տխուր... Եթէ մինչեւ այժմ նրա միտքը զբաղուած էր առեղծուածի լուծմամբ, ապա աստիճանաբար նրա սառը գիտակցութեան մէջ ձեւաւորւում ու ամրապնդւում էր նաեւ հայր դառնալու գաղափարը...

Գոնէ այսքան մինակ չլինէր։ Ուսանողական տարիներին շրջապատուած էր ընկերներով։ Յետոյ կար Անաբելլան, որի հետ կիսում էր իր հոգսերն ու ուրախութիւն-

ները։ Իսկ Երեւանում, բացի հարեւանուհուց, ուրիշ մտերիմ մէկը չունէր։ Չէր յաջողւում զարգացնել գործընկերների հետ ունեցած իր յարաբերութիւնները, որոնք այնպէս էլ մնում էին հրաւէրների ու կերուխումների սահմանում։ Սփիւռքահայ լինելը կամ բարձր պաշտօն ունենալու հանգամանքը չինական պատի պէս նրան բաժանում էին բոլորից։ Հարեւանուհին մի օր հանգստացրել էր՝ ասելով, որ ի զուր էր մտահոգւում, Աստծով կ՚ամուսնանայ, երեխաներ կ՚ունենայ ու կը մերուի շրջապատի հետ...

Հիմա էլ պէտք չէ վհատուել, ճիշդ է, մենակ է ու դեռեւս խորթ՝ այս երկրում, բայց թուլամորթներից էլ չէ՝ ունի ներուժ ու լաւատեսութիւն։ Այս անգամ չի սպասի, նախայարձակ լինելով, առանց կողմնակի խորհուրդների էլ, կը դառնայ դրութեան տէրն ու անմիջականօրէն կը պարզի իր փոխյարաբերութիւնները մօր ու աղջկայ հետ...

Տարուած մտքերով՝ նա մօտեցաւ ծանօթ փողոցին ու կանգնեցրեց մեքենան... Զառան արդէն տանը կը լինէր... Բարձրացաւ աստիճաններով ու կանգնեց դրան առջեւ... Իտկարը միայն մի ակնթարթ կորցրեց հոգու արիութիւնը, երբ մատը դրեց զանգի կոճակին, բայց արագ վերագտաւ իրեն։ Դուռը բացեց Սոնան ու նրան տեսնելով երկիւղած յետ-յետ գնաց... Առանց շպարի ու անփոյթ հագնուած, չռուած աչքերով հիպնոսացուածի պէս նայում էր դէմը կանգնած տղամարդուն... Այդ վայրկեանին նա այնքան անմեղ էր, այնքան անօգնական, այնքան կանացի ու գրաւիչ, որ Իտկարը ինքն էլ չհասկացաւ, թէ ինչպէս մօտեցաւ նրան, անխօս գրկեց ու սեղմեց կրծքին... Սոնան չընդդիմացաւ, նա դողում էր ողջ մարմնով... ու սրտի արագ տրոփիւնը արձագանգում էր Իտկարի դատարկ սրտի խուլ անկիւններում... Ասես հանգստացնելու մղումով՝ նա աւելի ամուր սեղմեց աղջկան ու դէմքը թաղելով նրա մազերի մէջ, զգաց ծանօթ բոյրը...

Երբ Զառան՝ տագնապած դրան զանգին յաջորդած խորհրդաւոր լռութիւնից, գոգնոցը կապած դուրս եկաւ խոհանոցից, նրանք վերացած համբուրւում էին...

*

* *

Այնուհետեւ ամէն բան կատարուեց շատ արագ...

Շտապում էին...

Իտկարի ծնողները եկան Թեհրանից։ Մտերմիկ ու սեղմ շրջանում կայացաւ նրանց ամուսնութեան ծէսը։ Սոնան փոխադրուեց Իտկարի բնակարանը։ Զառան մենակ մնաց։

Զարաբաստիկ գիշերուայ առաջին կենակցութիւնից եօթ ամիս անց աշխարհ եկաւ կապոյտ աչքերով, չէկլիկ ու սպիտակ մորթով տղան...

Իտկարի այն հարցին, թէ ինչու շուտ ծնուեց երեխան, բժիշկը զարմացած պատասխանեց, որ ծնունդը եղել է միանգամայն բնական՝ լրիւ ինն ամիս ու դեռ մի քանի օր աւել ժամանակում...

Նա պրպտեց յիշողութիւնն ու չգիտէր՝ ծիծաղէ՞ր, թէ՞ լաց լինէր՝ ինն ամիս առաջ Սոնան ընկերուհիների հետ մեկնել էր Սոչի...

ԿՈԼԻԱ ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Դեկտեմբեր 2006
Թեհրան

ԱՂՋԻԿՏԵՍԸ

- Ե՛լ, աղջիկս, ե՛լ, Հիմա արեւը երկու ոտնաչափ նստած է տանիքի եզերքին։ Երկու ժամէն լաթերը պէտք է վայելեն արեւուն շոյանքը։

Զեմ ուզեր լսել, այս առաւօտեան կանուխ ժամուն, կարծես ականջներս կը մերժեն ընդունիլ որեւէ թելադրութիւն։ Բայց մայրս չի յուսահատիր։

- Ե՛լ, աղջիկս, ե՛լ, կը բաւէ քնանաս։ Այսօր շատ լաթեր ունինք լուալիք։ Շուտ պէտք է շարժինք։ Աղջիկ եղած տունը, լուացքը շատ կանուխ կը փռեն...։

Կէսով մը կը բանամ քնաթաթախ աչքերս, բայց թմրութիւն մը թոյլ չի տար։ Կ՚ուզեմ շուտով ետ գոցել ու քիչ մըն ալ վայելել առաւօտեան քաղցր քունը եւ անկողինիս փափկութիւնը։ Թող ըմբոշխնեմ արձակուրդի բարիքը։ Բայց երկար չի տեւեր։ Կը բանամ աչքերս եւ կը զգամ, որ հանդարտ գիշեր մը անցուցած եմ ու գոհացած կը կենամ ոտքի ։ Ի՜նչ հրաշալի պարգեւ է տուած Աստուած մարդուն - քունի երանութիւնը - արդարօրէն սահմանուած բոլորին եւ ամէն օր։ Փա՜ռք Արարիչին։

Տասներորդ դասարանի շրջանը նոր բոլորած էի։ Բայց անհոգ քնանալ չկար։ Ամառն ալ պէտք էր մասնակից դառնայինք մօրս առտնին գործերուն։ Ճիշդ է, որ մայրս անգրագէտ կին մըն էր, բայց երկու համաշխարհային պատերազմներ ճաշակած անտէրութիւն եւ որբութիւն համտեսած, մեր կեանքին անգիր օրէնք մը կը պարտադրէր։ Պէտք է ամէն բան սորվէինք ու ամէն տեսակ կեանքի յարմարելու պատրաստ ըլլայինք, ի՜նչ կ՚ըլլայ... ի՜նչ չ՚ըլլար։

Ուրբաթ էր. մեր լուացքի սովորական օրը։ Շաբաթ մը ես պէտք էր կատարէի տան մաքրութիւնը, շաբաթ մը քոյրս օգնէր լուացքի պարտականութեան եւ այսպէս փոխն ի փոխ ձեռք ձգէինք առօրեայ գործերու վարժութիւն։

Լուացքի մասնակցութիւնը իմս էր։ Աղտոտ հագուստներու ծրարը ձեռքս, դուռը կը բանամ բարձրանալու համար տանիք, ուր մեր միայարկանի չէնքին յատկացուած ընդարձակ սենեակ մը լուացարանն էր։

Մենք վարձակալ էինք այս չէնքին մէջ, ոչ տանտէր։ Հօրս ուսուցիչի քսակը չէր թոյլատրեր, որ դառնար որեւէ սեփական կալուածի տէր։ Անկէ դուրս վստահ եմ, որ հայրս օր մը չէ մտածած տուն մը գնելու մասին։ Նիւթական մտահոգութիւններ չեն լեցուցած իր հոգին։ Իր ամբողջ կեանքը իմացական արժէքներու նուիրած ու բարոյական տուրքեր շալկած՝ հայրս իր մահուրնէ ետք մեզի ձգած ամբողջ ժառանգութիւնը՝ դատարկ դրամապանակ մը, երկու սնտուկ գիրք ու թերթերու հաւաքածոներ։ Վստահ որ եթէ տուն գնելու փափաքը ունենար, անպատճառ ուղեղը այդ ուղղութեամբ աշխատցուցած պիտի ըլլար։ Սպանդէն բախտով սպրդած ու Հալէպի մէջ կայք հաստատած հայրս մտածած էր միայն բոյն մը շինել ու չէնցնել։ Ազգին նուիրուիլ եւ սերունդներ դաստիարակել։ Ո՞վ պարապ էր այդպիսի նպատակներու կամ ի՞նչ նշանակութիւն պիտի ունենար այդ քանի մը քառակուսի մեթր տարածութեամբ բնակարանը իրեն համար, վստահ որ ոչինչ պիտի ըսէր իրեն այդ տունը, երբ հոն՝ Զէյթունի սէգ լեռներու կողքին, պապենական անծայրածիր հողեր, հարագատ ջերմ օճախ եւ խաղողի իր պաշտած այգիները թողած ու հեռացած էր հայրս։

Այս տունը ընտրած էր հայրս իր առողջապահական դիրքէն քաջալերուելով։ Արեւոտ ու օդասուն էր։ Իսկ չէնքին մէջ շատ տաղտուկ չկար։ Ընդամէնը երեք դրացի էինք։

Հազիւ քանի մը աստիճան բարձրացած՝ երկու նրբակազմ երիտասարդներ կը խանգարեն վերելքս, եւ կը հարցնեն դրացի Պ...եաններու տունը։ Կը կենամ պահ մը։ Իրենք գիրենք կը ծանօթացնեն ինծի։ Կը հասկնան իմ ով ըլլալս, իսկ ես կը ստուգեմ, որ Լաթաքիայէն եկած են։ Մեր դրացիին աղջկան նշանածին կողմէ ղրկուած առաքելութիւն մը։ Յոյց կու տամ անոնց դուռը եւ անհոգ կը բարձրանամ վեր, մօրս հետ լուացքի տհաճ պարտականութիւնը կատարելու։ Ձեռքով լուացք ընել։ Ի՜նչ սրտմաշ գործ։ Խոշոր սաւանները

ճզմել բարակ ձեռքերով, որպէսզի մաքրուին։ Նախ մայրս կը ձեռնարկէ ու յետոյ ինծի կու տայ։ Կ'աշխատիմ ես ալ, բայց լուութեանս մէջ դժգոհութիւն մը կայ հանգչած. չեմ խօսիր։ Մայրս կը զգայ, որ դժուար կը կատարեմ այդ մէկը...

- Սորվի՛ր, աղջի՛կս, սորվի՛ր, թերեւս գացած տեղդ մեքենայ չկայ։ Լուացք պիտի չընե՞ս...

- Չէ՛, այդ մէկը չի նշանակեր, որ պիտի չընեմ։ Բայց օգտուինք գիտութեան բարիքներէն։ Ես ձեռքով լուացք պիտի չընեմ։ Անպայման մեքենայ մը պիտի ունենամ։

Բաւական ընդարձակ լուացարան մըն էր այդ սենեակը, տանիքին գրեթէ մէջտեղը կառուցուած՝ ջուրի բոլոր յարմարութիւններով օժտուած։ Այս սենեակի սիմֆոնիան սա ձախ անկիւնը լեցուցած հսկայ կրակի օճախէն կը բարձրանար, որուն վրայ կը հանգչէր լուացքի ահագին կաթսան։ Կարմիր պղինձէ պատրաստուած այդ կաթսան կարծես կարմիր հինայուած գլուխներու հմայքը կը պահէր իր մէջ։ Կարծես հոն կը կատարուէր մաքուր լաթերու հարսանիքը։ Փայտի մթերանոցը դուրսն էր՝ տանիքին ձախ կողմը։ Ես մեծ հաճոյքով կը նետէի փայտի կտորները օճախէն ներս։ Փայտի անուշ հոտը կը լեցնէր սենեակը, անոր բոյրը կը հանգստացնէր թոքերդ, բոցը կը պարէր նագանքներով օճախին մէջ ու կաթսային մէջ դրուած ճերմակեղէնները կը խայտային։ Օճառի փրփուրները կը խաղային ջուրի մակերեսին ու տաքուկ երաժշտութիւն մը կը լեցնէր սենեակը, լուացքի դեղերու հոտերով շաղախուած։ Ճիշդ այն ատեն լուացքը կը խնդար մեր երեսին ճիւնասպիտակ դարձած։ Մեր պրկուած ջիղերն ու մկաններն ալ կը թուլնային յանկարծ մեծ գոհունակութեամբ, որովհետեւ մեր աշխատանքին դժուար մասը կատարած կ'ըլլայինք արդէն։

Դեռ լուացքը չվերջացած դրացի տիկ Հ... կու գայ մեր մօտ ու մայրս մէկ կողմ քաշած անոր բաներ մը կը փսփսայ եւ անմիջապէս վար կ'իջնէ։ Կարծես մէկը վարը գինք կը սպասէ։ Չեմ շահագրգռուած իրենց խօսակցութեամբ։ Անհրապոյր կին մըն էր ան։ Գոնէ իմ հետաքրքրութենէս հեռու տիպար մը։

Կէսօրուան մօտ լուացքը կը յանձնենք տանիքի երկայնքին քաշուած մետաղեայ թելերուն եւ կարծես մայրս տեսակ մը գոհացած իր տանտիկնոջ բծախնդրութիւնը կը վայելէ եւ արեւին ճառագայթներէն հալածուած կ'իջնենք վար։ Ճաշելէ ետք յոգնած, կ'ուզեմ պզտիկ հանգիստ մը ընել։ Բայց մայրս կ'արգիլէ։ Կ'իմանամ որ այսօր հանգչիլ չկայ, որովհետեւ քիչ ետք հիւրեր պիտի ունենանք։ Ուրբաթ օրով ի՞նչ հիւրեր են ասոնք, կը խորհիմ։ Արդեօք ի՞նչ կայ անոնց ետին թաքնուած։ Մայրս կը թելադրէ, որ նոր հագուստս հագնիմ եւ քիչ մը խնամեմ թափթփած մազերս։ Լուացքի օրով պճնուի՞լ։ Ո՞վ սիրտ ունի այդ ընելու։

Մայրս տեսնելով անպատրաստակամութիւնս, կ'ուզէ խանդավառել զիս։

- Այսօր քեզի համար աղջիկտեսի պիտի գան։ Առաւօտուն աստիճաններուն վրայ հանդիպած երիտասարդներէն մէկը քեզ շատ հաւնած է։ «Տեսած աղջիկս մէնըքէն մըն է», ըսած է։ Քեզ եւրոպացիի նմանցուցեր է։

- Ի՜նչ աղջիկտես, ի՜նչ մաղջիկտես, մա՛յրս։ Ես ո՛ւր, ամուսնութիւնը ո՛ւր...։

- Աղջի՛կս, թող գան։ Տղան շատ կը գովեն։ Տիկին Հ... կ'ըսէ, որ իր փեսացուն գէշ չէ, բայց այս տղան շատ-շատ լաւ է։ Նիւթական բացառիկ կարողութեան տէր է։ Շէնք մը ամբողջ իր սեփականութիւնն է։ Լաթաքիոյ ոսկերիչի ամենալաւ խանութը ունի։

- Չեմ ուզեր, մա՛յրս, թող չգան, ես մարդ չեմ ուզեր...։

- Չէ՛, չէ՛ աղջիկս, տիկ. Հ... մինչեւ իր աղջկան փեսացու մը գտաւ, երկու տարի միջնորդին տարտը քաշեց։ Ի՜նչ յարգանքներ, ի՞նչ նուէրներ ու խոստումներ...։

Կը պոռթկամ, կ'ընդվզիմ եւ կը մերժեմ ընդունիլ այս տաղտկալի հիւրերը։

- Աղջի՛կս, մէյ մը թող գայ տեսնենք, դուն ալ ել դէմը մէյ մը։ Եթէ չուզես, չենք տար քեզ։

- Չէ՛, չէ՛, ես ապրանք մը չեմ ցուցադրութեան համար։ Քանի երբեք միտք չունիմ ամուսնութեան՝ անկարելի է, որ դէմը ելլեմ։ Այդ փեսացուն ալ շնորհակալ թող ըլլայ ինծի, որ իր գործը կը դիւրացնեմ, անիմաստ, անել ճամբաներ չեմ մտցներ գինք...

Մայրս կը փորձէր տունը կոկիկ դարձնել։ Հիւրերուն ժամը հասած էր։ Բայց հիւրերը իր հիւրերն էին։ Ես կապ չունէի անոնց հետ։ Ես հոն բաղնիքին մէջ ջուրի բարիքին յանձն-

ուած, լոգանք մը կ՚առնեմ եւ անմիջապէս կը մտնեմ անկողին։

Դուրսը իրարանցումի մէջ են մայրս եւ քոյրս։ Մայրս իր տուած խոստումին պատասխանատու, կը խնդրէ քրոջմէս որ ինք ընդունի հիւրերը եւ կատարէ պէտք եղած հիւրասիրութիւնը։ Քոյրս փրկարարի իր դերին մէջ է։ Արդեօք որքանո՞վ պիտի յաջողի։ Դժուար կացութեան մէջ է։

Դուռը կը զարնուի։ Հիւրերը եկած են արդէն։ Սենեակիս գոց դրան ետին ամէն ինչ կ՚իմանամ։ Ձայները կը բարձրանան։ Դուրսը խանդավառ տրամադրութիւններ կը բաժնուին։ Ապագայի յոյսերով ծանօթութիւններ կ՚արմատաւորուին։ Խօսակցութիւններ ծայր կու տան։ Խնդուքներ կը շռայլուին։ Բայց շատ երկար չի տեւեր այս հաճելի մթնոլորտը։ Ձայները կը տկարանան, խնդուքները կը վերջանան։

Իսկ հոն, անկողինիս մէջ ընկղմած, կը վտարեմ այդ անկոչ փեսային մուտքը հոգիէս ներս։ Կը զգամ, որ ես անկողինիս մէջ, փեսացուն դուրսը սենեակին մէջ, կ՚ապրինք գրեթէ նոյն տագնապները։ Ինք ամէն գնով կ՚ուզէ տէր դառնալ ինծի, ես ամէն գնով կ՚ուզեմ վանել զինք։ Ջօրաւոր ուժգնութիւն մը, տենդոտ հակասութիւն մը կը կապէ մեզ։ Երկուքս ալ կ՚ապրինք բուռն զգացումներ։ Յաւակնոտութիւն մը չէ մերժումս, որովհետեւ ոչինչ ունիմ իր անձին նկատմամբ։ Պարզապէս սխալ պահու մը կը զարնէ դուռս, երբ հոգիս խոպան անդաստանը մեկուսացած է, փշաթելերով անջատուած՝ անպատրաստ հերկուելու եւ ցանուելու։ Ձգոյշ, փշաթելերէն անդին...։

Ձեմ ուզեր կեանք մը ամբողջ կախեալ ըլլալ ուրիշներէ... Կ՚ուզեմ ըլլալ ինքնարաւ։ Առնել կեանքէն իմ իրաւունքս։ Բան մըն ալ ես ընեմ այս կեանքին մէջ։ Տնօրինել կեանքս, ինչպէս որ ցանկալի է ինծի համար։

Քիչ ետք կ՚երթան հիւրերը։ Մայրս վշտացած, ձեւով մը վարկաբեկուած կը զգայ ինքզինք, հիւրերուն հեռանալէն ետք։ Հազիւ հինգ-տասը վայրկեան անց, տան զանգը կրկին կը հնչէ։

Տիկին Հ...ն կրկին կու գայ իմացնելու եւ ստուգելու, թէ արդեօք սխա՞լ հասկացողութիւն եղած է։

- Աղջիկտեսը պլոնտ աղջկանդ համար էր, ոչ էսմէրին...

Մայրս այլեւս չի կրնար թաքցնել եւ կ՚իմացնէ իրականութիւնը. իմ մերժումս եւ իր յորդորներն ու տագնապները։ Տիկին Հ... ձախողած իր միջնորդի դերին մէջ կ՚երթայ։

Այդ օր մեր դրան զանգը պիտի չլռէր։ Անոր բախտի օրն էր այդ օր։ Տիկին Հ... վերջին անգամ մըն ալ կու գայ։

- Անգամ մըն ալ ես աղջկանդ հետ պիտի խօսիմ,- կ՚ըսէ ու կը մօտենայ ինծի։

- Նայէ՛, աղջի՛կս, տղուն խելքը գլուխէն առեր ես... աղամանդներու մէջ պիտի թաղէ քեզ...

- Ես ամուսնանալ չեմ ուզեր...

- Աղջիկս, ասանկ բախտ շատ քիչ կը հանդիպի...

- Ես դպրոց պիտի երթամ...

- Աղջի՛կս, խե՞նթ ես դուն, այսպիսի բախտ կը մերժուի՞։

- Ոչ... ոչ... չեմ ուզեր...

- Նայէ՛, տղան կ՚ըսէ, որ մեղրալուսինի մինչեւ Յունաստան պիտի տանի քեզ։ Այսպէս բախտ քիչ կու գայ, աղջի՛կս։ Անգամ մըն ալ խորհի՛ր, լաւ մտածէ, քանի դեռ ուշ չէ։ Քանի դեռ տղան պատասխանդ կը սպասէ։

Ձեմ պատասխաներ։

- Դպրոցը ի՞նչ պիտի ընես... մարդուս բախտի մեծութիւնը կարեւոր է եւ ոչ ուսումին... խելքդ գլուխդ հաւաքէ... դուն դեռ չես հասկնար...

- Ո՛չ, ո՛չ, չեմ ուզեր ամուսնանալ... չեմ ուզեր...

- Ես դպրոց պիտի երթամ... ես բախտ չեմ ուզեր, ուսումս պիտի շարունակեմ... անպատճառ պէտք է շարունակեմ...

ՍԻՐՈՒՆ ՍԻՍԵՌԵԱՆ-ՀԱՃԷԹԵԱՆ

Արեւոս Վարդան

Ծննդեան 100 ամեակ

Յարութ Կոստանդեան

(1909-1978)

Սփիւռքահայ գրականութեան մէջ բոլորիս ծանօթ անուն մըն է Յարութ Կոստանդեան, որ Հայ գրականութեան նուիրած է բանաստեղծութեան երկու հատորներ՝ «Օրերի Իմաստութիւնը» եւ, «Բանաստեղծութեամբ»ը, (որոնց մասին անդրադարձած են գրական քննադատներ), նաեւ քանի մը թարգմանութիւններ, նամակներ, գրութիւններ եւ արձակ էջեր, զորս կը ներկայացնենք այս էջերով, իր ծննդեան 100 ամեակին առիթով։

***

Յարութ Կոստանդեան ծնած է Պուչիր (Պարսկաստան) 1909ին։ Տասը տարեկանին ընտանեօք կը փոխադրուին Հնդկաստան։ 1927ին կ՝անցնի Ֆրանսա։ Ինքնաշխատութեամբ կը տիրապետէ հայերէն լեզուին, հակառակ անոր որ կ՝ապրէր հարաւային Ֆրանսայի Փրովանս շրջանի բլուրներէն մէկուն վրայ (ուր մահացաւ 1978ին), հարազատներէ հեռու, տարին հազիւ քանի մը անգամ մայրենի լեզուն խօսելու հնարաւորութիւնը ստեղծելով իրեն համար։ Գրելու կը սկսի 1930ին, կ՝աշխատակցի տարբեր գաղափարներու պատկանող հայկական ամսագրերու եւ թերթերու՝ «Մենք»ին, «Անդաստան»ին, «Անահիտ»ին եւ «Ապագայ»ին։

***

Յարութ Կոստանդեանի արձակ էջերը թիւով քիչ են, մեծ մասամբ խորհրդապաշտական են, եւ միշտ կապուած՝ դրուագի մը, յուշի մը, կամ խորհուրդի մը։ Անոնք տարօրինակ մթնոլորտ ստեղծող տպաւորապաշտ էջեր են, որոնցմով Կոստանդեան ամբողջացուցած է բանաստեղծութեամբ դրսեւորած իր ապրումները եւ մտատանջութիւնները։

Կարճ արձակ մըն է՝ «Որովհետեւ ծաղկում է ծառը», ուր ան կը ներկայացնէ ցանկութիւններու ցանկ մը, կ՝ուզէ պարել ու նուագել, բայց չի գիտեր, կ՝ուզէ բոլորին հարցաքննութիւններուն պատասխան տալ, բայց «Հայկայ ցեղի պատասխանը բոլորին՝ լռում է»։ Այս իսկ պատճառով կ՝որոշէ իբրեւ հայ լռութեան դատապարտուած ըլլալու դէմ իր ընդվզումը արտայայտել գրելով։ Թէեւ կարճ գրութիւն մըն է, բայց եթէ թափանցենք անոր խորքը կը տեսնենք հայ գրականութեան նուիրուելու իր դրդապատճառը։

Այլ կարճ արձակ մըն է՝ «Արեւելեան գորգը»։ Արեւելքի պատմական քաղաքներուն մէջ մեծցած Կոստանդեան յատուկ տկարութիւն մը ունի այն ամէն ինչի նկատմամբ, որ արեւելեան է։ Այս կտորէն մեկնելով կը զգանք իր ակնածանքն ու սէրը արեւելեան փառքերուն հանդէպ։ Հակառակ անոր որ, կ՝ապրէր գեղեցիկ բնութեամբ օժտուած բլուրի մը վրայ, եւ իր յուշերով կը փնտռէ արեւելքի բնութիւնը՝ օդը, ջուրը, ծառը, ծաղիկները եւ մանաւանդ արեւը։ Ան իր իրականութիւնը կը տեսնէ Փարիզի մութ սենեակին մէջ փռուած այդ գորգին մէջ, կը նոյնանայ անոր հետ, եւ անկէ մեկնած կը ներկայացնէ արեւելքէն գաղթած ամբողջ հայութիւնը այդ գորգին վիճակուած բախտին ընդմէջէն «Հէ՛յ Արեւելքի գորգ, դու էլ ինձ պէս օտար ես այստեղ։ Քեզ էլ են անարգել, փռել են կոշտ գետնի վրայ ու փոշոտ ոտքեր կոխում են երեսդ »։

Կոստանդեան «անարգուած» զգալով հանդերձ կը հաւատար, որ հայը պիտի կարենայ բարձ-

բանալ ու բազմանալ։ Ան լաւ կը ճանչնար հայ ժողովուրդի անպարտելի կամքը, գիտէր որ ան պիտի յաղթահարէ ամէն դժուարութիւն եւ պարտադրէ իր գոյութիւնը սփիւռքի տարածքին, ձգտելով միշտ վերադառնալ դէպի «դրախտային պարտէզ»՝ արեւելք։ Ան հաւատալով իր տեսլականին կ՚ըսէ. «Ծառերը աճում, բարձրանում են սենեակիս մէջ, ծածկելով սաղարթախիտ ճիւղերով…»։

Մէկ տողով կարելի է ըսել, թէ «Արեւելեան գորգ»ը հայ ժողովուրդի անցեալը, 1930ական տարիներու ներկան եւ ապագան պատկերացնող արձակ մըն է։

Բոլորովին տարբեր արձակ գրութիւն մըն է «Դիմանկարը»։ Կոստանդեանի «քառասային» հոգեվիճակի ստեղծագործական երկունքն է, ուր ան իր արեան եւ մտածումներուն շաղախով պարզ դիմանկար մը վերածած է իր երազներու տիպարին։

Գեղեցիկ իգական մը, որ կրնայ կարդալ իր հոգին, անոր փոթորկումները եւ խաղաղ պահերը կ՚ըմբռնէ եւ ըստ այնմ կը վարուի իրեն հետ։ Կ՚ըլլայ իր առանձնութեան մտերիմ խօսակիցը, անկեղծ ու քաջ արտայայտուողը, պահելով միշտ գիտակից ու գրաւիչ իգականի յատկութիւնը. «Թէպէտ նրա դիմագծերին վաղուց եմ ծանօթ, ու յաճախ եմ իր հայեացքը հարցաքննել, սակայն իւրաքանչիւր անգամ նայելիս նա ցուցնում է նոր մի ժպիտ՝ մինչ այդ թաքուն պահած մի նոր նայուածք։ Երբեմն գորովալիր, երբեմն հեգնող, մերթ սաստող. սակայն զգացնում է միշտ կախարդ ու հմայական իր ներկայութիւնը…»։

Դիմանկարին մէջ փնտռած, գտած եւ տեսած իր տիպարին յատկութիւնները կը յիշեցնեն «Մոնալիզա»ն, որ կը յարմարի եւ կը համապատասխանէ զայն դիտողի հոգեվիճակին։

Այս գրութիւնը Ց. Կոստանդեանի առօրեան կը դրսեւորէ։ Անոր տխուր պահերուն, մխիթարանքով ու մայրական ժպիտով՝ գորովալիր ու գգուական նայող իգականն է ան։ Սիրոյ ապրումներով ներշնչուած պահերուն՝ իր գեղեցկութեամբ գրաւող ու երանութեան աշխարհ փոխադրող իգականն է ան։ Իր սիրային յուսախաբութենէ տառապած վայրկեաններուն՝ ան խոստացող, բայց խաբող սիրուհին է, իսկ հոգեկան խաղաղ պահերուն ան վշտերէ ետք երեւցող եօթնագոյն ծիածանն է։ Այսինքն երրորդութեամբ օժտուած այն իգականը, զոր պիտի ուզէր ունենալ ամէն տղամարդ։ Իգական մը, որու մէջ մէկտեղուած ըլլայ մայրը, կինը եւ սիրուհին. «Դարեր առաջ մի նկարիչ պատկերացրել է իգական այդ առեղծուածը, անկարելի այդ երրորդութիւնը, որ երազուած կնոջ կատարելութիւնն է ներկայացնում»։

«Ձմրան գիշեր»ը պատմուածք մըն է հեքիաթով մը ներառեալ։ Մուտքի բաժինը կը յիշեցնէ Ալէն Փոյի «Ագռաւը», սակայն բովանդակութիւնը բոլորովին տարբեր է։

Այս գրութեան մէջ Կոստանդեան կը ներկայացնէ գրագիտութեան մուսան, որ քամին է եւ կը թելադրէ բանաստեղծին զբաղիլ հեքիաթագրութեամբ, ինչ որ ըստ իրեն «գրականութեան բարձրագոյն սեռն է»։ Ըստ երեւոյթին մուսային թելադրանքէն մղուած բանաստեղծը կը գրէ «Գազան» հեքիաթը, որու գլխաւոր թեման հաւատարմութիւնն է։

Հեքիաթագիրը Հնդկաստան մեծցած եւ ապա Ֆրանսահայ եղած այն պարսկահայն է, որուն մէջ իր անդրադարձը ունեցած են հնդկական աստուածները եւ մանաւանդ անոնց գաղափարախօսութիւններն ու բարոյախօսութիւնները։ Արդէն բանաստեղծութիւններուն մէջ քանի մը առիթով յիշած էր զանոնք, իսկ հոս, այս հեքիաթին մէջ «Բուդդայէն հազար տարի առաջ» ապրող որսորդ Պանդուն է յիշուած հերոսը, իսկ փոխանցուած պատգամը՝ «ամէն կեանք մի կեանք է, հաւասար մի ուրիշ կեանք»։

Հեքիաթագիրը որսորդ Պանդունի եւ անոր շան սխալմամբ սպանուելուն ընդմէջէն ոչ միայն կ՚ուզէ հասկցնել, թէ կեանքի մէջ «հաւատարիմ բարեկամներն են միշտ ոտնակոխ լինում», այլեւ ըստ խոգակերպ աստուծոյ փոխանցած պատգամին՝ իւրանքաչիւր հայու կեանքը խլող թշնամիէն՝ կեանք մը խլելու իրաւունքն ունի հայը։

Միեւնոյն ատեն հեքիաթագիրը բարոյախօսութեամբ կը թելադրէ չընել ուրիշին այն, ինչ որ չենք ուզեր ուրիշներ ընեն մեզի։ Բուդդայական, իսլամական եւ քրիստոնէական կրօնքներուն

մէջ նոյն պատուէրի առկայութիւնը, նոյն քարոզչութիւնը եւ տարբեր հաւատքներու ճամբով նոյն դաստիարակութիւնը ստանալու իր պատկերը ցոյց կու տայ Կոստանդեան մեկնելով երեքի հետ ունեցած իր շփումներէն։

«Ձմրան գիշեր»ի երրորդ բաժինը՝ «Իմ կեանքը» տարօրինակ նկարագրութիւնն է հեղինակի շան՝ Խեչոյի, որ լեգու ելած պիտի պատմէ իր կենսագրականը եւ յայտնէ իր հաւատարմութիւնը տիրոջը հանդէպ։

Այս բաժնին մէջ Կոստանդեան կը շեշտէ կենդանիներու եւ մարդոց յարաբերութիւնը. առաջինին՝ հաւատարմութիւնը, իսկ երկրորդին՝ թերագնահատումը այդ հաւատարմութեան. «...Պոչս հանդարտ շարժելով մօտեցայ նրան, նա գլուխս շոյեց, մի կտոր հաց տուեց ու շարունակեց իր ճամբան։ Ես նրան հետեւեցի ու հետեւում եմ մինչեւ օրս...

Խեչօն, սենեակիս լռութիւնը խանգարում է, հարցնելով.- է՛հ, ինչպէ՞ս էր (ակնարկելով իր կենսագրականին)։

- Արժէք չունի.

- Ինչո՞ւ.

- Որովհետեւ դու մի շուն ես...»։

«Խօսելու մասին»ը շուրջ հինգ էջերու վրայ երկարող երկխօսութիւն մըն է, որուն ընթացքին ի յայտ կու գայ Յ. Կոստանդեանի ըմբռնումը գրելու արարքին գծով։ Միտքեր գաղափարներ ու տեսակէտեր արտայայտելու համար սովորաբար գործածուող միջոցներէն (խօսիլ եւ գրել) արձակագիրը կ՚ընտրէ գրելով արտայայտուելու միջոցը, որովհետեւ կը հաւատայ, թէ «ուր մտածմունք կայ, այնտեղ կրկնութիւն չկայ» եւ այս շատ կարեւոր է միտք մը փոխանցելու պարագային. նկատի առած, որ կրկնութիւնը միջակութիւն է, մինչ բանաստեղծութեան, երաժշտութեան եւ խօսակցութեան մէջ միջակութիւնը անտանելի է, ինչպէս նաեւ «խօսքով միտքեր արտայայտել ամէնքի ամէնօրեայ գործն է», մինչ գրելովը՝ ընատուր ձիրքերու տէր անձերու։

Ուշադրութեան արժանի է խօսակիցներուն անուններուն ընտրութիւնը։ Կոստանդեան դիտումնաւոր կերպով երկխօսութեան իր հերոսները մկրտած է Հայկ եւ Արամ անուններով, մէկը՝ գրելով արտայայտուելու ջատագովը, միւսը՝ խօսելով։

Հայկի եւ Արամի ընդմէջէն Կոստանդեան ցոյց կու տայ տարբեր գաղափարներու տէր հայ ժողովուրդի հատուածները։ Հայկը կը ներկայացնէ կարդալով՝ այսինքն, գործի փաստերով նոր գաղափարը ընդունող անհատները, իսկ Արամը՝ առանց հասկնալու դաւանուող գաղափարի նպատակները, ճարտար ու հռետոր խօսքի հետեւող ամբոխը։

Խորքով գաղափարական գրութիւն մըն է, ուր Յ. Կոստանդեան կ՚ընդդիմանայ ամբոխը խօսքերով լոլոզող եւ գրաւող միջոցներուն դէմ. «Հիմի ես կարծում եմ, որ կան մի շարք մարդիկ, որոնց լեզուները բոլորովին անպէտք են, եւ խոչընդոտ իրենց մտային զարգացման։ Եւ ըստ ինձ պէտք է կտրել այդ մարդկանց լեզուները՝ այն ժամանակ նրանք կը սկսին մտածել իրենց չխօսածին վրայ...»։

«Փիղը» պատմուածքի սահմաններէն քիչ մը աւելի ծաւալուն գործ մըն է, խորքը հայոց լեզուի եւ գրականութեան պաշտպանումն է աղաւաղումէ եւ նահանջէ։

Հերոսները՝ փորր այլանդակ ու մեծ Վռամշապուհն է, եւ ինքը՝ բանաստեղծը (հոս՝ արձակագիրը)։ Հանդիպումէ ու երկար զրոյցէ ետք բանաստեղծը զրուցակիցին կարծիքը կը խնդրէ իր նոր գործին՝ արձակին գծով։

Իրականութեան մէջ, Կոստանդեան ինքնաքննադատում կը կատարէ այս գրութեան մէջ. եւ ի յայտ կու գայ, թէ ինք այնքան ալ գոհ չէ իր աշխատանքէն, հակառակ որ կը դժգոհի Վռամշապուհի բացասական պատասխանը լսելով, սակայն չի հակաճառեր, որովհետեւ ինչպէս կը նկատենք զրուցակիցի անունը Վռամշապուհ է, եւ բանաստեղծը այս անունի ընտրութեամբ կը փոխադրուի դէպի ոսկեդար, դէպի գրականասէր ու ուսումնասէր Վռամշապուհ թագա-

ւորը, որուն աջակցութեամբ տեղի ունեցաւ հայ գիրերու գիւտը։

Հոս գգալի է Կոստանդեանի մտահոգութիւնը հայոց լեզուի գծով։ Ան կը փորձէ ստեղծագործել այնպիսի լեզուով մը, զոր կարելի եղած չափով անաղարտ պահած ըլլայ ինչպէս նաեւ հայ գրականութեան կը նուիրէ այնպիսի ստեղծագործութիւններ, որոնք արժանի ըլլան տեղ գրաւելու անկէ ներս։ Հետեւարար, իր երեւակայութեամբ կը դիմէ Վռամշապուհ թագաւորին, քաջ գիտնալով, որ ան միակն էր որ խիստ անկեղծութեամբ իր կարծիքը պիտի տար իր փառքը եղող գիւտին ներկայ գործածման գծով։

Բայց, զարմանալիօրէն, Վռամշապուհը հետաքրքրողը պիտի ըլլայ նիւթը, եւ պիտի թելադրէ սփիւռքահայ գրագէտին չգրել այնպիսի բաներ որ՝ «Անի քաղաք նստեր կու լայ...», «Ձայն տուր ով ծովակ» ու «Հոնգուր, հոնգուր կու լամ ես», լալկան ու տխուր ըլլան, այլ տեսնել «թէ մեր պապերը ինչպիսի քաջ ու կենսուրախ մարդիկ են եղել» եւ երգել այնպէս, որ վերադառնան փառքի օրերը։

«Փիղը» իր տարօրինակ բովանդակութեան առընթեր կ՚ընդգրկէ անսպասելի վերջաւորութիւն հեղինակը իր երեւակայութիւնը կը վերածէ հրաշքի։ «Ի հեճուկս իր փորին եւ տիտանական իր յետոյքին՝ նա չոգիացել էր անհետ։ Ես այլեւս չտեսայ նրան, եւ մինչեւ այսօր չգիտեմ թէ ինչպէս պէտք է բացատրել անըմբռնելի այդ դէպքը, որ հրաշք բառով է միայն լուսարանւում»։

«Եղջերուաքաղը» տասնչորս էջերու վրայ երկարող, երկու բաժիններով լոյս տեսած գրութիւն մըն է, մոգական աշխարհ մը, դարձեալ տարօրինակ մթնոլորտով, բոլորովին նոր պատկերներով եւ քաղաքական խորքով ։

Առաջին բաժինին մէջ «Թուղթ առ Կիպրիանոս» դիրքի թարգմանութենէն մեկնած Յ. Կոստանդեան երեւակայական պատկերներ ստեղծած է, ուր ակնարկութիւններ կան պատմական եւ Խորհրդային Հայաստանի մասին։

Առաջին էջով նկարագրուած բազկաթոռի մը համար կ՚ըսէ. «Հայաստանեայց գահի պէս լքուած մի բազկաթոռ որ թեւարաց սպասում էր, հրաւիրում էր անցորդին իր հիւրասիրութիւնից օգտուելու. »։ Իսկ հերոսի՝ Արիստակէսի արտաքին նկարագրութեան ընդմէջէն 1920ական թուականներու Հայաստանի քաղաքական վիճակը կը դրսեւորէ, իր ակնոցներով դիտուած «Դէմքը կատարեալ ծաղրանկարն էր անդրկովկասեան համադաշնակցութեան.- աչքերից մէկը նայում էր հիւսիս եւ միւսը դէպի հարաւ։ Քիթն, Արարատի պէս հայկական էր՝ կարկառուն։ Իսկ տափակ երեսի վրայ զոյգ վրանների նման ցցուն այտերը՝ անտարակոյս թաթարական էին։ Ասես նրա իւրաքանչիւր մասը, հակամարտ ու անգիջող յամառութեամբ մերժում էր միեւնոյն արտայայտութեան մաս կազմել, մերժում էր միւսների հետ դառն՝ միաժամանակ նոյն մտածումն ու յոյզերն արտայայտել»։

«Եղջերուաքաղ»ի կարծեցեալ Կիպրիանոսը, ըստ Սամոստացիին, նոր սերունդը կը ներկայացնէ, իսկ վարպետը՝ Սամոստացին, հինը։ Բայց, որովհետեւ հինը համր է եւ նորը խուլ, դժուար է գործակցութիւնը։ Վերջին տողով Յ. Կոստանդեան կ՚ակնարկէ հին եւ նոր սերունդներու միջեւ փոխանցման շրջանի չգոյութեան։ Ըստ իրեն մեր հիներուն հաւատքը, աւանդութիւնները, մինչեւ իսկ լեզուի պահպանումը դժուար թէ գտանելի ըլլան նորերուն մէջ։ Թերեւս կայ զանոնք պահելու պայքարը, բայց այդ պարտականութենէն մղուած եւ ոչ անոնց արժէքին եւ անհրաժեշտութեան գծով գիտակցելէն։

Իսկ երկրորդ բաժինի գծով Կոստանդեան արձակագիրը նախապատրաստելով ընթերցողը իր տարօրինակ մթնոլորտին պիտի ըսէ «Յետին ապուշն իսկ կարող է աշխարհի ամենաթանկագին, հազուագիւտ եւ խորիմաստ հատորները ամբարել իր գրադարանին մէջ, սակայն կը կարդայ լոկ այն գիրքերը՝ որոնց արժանի է, իցի՛ւ թէ դո՛ւ, ով ընթերցող, արժանի լինես այս գրութեան, որը գերազանցօրէն երկվայրկեանն քառասուն դարերի, եւ քառասուն մարդկային տարիների՝ մէկ ժամը»։

Ցստակ է, որ այս տողերը ընթերցողը կը տանին դէպի Ուրարտու եւ ակնթարթի մը մէջ կը

վերադարձնեն զայն դէպի ներկան, գտնելով հայ ժողովուրդի գոյատեւումը իբրեւ միակ կապը մոգերու, ուրարտական եւ սուրբերու արդի Հայաստանի միջեւ։

***

Ինչպէս կը տեսնենք՝ ազգային ցաւեր, գրական մտահոգութիւններ, զանազան մշակոյթներու ազդեցութիւններ, դժգոհի հոգեվիճակներ եւ տարօրինակ մտածումներ դրսեւորող պատկերներով կը յատկանշուին Կոստանդեանի արձակները Սփիւռքահայ գրականութեան մէջ. եւ թէեւ համեմատաբար աւելի մեծարժէք է Յ. Կոստանդեան բանաստեղծը, քան արձակագիրը, սակայն իր արձակները ձեւով ու խորքով նոր ու յաջող փորձեր կը համարուին արձակագրութեան մարզէն ներս։

Դոկտ. ՍԵԴԱ ՔԻԼԷՃԵԱՆ

20 - 2 - 2009

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳՈՐԳ

Սենեակս մութ է ու օդը սպառուած: Լոյս չկայ, օդ չկայ:

Արեւի մի նիհար, հիւանդ ու մրսկոտ ճառագայթ շողում է պատուհանի միջից եւ ժանեակէ վարագոյրի ստուերահիւս ընդօրինակութիւնը ձգում գորգիս վրայ:

Գորգս կապոյտ է. վրան սակայն գոյնզգոյն ծառեր, ծաղիկներ ու թռչուններ կան նկարուած:

- Ո՜վ գիտէ Արեւելքի ո՞ր քաղաքում հիւսեցին քեզ, ու հիմա դուն Փարիզում սենեակս ես զարդարում:

Հէ՜յ Արեւելքի գորգ, դու էլ ինձ պէս օտար ես այստեղ: Քեզ էլ են անարգել, փռել են կոշտ գետնի վրայ ու փոշոտ ոտքեր կոխում են երեսդ:

Արեւելքի գորգ, թէ մեր երկիրը լինէինք՝ ես քեզ զուարթ պարտէզի մէջ կը սփռէի, կանանչ ու դալար խոտերի վրայ, ծառերի զով շուքին տակ, կարկաչուն աղբիւրի մօտ:

Ու կօշիկներս հանելով ծալլապատիկ կը նստէի վրադ ու կ՚երազէի:

Սամովարը կ՚եռար մեր կողքին, միրգեր կը թափուէին մեր շուրջը ու սոխակներ կ՚երգէին ծառերի վրայ:

Ու դու, այն հեքիաթական գորգի պէս կը սլանայիր դէպի երազային աշխարհներ՝ ուր մենք Խայեամի հետ գինի կ՚ըմպէինք ու տէրվիշների հետ հաշիշ կը ծխէինք:

Հէ՜յ, հէ՜յ Արեւելքի գորգ...

Արեւի մի նիհար, հիւանդ ու մրսկոտ ճառագայթ շողում է պատուհանիս միջից՝ գորգիս վրայ:

Եւ ահա այն թիթեռանման ծաղիկները կարծես թէ մի խոր քնից արթնանում են, ծաղկում եւ բուրում...

Խատուտիկ թռչունները կեանք են առնում ու դայլայլում:

Ծառերը աճում, բարձրանում են սենեակիս մէջ, ծածկելով առաստաղը սաղարթախիտ ճիւղերով:

Սենեակիս մէջ դրախտային մի պարտէզ կայ, ուր արեգակը սիրող էակի աչքի պէս ջերմ ու բարի ժպտում է ամէնքին...:

Յ. ԿՈՍՏԱՆԴԵԱՆ

Փարիզ

Արեւուտ Ավագեան

ՔԱՆԱՔՕ՝ ՃԱԲՈՆՈՒՀԻՆ...

Ներկայացուածը, քաղաքապետարանի մատենադարանին մէջ, ճաբոնական ցուցահանդէս մըն էր, նախորդ երկուքը նուիրուած էին հունգարական եւ ֆինլանտական արուեստին ու գրականութեան: Այս անգամ յատուկ հանգամանք ունէր ան, կը վերաբերէր սեռայնութեան, érotisme-ին՝ նկարչութեան մէջ, բազմադարեան պաստառներու վերարտադրութեամբ: Արուեստ մը խռովիչ միսթիքով ու խոր փիլիսոփայութեամբ՝ նուիրուած պուտայականութեան ու շինթոյականութեան, ու անոնցմով յագեցած կեանքի խորհուրդով:

Այդ արուեստը ուժեղ գրաւչութիւն ունէր, որ կ՚առինքնէր այցելուն: Սեռայնութիւնը կազմած էր էութիւնը այս ժողովուրդին ու անոր հաղորդած էր յատուկ կենսունակութիւն մը: Ինծի համար յայտնութիւն էր գիրքերով փոխանցուած այդ գրաւիչ իրողութիւնը: Ուշադրութեամբ հետեւած էի իւրաքանչիւր էջի վրայ բացուող գեղանկարներուն: Նման զօրութեամբ գոյացած ազգ մը ատակ էր առաւել հզօրանալու ու ճառագայթելու: Կիրքը, իր խորագոյն իմաստով ցանկայարոյց, երանութիւն ու հանդարտութիւն պարգեւող ազդակ մըն էր զինք ընկալողներուն, այդպէս ըմբռնած եմ, առանց կորսուելու անոր խռովայոյզ ալիքներուն մէջ:

Ճաբոնական արուեստին հետ անակնկալ այս հանդիպումս, զիս հարըստացնող մաքնիսական զօրութիւն մը կը ներշնչէր:

Յիշեցի դիպուածը, որ զուգադիպութեամբ մը զիս դրաւ ճաբոնուհիի մը հետ հաղորդակցութեան մէջ՝ բայց տարապայման հանգամանքով: Հնչած

էր զանգը մեր տան դրան, ու դէմ յանդիման գտայ ինքզինքս մահիկաձեւ սիրուն աչքերով պարմանուհիի մը հետ, որ հազիւ կը յաջողէր զսպել արցունքները, որոնք կը ծլէին իր թարթիչներու թրթռացումէն:

Մեր բնակարանի շէնքին երրորդ յարկի ուսանողուհին էր: Երբեմն կը լսուէր անոր դաշնամուրէն մեզի հասնող երաժշտական նօթերու արձագանգը, փորձեր կը կատարէր տան մէջ:

Հիմա դիմացս կանգնած կը պաղատէր, կը ջանար զսպել յուզումը: Արցուքներուն մէջէն կարելի էր տեսնել աչքերը, որոնք սեղմուած էին կողմերու վրայ, ասիական դեղնաւուն հմայիչ խորքով: Քաղցր համակրելի դէմք ունէր արեւելքի գեղեցկուհին, որ իր խորունկ ցաւը կը ցոլացնէր տեսակ մը սփոփանք ու օգնութիւն փնտռելով: Կ'ուզէր արտաքսել իր մէջ կուտակուած ցասումին թոյնը: Վրդոված էր, ըմբոստացած, հոգին վիրաւոր:

Ի՞նչ պատահած էր: Հասկնալու համար պէտք էր սպասել, որպէսզի դեռատի աղջիկը գտնէր իր հանդարտութիւնը, ըսելու համար իր ցաւին տուն տուող պատճառը:

Նստեցաւ գրասեղանիս դիմաց, խոնաւ աչքերով: Թաշկինակ մը տուի իրեն, որպէսզի աչքը, քիթը, բերանը, սրբէ, մաքրէ, չորցնէ: Խորունկ շունչ մը քաշեց, ու քիչ մը հանդարտած ու քաջալերուած, փորձեց խօսիլ. պատմել իրեն պատահած արկածը, դժբախտութիւնը:

Հարցուցի, յաջորդաբար, սովորական ձեւով, անուն, մականուն, տարիք, զբաղում: Հատիկ-հատիկ պատասխանեց հարցումներուս իր երերուն ֆրանսերէնով:

Հեռաւոր Ճաբոնէն կու գար: Ծնած էր կղզիի մը վրայ, ոչ հեռու Հիրոշիմայէն եւ եկած էր Փարիզ երաժշտական ուսումը կատարելագործելու համար: Իր երկրին մէջ հետեւած էր դաշնամուրի դասերու, ունեցած էր հայ երաժիշտ դասատուներ, կը սիրէր հայ երաժտագէտները, այդպէս ըսաւ, յիշելով մի քանին անոնցմէ, ինչ որ հաճոյք պատճառեց ինծի, ամէն տեղ հայ մը կայ, ահաւասիկ ճաբոնուհի մը տեղեակ էր մեր երաժշտութեան ու անոր սպասարկուներուն: Այս հանգամանքը վստահութեան մթնոլորտ մը ստեղծեց մեր միջեւ ու անկէ քաջալերուած սկսաւ պատմել պատահած դէպքը:

Արցունքները չքացած էին, քիթը չէր վազեր, ուժ ու սիրտ առած շարունակեց:

- Ոստիկանատունէն կու գամ, ուր բողոք ներկայացուցի պատահածին համար, այդպէս խորհուրդ տուին ինծի:

- Լաւ, շարունակէ: Ի՞նչ բանի համար բողոք:

- Փարիզ երաժշտական դպրոց կայ մը Մալզերպ պողոտայի վրայ, Մատլէն տաճարին կռնակը...

Կանգ առաւ շունչ առնելու համար, սակայն աչքին նոր կայլակներ երեւցան, յուզումը կը բարձրանար իր մէջէն դէպի վեր, դէպի աչքերը: Չէր յաջողեր շարունակել:

Այն ատեն ըսի.

- Լա՛ւ, շունչ առ պահ մը, ինքզինքդ հաւաքէ, քաջ եղի՛ր, մի՛ վախնար, շարունակէ՛, կը լսեմ:

- Մատլէն եկեղեցիին քովի փողոցին մէջ սրճարան-ճաշարան մը կայ, հոն գացած էի դաշնամուրի դասէս ետք գաւաթ մը թէյ խմելու ու քիչ մըն ալ հանգստանալու համար: Եւ սկսաւ սաստիկ լալ... փոթորիկ մը փրթաւ...

Մտահոգուիլ սկսայ, այս դեռատի աղջիկը ինչո՞ւ այս աստիճան ընկճըուած էր:

- Հիմա մի՛ լար, սրճարանին մէջ քեզի պատահածը պատմէ տեսնեմ:

Ինքզինք կրկին հաւաքեց ու շարունակել ուզեց, բայց այս անգամ ողջ մարմնով սկսաւ դողալ...

- Յետո՞յ... շարունակէ՛...

Այս անգամ երերուն ձայնով, մօտաւորապէս հասկնալի բառերով (մաս մըն ալ կռահեցի) սկսաւ պատմել:

- Երբ հանգստարան իջայ վարի յարկը, հիւսիսային ափրիկեցի սպասեակը ետեւէս եկաւ... Կասկածեցայ, բայց ետ չնայեցայ, ետ դառնալ չկար, որովհետեւ ճամբաս փակած էր արջի նմանող մարդատիպը, իր խոշոր մարմնով, կարելի չէր խուսափիլ: Մօտեցաւ ձեռքերէս բռնեց փակցուց մարմինս պատին եւ անշարժացուց զիս: Խոշոր ափով փակեց բերանս, որպէսզի խեղդէր ձայնս ու օգնութեան ճիչերս դուրս չգային, ու ես մնայի գամուած՝ ենթակայ իր կիրքին, կարելի չեղաւ ազատիլ, հակառակ ըրած ճիգերուս այդ վայրենի գազանին ճիրաններէն:

- Յետո՞յ..

- Փէշս վեր հանեց բրտօրէն, բաներ մը փորձեց ընել, մինչ ես կը ջանայի ամբողջ ուժովս ետ հրել զինք ու ազատիլ բրդոտ բազուկներուն կազմած շղթայէն...

Նորէն լաց ու կոծ...

Ծանր էր իրեն պատահածը, անընդունելի, ցնցող: Մանրակրկիտ քննութիւն մը անհրաժեշտ էր:

Մարմնակազմական որոշ հարցումներով ուզեցի հասկնալ իսկական կացութիւնը, յստակ տեղեկութիւն քաղելու համար:

Անհրաժեշտ էր գիտնալ նախ թէ բռնաբարութիւն տեղի ունեցա՞ծ էր թէ ոչ, տրուած պատասխաններէն հանելու համար եզրակացութիւն մը, աւելի առաջ տանելու համար հետագային խուզարկութիւնը, ոստիկանական վէպերու հետեւողութեամբ:

Կարելի եղաւ կարգ մը տուեալներ մէկտեղել իր տուած պատասխաններէն:

Ի՞նչ որ ալ ըլլար խնդիրը, իր ամբողջութեան մէջ վանողական խորք մը ունենալէ չէր դադրեր ինծի համար, եւ ի վերջոյ այս մէկը իմ մասնագիտութեանս մաս չէր կազմեր, սակայն սպասուածը աւելի մարդկային օգնութիւն մըն էր ինձմէ, կ'ենթադրեմ, որուն համար դիմած էր ինծի, այսինքն որպէս այդ ասպարէզին սպասարկու: Կարելի չէր աւելի առաջ տանիլ քննութիւնը տուեալ պայմաններու մէջ, քանի որ նեղացուցիչ հանգամանք մը ունէր, ինչ որ կարելի չէ նկարագրել բառերով:

Եւ դուրս գալու համար անհաճոյ կացութենէն, հարցուցի թէ կ'ուզէ՞ր մասնագիտական քննութեան ենթարկուիլ՝ արեան քննութիւն, շողանկարում եւ այլ սեղմ խուզարկումներ, լոյսին բերելու համար այդ վայրենիին պատճառած վնասները, մէկ խօսքով լոյսին բերելու համար ճշմարտութիւնը: Ի վերջոյ բռնաբարում կա՞ր թէ չկար: Այս էր հիմանական հարցը, որուն գիտական պատասխան մը գտնելու համար անհրաժեշտ էին քննութիւնները:

- Ինչու դուք չէ՞ք գիտեր, ինչո՞ւ կ'ուզէք նման խրթին քննութիւններ պահանջել,- հարցուց անակնկալ կերպով արեւելքի այս տուժած դուստրը:

Տեսայ թէ երեսին դեղինը փոխուեցաւ նոր գոյն ստացաւ: Դեղնաւուն խորքի վրայ աւելցած էին վարդագոյն նոր երանգներ:

Պատմեց թէ նշանուած էր, հիմա ի՞նչ պիտի ըսէր նշանածին, ինչպէ՞ս տեղեակ պիտի պահէր զինք այս «սարսափելի» պատահարէն: Այդ էր որ կը ցաւցնէր, կը մտահոգէր ու կը վշտացնէր այս աղուոր աղջիկը, որ միաժամանակ սիրահարած էր դասական երաժշտութեան եւ անոր կատարումին, զայն իբրեւ ասպարէզ ընտրած էր:

Այս անգամ յուզումի ալիքը տեղի տուած էր իր սիրած արուեստին առջեւ:

Քիչ մը հանգչելէ ետք կրկին խօսեցաւ տարբեր ձայնով.

- Եթէ կը փափաքիք վեր եկէք օր մը, քանի մը կտոր նուագեմ ձեզի համար, ձեր սիրած երաժշտութիւնը:

- Սիրով, այս արդէն լաւ լուր է, ե՞րբ կարելի է: Յայտնապէս հեռացած էր զինք լլկող նիւթէն:

- Ե՞րբ որ ուզէք, առաջին առիթով, շնորհակալ եմ ձեր օգնութեան համար: Ուրեմն ըստ ձեզի անխուսափելի բան մը չէ պատահա՞ծ: Ինչ կը խորհիք, ի՞նչ է ձեր եզրակացութիւնը:

- Ինծի այդպէս կը թուի թէ ըստ ձեր պատմածին անդառնալի բան մը չէ պատահած,- ըսի,- գազանը չէ յաջողած իր վայրագ ձեռնարկին մէջ իր նպատակին հասնիլ:

- Ուրեմն յաւելեալ քննութեանց կարիք չկա,յ այնպէս չէ՞, ըստ ձեզի: Ոստիկանատունը բժշկական վկայագիր պահանջեց ինձմէ, անոր համար ձեզի դիմեցի:

- Այդ մէկը դուք գիտէք, դուք կ՚որոշէք, սակայն կը խորհիմ թէ անդառնալի արարք մը չէ պատահած ըստ ձեր բացատրութեան: Եթէ կը պնդէք, այդ պարագային ձեզ կը ղրկեմ կանանց յատուկ մասնագէտի մը, ան կ՚որոշէ ու կը կատարէ պարտն ու պատշաճը:

Մեղմ ժպտեցաւ, վստահութիւն եկած էր վրան, կը թուէր իսկապէս սեռային գործարանի կազմութեան տեղեակ չըլլալուն հետեւանք էր այդ բոլորը: Ինչ որ նորութիւն չէր ինծի համար: Յաճախ գտնուած եմ նման պարագաներու առջեւ ու վկան եղած եմ խոր տգիտութեան:

Մինչդեռ սեռայնութեան ճաբոնական արուեստին նուիրուած ցուցահանդէսի պաստառներուն վրայ պատկերազարդ գիտելիքներ կային: Երբ մարդիկ հետաքրքրութիւնը ունենան թղթատելու, ինծի պէս, քաղաքապետարանի մատենադարանի ցուցասրահին մէջ կրնան սորվիլ: «Սեռային արուեստը ճաբոնական նկարչութեան մէջ» ցուցահանդէսէն կրնան շատ բան քաղել, մէկ խօսքով զարգանալ, հոն ամէն ինչ լոյսին բերուած էր գոյներու շիթերով, առարկայնօրէն, առանց գռեհկութեան, վեր առնուած պուտայական կրօնի միսթիքով ու վեհութեամբ: Բացայայտ էր որ երաժշտութիւնը մարդակազմութեան հետ առընչութիւն չունէր, սակայն շատերու նման այս անմեղն ալ տեղեակ չէր իր մարմնի կազմութենէն: Տուած տեղեկութիւններս իրեն բերին լուսաբանութիւն ու յարաբերական խաղաղութիւն, արցունքները չորցան, նոյնիսկ ժպիտի նման բան մը գծուեցաւ դէմքին վրայ ու քիթը չէր հոսեր այլեւս: Ան հասկցած կը թուէր ըսածներս: Աւելորդ մանրամասնութեանց կարիք չկար:

Մնացեալը ոստիկանութեան դերն էր, այդ չարագործին դաս տալ, որովհետեւ պատահածը ոճիրի համազօր էր, հետեւաբար իրենց կը մնար հե-

տապնդել եւ պատշաճ կերպով պատժել: Ի հարկին իր վարոցը մկրատով կտրել ու ոչնչացնել զայն, որպէսզի կրկին ասոր նման նուրբ արուեստագիտուհիի մը վրան չյարձակէր իր բնազդին զոհ դարձնելով զայն:

Համաձայնեցանք: Օր մը ինծի համար ունկնդրութիւն մը պիտի տար իր բնակարանին մէջ, լսելու համար քանի մը կտոր դասական վարպետներէն, ի հարկէ առանց մոռնալու մեր Կոմիտասը, Խաչատուրեանը, որպէս շնորհակալութիւն ու վարձատրութիւն իրեն մատուցած ծառայութեանս համար:

Այդ օրը չուշացաւ, օր մը եկաւ եւ ըսաւ, թէ եթէ կը փափաքէի կրնայի բարձրանալ իր բնակարանը՝ երրորդ յարկ, ունկնդրութեան համար:

Համաձայնեցանք:

Առաջին կտորը Խաչատուրեանի «Սուրերու պար»ն էր, անկէ ետք «Թոքաթա», յետոյ Պրահս, Շոփէն՝ հաճելի երաժշտութիւն մը, զոր սկսած էի արդէն գնահատել ու սիրել ատենէ մը ի վեր:

Իսկական *վիրթուոզ* մը՝ այս շնորհալի Ճաբոնուհիին, որ կը սիրէր նաեւ մեր երաժշտութիւնը:

Ճաբոն, իր յաճախած երաժշտանոցին մէջ ունեցած էր դաշնամուրի հայ վարպետ մը: Իսկական վայելք մը պատճառեց այդ օր ինծի:

Երբ մենահամերգը հասաւ իր աւարտին, ըսի իրեն թէ լաւ կ՚ըլլար որ երեկոյ մը կազմակերպէինք, ուրիշներուն ալ բաժին հանելու համար իր կատարողական հարուստ տաղանդէն:

Գաղափարը ուրախալի գտաւ սակայն ո՞վ էր որ պիտի իրագործէր ու կազմակերպէր նման երեկոյ մը, որուն համար այլ ձիրքերու կարիք կար:

Կարելի չէր ալ վստահիլ բարեկամիս, որ ատենին նման երեկոներ կը կազմակերպէր:

Համերգի աւարտին կրկին շնորհակալութիւն յայտնեց իրեն ընձեռած խնամքիս համար, ըսաւ որ պիտի չմոռնայ զիս երբեք, երբ երկիր վերադառնայ իր որակաւորումէն ետք: Հոս ստացածը տեսակ մը փարիզեան փայլ մը պիտի յաւելուր իր տաղանդին վրայ: Այդ էր որ կ՚ուրախացնէր զինք իր դժխեմ պատահարէն ետք, որ տեղի ունցած էր լոյս քաղաքի սիրտին վրայ:

Երկու տարի առաջ եկաւ քովս, հրաւիրուած էր մենահամերգի մը համար Փարիզի հիւսիսը գտնուող քաղաք մը: Ուրախ կը թուէր, կը վայելէր իր կատարողական արուեստին պարգեւած հաճոյքները:

Ու հիմա, տարին անգամ մը, համացանցի վրայ կը ղրկէ ինծի տօնական օրերուն իր բարեմաղթութիւնները, գեղեցկութեամբ առլցուն ճաբոնական կղզիներու այդ զաւակը, որ կը սիրէ Փարիզը իր լոյսերով, հակառակ իր դժբախտ փորձառութեան, հեռաւոր արեւելքի մէջ, ուր արեւը մեզմէ առաջ կը ծագի:

Ամուսնութիւնը տեղի ունեցեր է լաւագոյն պայմաններու մէջ:

Tant mieux: Աւելի լաւ:

Ուրախ էր այդ հայասէր ճաբոնուհի արուեստագիտուհին:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԿԱՐԵՒՈՐԵԱՆ

05/2008 Սէն-Իփոլիթ



ընայի խարագրել նաեւ «Զրույց գիրքի մը հետ», կամ «Գիրքի մը ընդմէջէն»։ Արդէն ի՞նչ բանի կը ծառայեն գիրքերը։ մտերիմ զրոյցի նման մարդոց հետ, որոնց հանդիպած ենք, կամ չենք հանդիպած, անմիջականօրէն մեզի մօտիկ, կամ դարեր առաջ ապրած կամ մեզմէ հեռու, տարբեր երկինքներու տակ, տարբեր մշակոյթներու արտայայտութիւն։

Իւրաքանչիւր ընթերցում արկածախնդրութիւն մըն է, հարցականներու պատասխան գտնելու, դիտելու ուրիշներ բայց նաեւ ինքզինքը, քանի որ, ինչպէս կ՚ըսէր Ժան-Փոլ Սարթր, ուրիշի նայուածքը ինքզինքս կը յայտնաբերէ ինծի, քանի որ տողերու եռին գտնուող խաստեր մեր ներաշխարհի եւ ըմբռնումներու լոյսով կը ներկայանան, այդ ձեւով ալ կը հարստանանք։

Նոյն գիրքը կը կարդանք, տարբեր օրեր, նոյն բանը չենք հակնար, նոյն տողերը չեն գրաւեր մեր ուշադրութիւնը, բան պահու եւ հոգեվիճակի, նոյն գիրքը տարբեր բան ի՞րէ նոյն անձին, տարբեր բան կ՚ըսէ իւրաքանչիւր ընթերցողի։

Գիրքը մը նուէր ստացայ, չուրջ հազար երկու հարիւր մեծադիր էջեր, ուր ամփոփուած է Ֆրանսացի մեծ գրող Ֆրանսուա Մորիաքի* «Օրագիր, քաղաքական գիշերութիւններ**»։

Գիրքը ներկայացման կողքի չորրորդ էջին վրայ, Ֆանրէյ Ռոնսօ կը կատարէ ուշագրաւ հաստատումներ, որոնցմէ մի քանին կ՚առանձնացնեմ, որպէս մտածման նիւթ։ Կը կարդանք. «Ֆրանսուա Մորիաք միշտ լուրջ վերաբերում ունեցած է հրապարակագրութեան նկատմամբ։ Իր քրոնիկներէն իւրաքանչիւրին մէջ բացառիկ բան մը կար, եղեկարական խառնուրդ մը տաղանդի եւ սիրտի։ Ան կը հանդիսանայ հնարողի հրապարակագրական բնոյթի մը։ Հապէս առանձին, նոյնիսկ երբ վեհանձն է եւ կը դառնայ դէպի ուրիշներ, ուշադիր գանոնք համոզելու կամ անոնց հակադրուելու»։ Կ՚ըսուի նաեւ որ ժամանակը չէ մաշեցուցած Ֆրանսուա Մորիաքի հրապա-

ԳՐԵԼ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆ Է, ՆԱԵՒ՝ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ

րակագրութիւնը, քանի որ ան միշտ իր անձէն անդին գիտցած է երթալ, այսինքն իր սոսկ մտահոգութիւնը չէ եղած էջ լեցնել։ Ժան-Լիւք Պարրէ, որ խմբագրած է այս ծաւալուն գիրքը, կ՚ըսէ նաեւ որ Ֆրանսուա Մորիաք «գոհացած է ըլլալով իր ժամանակի միշտ ներկայ վկան։ Այսօր ան մեզի կը ներկայանայ ինչպէս որ իրապէս միշտ եղած է, հոսանքին դէմ, խանգարող, ջղայնացնող՝ ամէն կարգի պատշաճեցումներու դէմ։ Անփոխարինելի»։ Միթէ՞ այս չէ վաւերական հրապարակագիրին կոչումը, առաքելութիւն՝ ինքզինքին տրուած, արձագանգ ի վերուստ տրուած պատգամի մը, կամ խոր զգացողութեամբ ազգի եւ ժողովուրդի ակնկալութեան, որ տպաւորելու եւ ցնցիչ ըլլալու մակերեսայնութենէն աւելին է։

Ինչ ըսած է Ֆրանսուա Մորիաք՝ հրապարագրութեան համար։ Ժան-Լիւք Պարրէ կը բացատրէ «Ըսելու ձեւ մը, այն որ քրոնիկագիրի եւ բանավիճողի կոչումը չի տարբերիր, իրականութիւնը ներկայացնելու վիպագիրի, բանաստեղծի կամ թատերագիրի մօտեցումէն։ Եւ որ մէկ սեռէն միւսը, միշտ գրականութիւն է, նոյնիսկ եթէ Մորիաքի համար, հրապարակագրութիւնը միակն է, որուն կը պատշաճի «յանձնառու գրականութիւն» արտայայտութիւնը»։

Կար ժամանակ, երբ մելան կը հոսէր «յանձնառու» գրականութեան մասին։ Ժան-Փոլ Սարթրի, Ալպէր Քամիւի, Անտրէ Մալրոյի կամ Արթըր Միլլրի վէպերը եւ թատրոնը առատ նիւթ կը հայթայթէին գաղափարներու տարածման համար։ Բայց հրապարակագրութիւնը կը հանդիսանար յանձնառութիւններու արտայայտութեան իսկական միջոցը։ Վաւերականներու պարագային այդպէս է նաեւ այսօր։ Ի հարկէ, այս հրապարակագրութիւնը հարկ է ըմբռնել իր ազնուագոյն, ոչ-գովերգական եւ կամ կողմնապաշտական իմաստով, այժմէութեամբ գրաղող եւ հոն խամրող, մրցակցութիւններու կամ շահախնդրութիւններու ծառայող գոռում-գոչիւն։ Բարքերու պատկերացման մեծ գրող Էմիլ Զոլա իր յանդուգն յանձնառութիւնը դրսեւորեց, երբ գրեց իր հռչակաւոր «Կ՚ամբաստանը՝ Տրէյֆիւսի անարդար դատապարտութեան առիթով։ Մեծ գրողին յանձնառութիւնը, որ իր խօսքին տուաւ մարդկային որակ եւ արժէք։ Յանձնառութիւնը առաջին հերթին կ՚ենթադրէ չենթարկուիլ դիւանակալութիւններու կամ բռնակալութիւններու հարթող գլանին, այսինքն՝ ան կը բացուի այլախոհութեան վրայ, տարբեր ըլլալով նպաստելու համար մարդկային արժէքներու դրսեւորման եւ ընդհանրապէս յառաջդիմութեան ընթացքին։

Փոքրիկ ժողովուրդ ենք, ոչ ոք պիտի փորձէ միջազգային հանրութեան ներկայացնել «յանձնառու» հայ վաւերական եւ խորք ունեցող հրապարակագիրները, որոնք հեշտութեամբ նաւարկած են հրապարակագրութեան եւ գրականութեան ջուրերուն մէջ։ Մեր «փոքրիկ ածու»ին մէջ ունեցած ենք դէմքեր, որոնք հրապարակագրութիւն ըրած են գրականութիւն ընելու պէս, նաեւ՝ գրականութիւն ըրած են հրապարակագրութիւն ընելու պէս, չեն բանտարկուած անմիջականի մէջ, չեն անգիտացած այժմէութիւնը, բայց գերանցում կատարած են, հասկցած են իրենց ժամանակը եւ ունեցած են ապագայի տեսիլքը։

Երբ կը կարդամ Ֆրանսուա Մորիաքի էջերը, մտածումս կը սաւառնի եւ կը հանդիպի անուններու, որոնք կը կոչուին Գրիգոր Արծրունի, Արփիար Արփիարեան, Բենիամին Թաշեան, Շաւարշ Միսաքեան, Շաւարշ Նարդունի։ Որքան շնորհալի գործ պիտի ըլլայ այս երախտաւորներու «հրապարակագրական-գրական» էջերով կազմել ծաղկաքաղ մը, միաժամանակ կատարելով խորքի ուսումնասիրութիւն մը, առհաւական արժէքներ եւ ըմբռնումներ լուսարձակի տակ առնելով։ Նման աշխատանք «դպրոց»ի դեր կրնար կատարել ժամանակակից հայ հրապարակագրութեան համար, որ այսօր ինքզինք կը խեղդէ քաղաքական տեղեկատուութեան, ձեռնարկնե-

րու նկարագրութեան, գովերգութեան եւ կողմնապաշտութեան մէջ, այսինքն՝ կրկնուող անվաղորդայն աղմուկի։

Ֆրանսուա Մորիաքի քրոնիկները գրականութիւն են։ Օրինակ, երբ կը գրէ ճամբորդութեան մասին, որ ժամանակակիցներուս համար դարձած է նպատակ, ինքնահաստատման ձեւ մը։ 19 նոյեմբեր 1932ին գրուած քրոնիկ մը, L'Echo de Paris *թերթին մէջ, «Նստակեացի մը մտածումները» խորագիրին տակ հրամցուող էջերը, այնքա՜ն իրաւ եւ իմաստալից են նաեւ այսօր։ Այս քրոնիկը կը գտնուի յիշուած հատորին մէջ, էջ* 29-30։ *Ուզեցի անոր յատկանշական գեղեցկութիւնը ցոյց տալու համար մէջբերումներ ընտրել, բայց անկարելի եղաւ, քանի որ ան կը նմանէր ճարտարապետական ամբողջի մը, ինչ որ գրական երկի մը յատկանիշն է։ Ուստի, այս գուտ անձնական տպաւորութիւնները պիտի եզրակացնեմ թարգմանելով քրոնիկը ամբողջութեամբ։ Մեզմէ իւրաքանչիւրը Ֆրանսուա Մորիաքի տողերէն կը քաղէ իր ժամանակակից մարդու իմաստութիւնը, եթէ մակերեսայնութիւնը, անհատապաշտութիւնը եւ նիւթապաշտութիւնը չեն խցած հոգիի երակները։*

Հարցում. «Նստակեացի մը մտածումները» ուր գետեղել, հրապարակագրութե՞ն թէ գրականութեան գլխուն տակ, քանի որ գրողի թեւածումները տեւաբար կը թաթխուին գրականութեան եւ գրողներու մտածումներուն մէջ։

Այսպէս է որ հրապարակագրութիւնը կը դառնայ գրականութիւն, դրսեւորում իմաստութեան եւ արուեստի, ինչպէս այդ ուզած եմ ցոյց տալ Շաւարշ Միսաքեանի վաստակը վերլուծելով։ Ինչպէս որ ֆրանսացին հատոր կը հրատարակէ Ֆրանսուա Մորիաքի հրապարակագրութիւնը ծանօթացնելու եւ արժեւորելու համար, ո՞վ այսօր յիշեալ հայ երախտաւորներու էջերը կը բանայ, որպէսզի մակերեսէն խորք երթալու արարումը տեղի ունենայ։

Յ. Պալեան, 7 Յունուար 2009

ՆՍՏԱԿԵԱՑԻ ՄԸ ՄՏԱԾՈՒՄՆԵՐԸ
ՖՐԱՆՍՈՒԱ ՄՈՐԻԱՔ

François Mauriac, Journal Mémoires politiques, edit. Robert Laffont, pp. 1136
(*Գիրքին մէջ այս քրոնիկը խորագրուած է՝* ***ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ***, *էջ* 29-30)

Նստակեացը, որ ես եմ, խոր երախտագիտութիւն պարտական է ճանապարհորդ գրողներու. անոնք ինծի կը խնայեն Արեւելք երթալ թռչուններու ճանապարհով։ Զանոնք կարդալով, կը կարծեմ հոն գտնուիլ, չնչահատ կ՚ըլլամ, կը գուշակեմ այն պահերը, երբ, իրենց տեղը, ես սրտի ցաւ պիտի ունենայի։ Վստահ եմ մանաւանդ, որ հոն ուր իրենք հիացման ճիչեր կ՚արձակեն, հաւանօրէն ես ոչինչ պիտի տեսնէի։ Քանի որ ինծի շատ ժամանակ պէտք է համայնապատկերի մը ընտելանալու համար, որ ան իմ մէջ մտնէ, խառնուի կեանքիս։ Արագ ճամբորդութիւն մը, նոյնիսկ ամէնէն պարզ միջոցներով, ինծի կը ձգէ սոսկ փոշիի, յոգնութեան, անքնութեան եւ ցրուածութեան յիշատակներ։

*«Մեկնիլ մեկնելու համար»*** անհասկնալի է ինծի համար։ Բայց այնքա՜ն քիչեր կը մեկնին մեկնելու համար։ Ճամբորդութիւն մը միշտ պատրուակ մըն է։ Իւրաքանչիւր մեկնումի համար պիտի գտնուէր, լաւ փնտռելով, խոստովանուած կամ թաքուն պատճառ մը, որ ոչ մէկ առընչութիւն ունենար ճամբորդութեան հաճոյքին հետ միայն։ Նախ կան միամիտներ, որոնք կը հաւատան որ կարգ մը համայնապատկեր-*

ներ կը համապատասխանեն կարգ մը զգացումներու, եւ որ կարելի է միայն երջանիկ ըլլալ լեղակագոյն ծովէն կրծուող բոսոր ժայռերու դիմաց։ Բայց մանաւանդ, մարդկային սէրը շարժման մէջ կը փնտռէ պաշտպանութիւն իր իսկ մաշումին դէմ։ Զոյգերը, միաժամանակ ցանկալով առանձնութիւն, կը վախնան ճանձրոյթէն։ Ճամբորդութիւնը զիրենք կ՝առանձնացնէ եւ միաժամանակ կը դառնայ զբօս։ Իրաւունք չունինք երկար ատեն դիտելու սիրուած դէմքէն տարբերը, բայց թոյլատրելի է երբեմն քիչ մը նայիլ դռնէն։

Երկու անձեր իրենք իրենց կու տան մարդոց դատաստանէն եւ առօրեայի պահանջներէն խուսափելու խարկանքը, եւ շնորհիւ գնացքին կամ ինքնաշարժին, չենթարկուիլ այլ ոչ մէկ օրէնքի քան անոր որ մէկը միւսին կը պարտադրէ։ Վտանգաւոր փորձ մը… եւ իրենցմէ մին միշտ աւելի շուտ կ՝անդրադառնայ որ կը ցանկայ վերադառնալ, գտնել իր սեղանը, իր աշխատանքը, կարդալ իր նամակները… Այս առաջին նիւթն է վէճին, որմէ ծնունդ պիտի առնեն բոլոր միւսները, եւ որոնք անտես կերպով արձանագրուած են վերադարձի տոմսին վրայ։ Իրենց կեանքի վերջաւորութեան, հռչակաւոր սիրահարները որոնք վազած են ճանապարհներու վրայ, Ժորժ Սանտ եւ Միւսսէ, եւ Շոփէն, Լիսդ, Տիկին տ՝Ակուլթ****, հաւանօրէն կը յիշէին միայն իրենց գգուռուռտուքը հիւրանոցներու տխուր սենեակներուն մէջ։

Այնքա՜ն քիչ սէրեր իրենք իրենց մէջ կը գտնեն բաւարար ուժ նստակեաց մնալու համար։ Ահա թէ ինչո՞ւ ամուսնական սէրը, որ կը տեւէ հազար հազարաւոր անհաստատ կացութիւններու մէջ, ինծի կը թուի ըլլալ հրաշքներու գեղեցկագոյնը, նոյնիսկ եթէ ան ամէնէն պարզն է։ Բազմաթիւ տարիներ ետք, դեռ այնքան ըսելիք ունենալ իրարու, ամէնէն ունայններէն մինչեւ ամէնէն ծանրակշիռները, առանց ընտրութեան, առանց զարմացնելու փափաքի կամ հիացում առթելու, ի՜նչ հրաշալիք է։ Ատելու կարիք չկայ սուտը այնուհետեւ բանի չի ծառայեր, այնքան որ ամուսինները դարձած են թափանցիկ մին միւսին համար։ Այդպէս է միակ սէրը որ կը սիրէ անշարժութիւնը, որ կը սնանի սովորականով եւ առօրեայով։

Բնաւ չեմ հաւատար այն դարմանին, զոր կը յանձնարարէ Պոսսուէ***** կիրքերու դէմ՝ փախուստը, ինչպէս որ չեմ համոզուած բանաստեղծ Պոտլէրի ըսածով, երբ կը վստահեցնէ որ բազմաթիւ ճամբորդներ կը մեկնին փախչելու համար «Բռնակալ Ափրսէէն՝ վտանգաւոր բոյրերով»******։ Իրաւամբ, ան որ կ՝ուզէ մեկնիլ, այն է որ ան արդէն բուժուած է, սէրը ըլլալով, շատերու համար, սիրուած առարկայէն հեռու ապրելու ֆիզիքական անկարելիութիւն մը, շնչելու համար քաղաքէն դուրս ուր ան կը շնչէ։ Ճամբորդութիւնը պիտի ըլլար շատ անհանդուրժելի չարչարանք մը՝ կամաւոր ըլլալու համար։ Մեկնում մը պատճառը չէ, այլ բուժում մը։

Անոնք որոնք կը մեկնին մեկնելու համար, որոնց համար Պոտլէր կը խորհի թէ անոնք միակ իրաւ ճամբորդներն են, անոնք որոնք կը թուի թէ կը մեկնին մեկնելու համար, ուրիշ ոչ մէկ դրդապատճառ չունին, անոնց կը մնայ միշտ այն որ անոնք իրենք իրենց չեն հանդուրժեր կը փախչին իրենց սրտէն, միաժամանակ որսորդ եւ որս, հետապնդուող եւ հետապնդող։ Այս տեսակի ջլախտաւորները դժուար կարելի է դիտել, քանի որ անդադար կը թափառին աշխարհի մէկ ծայրէն միւսը եւ զանոնք կարելի է բռնել երբ արդէն ուժասպառ են, ինչպէս գաղթող այն թռչունները որոնք կ՝իյնան, սպառած, նաւերու կամրջակին վրայ։

Շատեր կը փախչին, կիրքի մը ճնշումով։ Ճամբորդութենէն կը սպասեն գոհացման արտօնութիւնը։ Դժուարութեամբ կը հաւատամ առանձին ճամբորդողներու անմեղութեան։ Մինչդեռ, այս միայնակ ճամբորդները յաճախ Աստուծոյ գուրգուրանքին կ՝արժանանան։ Շատեր Անոր հանդիպած են ճամբաներու վրայ ուր Զինք չէ-

*ին փնտռեր։ Հայը տը Ֆուքոյի դարձէն առաջ, իր կեանքի ամէնէն խորհրդաւոր դրուագներէն է որպէս հրեայ ծպտուած իր երկար պտոյտը անծանօթ Մարոքի ճամբաներուն վրայ։ Այս կամովին ընդունուած նուաստացման, ճգնումի, առանձնութեան պահը կը պեղէր այս սրտին մէջ, շնորհիւ ընկալման տեղը։ Եւ կը մտածենք երիվարով արշաւին մասին Սանթիւրիոնի*******, նոյն արահետներու վրայ, եւ որ լսեց նոյն ձայնը։*

Հայացուց՝ Ց.Պ.

**Ֆրանսուա Մորիաք (1885-1970). բանաստեղծ, վիպագիր, գրական քննադատ եւ քրոնիկագիր։ Իր երկերէն կարելի է յիշել «Բորոտներու համբոյրը», «Կրակի գետ»ը, «Սիրոյ անապատը», «Թերեզ Տեզքէյրու», «Իժերու հանգոյցը»։ Իր երկերը կը յատկանշուին քաղքենի փարիսեցիութեան դէմ երգիծանքով։ Հաւատացեալ կաթողիկէ է եւ կը փնտռէ չարի արմատը եւ փրկութեան ճանապարհը։ Իր երիտասարդութեան պահպանողական կեցուածքէն կը հեռանայ Երկրորդ Աշխարհամարտի ընթացքին եւ կը դատապարտէ ֆաշականութիւնը։ Ֆրանսայի գրաւման շրջանին կ'ընդգրկէ մտաւորական դիմադրականի կեցուածք եւ կը դատապարտէ Վիշիի կառավարութեան ենթակայութիւնը։ Ծածկանունով կը հրատարակէ քննադատական էջեր։ Գրաւման շրջանին, կը գրէ «Փարիսեցուհին», որուն հակազդելով զինք կը կոչեն «քանդումի գործակալ»... Որպէս քրոնիկագիր աշխատակցած է ֆրանսական մեծ թերթերու, այդ էջերը գրականութիւն են եւ վկայութիւն։ Կը զօրակցի ապագաղութարարութեան պայքարին։ 1933ին ընտրուած է Ֆրանսական Ակադեմիայի անդամ։ Կտակած է ծաւալուն գրական եւ հրապարակագրական ժառանգութիւն մը։ 1952ին կը ստանայ գրականութեան նոպելեան մրցանակը։*

*** François Mauriac, Journai Mémoires poiitiques, eđit. Robert Laffont, pp. 1136*

**** Կ'ակնարկէ Շարլ Պոտլէրի մէկ բանաստեղծութեան. «Իրաւ ճամբորդները անոնք են որոնք կը մեկնին / Մեկնելու համար»։*

***** Ժորժ Սանտ ապրեցաւ փոթորկոտ սէր, Վենետիկի մէջ, 1833ին, Ալֆրէտ տը Միւսսէի հետ, յետոյ՝ Մայորք, 1838-1839, Շոփէնի հետ։ Ինչ կը վերաբերի Լիսդի, ան 1835ի ամառը ժընեւ փախաւ կոմսուհի Մարի տ'Ակուլթի հետ, եւ ապա, Միլանի շրջանը, Վենետիկ եւ վերջապէս Հռոմ, 1839ին, հանդիսացան իրենց սիրային թափառումներու հանգրուանները։*

******Ժագ-Պենիները Պոսսուէ, 1627-1704, բարձրաստիճան կաթողիկէ կրօնական, քարոզիչ եւ ֆրանսացի գրող։*

*******Ակնարկութիւն ֆրանսացի բանաստեղծ Շարլ Պոտլէրի «Ճամբորդութիւնը» խորագրով բանաստեղծութեան հետեւեալ քառեակին.*

Ոմանք զուարթ՝ փախչելով հայրենիքէ մը վատանուն,
Ուրիշներ իրենց օրօրոցի սարսափէն, եւ քանի մը հոգի,
Աստղագուշակներ կնոջ աչքերուն մէջ ընկղմած,
Բռնակալ Սիրսէն՝ վտանգաւոր բոյրերով։

********Ակնարկութիւն քրիստոնէական դարձի եկած գրողի մը, Ընանի քեռորդիին, Էռնեստ Փսիշարիի (1883-1914, պատերազմի զոհ) անաւարտ վէպին՝ «Սանթիւրիոնի ճամբորդութիւնը», լոյս տեսած յետ մահու, 1915ին։*

ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՆԽՈՆՋ ՄՇԱԿ ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ 70ԱՄԵԱԿ *

Թատերագիր, բեմադրիչ, բանաստեղծ Հրանդ Մարգարեանի ստեղծագործական ճամբան՝ գրականութիւնից մինչեւ մանկավարժութիւն, հասարակական գործունէութիւնից մինչեւ Նիւ Եորք ծովածաւալ քաղաքի հայութեան ամէնօրեայ հոգսեր, հայի ճակատագիր է։ Հայի, որ բախտի անողոք կամքով ապրում է օտար աշխարհում, բայց Հայաստան երկրի զաւակն է, զինուորն ու քաղաքացին։

Գոյատեւման ամէնօրեայ ջանքերի կենդանի զգացողութիւնն օգնում է լաւ հասկանալ մեր պատմութեան, ազգային նկարագրի շատ հետաքրքիր մանրամասներ, որոնց մէջ առանձնակի դեր ու նշանակութիւն ունի Երազը։ Երազը պատմութեան տրամաբանութեամբ հիմնաւոր եւ առաւել եւս՝ այդ տրամաբանութեանը հակառակ շատ իրադարձութիւնների միակ բացատրութիւնն ու բանալին է։ Քիչ չեն նաեւ մեր ազգային Երազը մարմնաւորելու փորձեր արած հայ մարդիկ՝ թագաւորներ, իշխաններ, գրի ու գրականութեան մշակներ, որոնց հետ մեր հոգեւոր կապը ծինային է, արեան ձայն ու կենդանութիւն։ Այդ մարդկանց բաժին է հասել գերագոյն փառք, որն ունի իր թանկ գինը՝ աշխարհիկ ցաւի ու մեղքի տեսքով։ Թատերագիրը հանդիսատեսին ու ընթերցողին տանում է այս մարդկանց աշխարհը։

Մեր պատմութեան անմոռանալի էջերից են Բագրատունեանց հարստութեան հիմնադիր Աշոտ Ա թագաւորի իշխանութեան տարիները («Ուղեւորը»)։ Ճիշդ է, նրա տիրապետութեան շրջանի վերաբերեալ կան հետաքրքիր մեկնաբանութիւններ, բայց թատերագիրը, որ քաջատեղեակ է այդ ամէնին, յատուկ ուշադրութիւն է դարձնում քաջազուն արքայորդու՝ սեփական խիղճն ու ձեռքերն արիւնոտելու գնով պետութիւն ստեղծելու պատրաստակամութեանը։ «Ես անցորդ եմ»,- փորձում է արդարանալ Աշոտ արքայորդին նրան սպասում է ցաւով, տառապանքով, զոհաբերութիւններով լի ճանապարհ, որի աւարտն ինքը կարող է միայն երազել։

Նայիրին՝ Գարաշէնի տիրուհին, որը վերժամանակեայ եւ տարածութիւնից դուրս ապրող էակ է, ազգային ոգու կենդանի մարմնացումն է։ Նրա ամենատես աչքի առաջ կատարուել են բազմաթիւ դարակազմիկ ու ողբերգական դէպքեր, բայց այդ բոլորի մէջ կայ չինարարի, արարողի ոգին։ Հայոց պետականութեան հիմնադիր Արտաշէս թագաւորն իր ժանգոտած սուրը պիտի փոխանցի Աշոտ Բագրատունուն։ Հայոց այս պատմաշէն թագաւորին խորթ է վախը. կայ, ապրում է երկիր, աշխարհ շէնացնող հայրերի ոգին։

Ազգերի Երազները «զոհեր կը պահանջեն», եւ զոհաբերում ու զոհաբերուում են այն հերոսները, որոնք գինուած են «գիտակցական սրով», իսկ «ցնորքն ու երազը իրարմէ զանազանողը հաւատքն է»։ Պատմութիւն կերտում են դարակերտ հերոսները, որոնք յաղթում են՝ «ժողովուրդին մաս կազմելով»։ Նրանց անծանօթ են «հանգչիլ» ու «անդորը» բառերը, առաւել եւս՝ հոգեւոր անդորրը։ Աշոտ Բագրատունին նախապէս պիտի իմանայ թագաւորութիւն ստեղծելու «արժէքը», իսկ «փոխարժէք տուողը իր առածէն աւելին կը վճարէ միշտ»։ Իշխանաց իշխան դառնալու համար հարկ կը լինի գլխատել Մամիկոնեան տոհմը, զոհել աղջկայ երջանկութիւնը։ Եւ այս ամէնը՝ ի գին փառքի՞։ Ոչ միայն փառքի։

Սկսուում է ներքին կռիւը՝ Խղճի ու Անխղճի մենամարտը։ «Եթէ զո՜հ է հարկաւոր, զոհէ՛։ Զոհէ՛ ամէն ինչ... մենակ թէ պետականութիւն հաստատէ»,- պնդում է Անխիղճը, բայց ի հակակշիռ լսուում է Խղճի ձայնը. «Արիւն մի՛ թափեր, Աշոտ։ Արիւնը ետ կու գայ երկիրդ կործանելու»։ Մի դէպքում հարկաւոր է զոհել, բայց կառուցել, միւս դէպքում առանց արեան կառուցելու կոչ է արուում։ Ո՞րն է ճիշդ, ինչպէ՞ս վարուել ...

Պատասխանը յուշում է Հայկազունը՝ հայ ժողովրդի, հայրենի հողի ու դիմադրութեան ոգին, որից սերում են իշխանները։ Նա ճիւղ առ ճիւղ հիւսում է գերաններ, որ տուն կառուցի։ Ժողովուրդը միշտ միասնական է եւ հզօր, բայց իշխանների անմիաբանութիւնը փչրել է դիմադրութեան ոգին։ Ժողովուրդն ապրում է տոկալու, յարատեւելու տենչով, բայց միջոցը չգիտի։ Գերխնդիրը գիտակից ժողովուրդ ունենալն է, իսկ դրա համար հարկաւոր է յամառ ու անկոտրում ջանքով ցանել գիտակցութեան սերմը, որն անպայման ծիլ կը տայ, ու այն ժամանակ «պիտի գան թէ՛ ժողովուրդ, թէ՛ զօրք»։ Ժողովուրդ, երկիր միաբանելու ամէն ջանք ու ճիգ դարերում հազարապատիկ ծիլ ու բերք կը տայ,- սա թատերագիրի կոչն է մեզ՝ «հոյլ մը անանուն խոնարհներիս», «որոնց անունները իրենց մայրերէն զատ՝ ոչ ոք գիտցաւ»։ Ամենակարեւորը՝ պարտաւոր ենք վերջ տալ սեփական պատմութիւնից ոչ մի դաս չքաղելու աւանդական կեցուածքին։ Հարկաւոր է դառնալ «աշխարհի հպարտութիւնը»՝ պահպանելով վերժամանակեայ եւ վերտարածային յիշողութեամբ ապրող մեր տեսակը։ Այս դէպքում սերունդներն անդէմ չեն, եւ հարկ չի լինի մեծ տէրութիւնների դռները բախել։ Սերունդներին դէմք ու նկարագիր են տալիս «յաւերժի եւ յոյսի» մշակները, որոնք «ամէն գործի մէջ իմաստնութիւն» են դնում, իսկ իմաստնութեան գինը մարդու կեանքն է, որի յիշատակը պատմութեան մէջ մնում է մի կարճ անունով՝ Արտաշէս, Մաշտոց, Աշոտ... Հայ ժողովուրդը պարբերաբար ծնում է «սուրի եւ հուրի», ինչպէս նաեւ հոգեւորով ապրող մեծեր, որոնցից առաջինը Մաշտոցն էր։ Սուրբ Մաշտոցը բոլոր դարերում մեր տարած յաղթանակների հոգեւոր հայրն է,- սա մեր պատմութեան տրամաբանութիւնն է։ Մենք պատմութեան Ուղեւորն ենք, իսկ «Ազատութիւն» անունով հանգրուանը հեռու է։ Ուրեմն՝ պատուով կրենք Ուղեւորի մեր կոչումը։

***

Մարգարեան թատերագիրը շատ ասելիք ունի Սփիւռքի հայ հանդիսատեսին. ամէն հայ իր մեծ ու փոքր Աւարայրն ունի, եթէ ուզում է Հայ ապրել, եթէ ձգտում է Հայ մնալ, եթէ երազում է զաւակներին Հայ մեծացնել։

«Վարդանանք» թատերակը սկսուում է հայոց երկրի բոլոր խաւերին անհանգըստացնող տագնապալից «Թղթով». հերկելու, ցանելու, արտեր մշակելու, մատեաններ գրելու, ծաղկելու կոչուած ժողովուրդը ստիպուած է զէնքով պաշտպանել Արարման ընծին իրաւունքը։ «Հայրենիքի սէրը չա՜տ է պահանջկոտ», ու ամէն հայ պատրաստ է գիտակցաբար կշռելու ստեղծուած դժուարին կացութեան հնարաւոր ելքերը, բայց անսասան է հող, հայրենիք, հաւատ պաշտպանելու վճռականութիւնը. հայ ժողովրդի համար այդ սրբութիւններն անբաժան են։

Ամենադժուար վճիռը պիտի կայացնի Սպարապետը. նա քաջ գիտակցում է՝ արհաւիրքին դիմակայելու, վերջ տալու պայմանը մէկն է. «Երբ ըլլանք զօրե՛ղ, երբ ըլլանք մէկ սիրտ, երբ ըլլանք մենք ո՛ւժ...»։ Բայց հեշտ չէ հայ իշխաններին միաւորելը. նրանցից մի քանիսն արդէն մտածում են ամէն կերպ պահպանել Յագկերտին «հլու, հնազանդ, հպատակ հայեր»ի կարգավիճակը՝ համախմբուելով Վասակի շուրջը։

Ազատ Հայրենիքում ապրելու երազանքը միաւորում է ռամիկին, հոգեւոր հայրե-

րին, հայրենասէր իշխաններին, որոնց համար կայ պարզ մի ճշմարտութիւն. «Հայրենիք մը ՀԱՅՐԵՆԻՔ կ՚ըլլայ իր ժողովուրդով»։ Ղեւոնդ Երէցը «Թղթի» պատասխանում յստակ ձեւակերպում է.

«Իտէալի համար մենք կրնանք մեռնիլ.

Կեանքը ու մահը արժեւորած ենք մենք իտէալներով»։

Հայրենիքի ու հաւատի համար նահատակուելու պատրաստ ժողովուրդը պիտի վստահ լինի, որ իշխանները միասնական ճակատով են կռուելու։ Թատերգութեան առաջին տեսարանում Խմբի կանայք համատարած խաւարում տեսնում են «արթուն ՄԱՐԴ»ուն՝ Վարդանին։ Ժողովուրդն արթուն առաջնորդ է փնտռում։ Արթուն Հայ է փնտռում նաեւ Վասակ մարզպանը. նա չի հասկանում «խանդավառութեան պարապ բառերու» երազով տարուած մարդկանց, որոնք չեն պատկերացնում ազգովին «խանդավառութեան մո՛ւթ ուղիներով» գնալու հետեւանքները, չեն փնտռում «ԵԼՔԸ ապահով... ԵԼՔԸ խաղաղ այս ազգին համար...»։ Վասակը փորձում է սիրաշահել պարսիկներին, օգտագործել քծնող Գադիշոյին, խորամանկ Գիւտին՝ հայ իշխաններից համախոհներ հաւաքագրելու։ Նա փորձում է ներկայանալ նախ՝ որպէս հայ, յետոյ՝ պարսից պաշտօնեայ, խօսում է Հայաստան երկրի փառքը վերահաստատելու, զօրացնելու մասին, սակայն չի հասկանում, չի հանդուրժում ժողովրդի, հոգեւոր հայրերի բուռն գործունէութիւնը երկրում։

Վասակը մտքում փայփայում է Նոր Հայրենիքի, երկիրն առանց կռուի անկախ պահելու, «խոհեմ, ուշադիր» մարդկանց օգնութեամբ թագաւոր դառնալու պատրանքը։ Այդ հեռանկարին հասնելու համար մարզպանը դիմում է խարէութեան. նրա զոհերից է նաեւ պարսից զօրավար Միհրներսեհի քոյրը՝ Ֆարին, որ հրապուրուած է հայոց թագուհի դառնալու խաբկանքով։ «Մեր երազները մեծ հոգիներուն միայն տրուած են»,- ասում է Վասակը՝ իրեն վերապահելով մեծ հոգի ունենալու իրաւունքը։

Սուտ ուրացման որոշումն ընդունում է Վարդանը. չի կարելի գլխատել ժողովուրդը, բայց հայ մարդը չի կարող «ծախել իր Հողին Ուժը», որ անտես է ու ոգեղէն։ Այդ Ուժը կայ Վարդանի ու Հայրենիքի ազատութեան զինուորների երակներում՝ Մեծ Տիկնոջից մինչեւ շինական։

Կնոջ՝ Ազգանուշի հետ հերթական վէճի ժամանակ բացայայտուում է սեփական փառքի համար որդիներին վտանգած հօր ցաւը, որ արդէն ճաշակել է «մաղձերուն մաղձը», բայց պատրաստ է շարունակել գիտակցուած ու անխուսափելի ինքնազոհաբերումը,

«մինչեւ որ դարբնեմ ես այս Երկիրը ...

Իմ գծած ձեւով»։

Երկիրը միակամ գնում է դէպի ՀՈԳԵՄԱՐՏ՝ պատրաստ մահով մահը յաղթելու։

Թատերգութեան չորրորդ տեսարանը Վասակի ու Վարդանի հանդիպումն է. «Իմ ժողովուրդս ոչ մէկ կրօնքի զոհ չեմ դարձներ»,- ասում է Վասակը՝ սահմանազատելով Հայրենիքն ու կրօնը։ Նա փորձում է Վարդանին համոզել, որ հարկաւոր է գործադրել խելքի ուժը՝ Հայն ու Հայաստանը խնայելու համար։ Պարսկական հզօր տէրութեանը հպատակուելու գնով ապրելու ծրագիրը վտանգաւոր է՝ չնայած դա թագաւորութիւն ստեղծելու Վասակի միակ հնարաւորութիւնն է։ Մարզպանը համոզուած է, որ «անմահ հերոս, յաւերժ հերոս» դառնալու համար Վարդանը զոհաբերելու է հայ ժողովրդին, ու վճռում է.

«Մահ՝ քեզի՛ Վարդան,

բայց ո՛չ իմ ազգիս»։

Յստակ գծագրուում է տխուր հեռանկարը. մարտի դաշտում Սպարապետն ու

Մարգպանը յայտնուելու են հակառակ բանակներում, քանի որ Վասակի համար «Հայրենիք-կրօնք նուրբ յօրինուածքը» զգացական «վսեմ» թակարդ է, որի միջոցով կարելի է համախմբել հաւատարիմներին։

«Մահ՝ քեզի, Վասակ, բայց ո՛չ իմ ազգիս»,- վճռում է Վարդանը։ Նա մօր՝ ուշադիր եւ զգոյշ լինելու յորդոր-մաղթանքով է կշռում իր պատասխանատուութիւնը ժողովրդի առաջ այդ պատմական պահին. գալիք սերունդները միշտ չէ, որ լաւ են հասկանալու «Հայոց Աշխարհի՝ արեան ծովու մէջ» մկրտուելու հրամայականը, որ Սուրբ միւռոնով օծուելու պէս մեզ աւանդել են մեր նախնիները։

Հայ մարդը լաւ պիտի իմանայ պատմութեան հիմնական դասը՝ որտեղ էլ ապրի, հայը Հող ու Հայրենիք կարող է պահել-պահպանել միասնական ջանքերով։

***

«Հին ու միսթիք ազգի» բանաստեղծը՝ Ռուբէն Սեւակը Լօզանում բժշկութիւն է ուսանում։ Նա հոգու խորքում ցաւ ունի. «Լքուա՜ծ ազգ մըն ենք»։ Քաղաքակիրթ կոչուող աշխարհի աչքի առաջ թուրքը կոտորում է անպատիժ, հայաշատ գաւառները հայաթափում՝ իրագործելով հրէշաւոր ծրագիրը («Երբ արեւը կը լռէ»)։

Ստեղծուած դժոխքից դուրս գալու ելք են որոնում եւրոպական կրթութիւն ստացող հայ երիտասարդները։ Ռուբէնը խախտում է չգրուած օրէնքն ու ամուսնանում Եանիի հետ։ Եթէ անվիճելի է այն իմաստնութիւնը, թէ օրէնքները գեղեցիկ են բացառութիւններով, ուրեմն՝ այս գերմանուհին եզակի բացառութիւններից է եւ հաստատում է, թէ եւրոպական քաղաքակրթութիւնը «սուտ ու կեղծիք, շպար ու ամօթ» չէ միայն։ Եանին Ռուբէնի հետ ամուսնանում է հայկական եկեղեցում, գաւակներին հայ մեծացնելու համար սովորում է հայերէն։

Սէրը թելադրում է ինքնազոհաբերում, իսկ Հայրենիքը Ռ. Սեւակ մարդու ու բանաստեղծի սէրն ու սրբութիւնն է։ Նա խօսքով, գրչով փորձում է հայութեանը «հերոսաբար մեռնի՛լ» սովորեցնել, քանզի հեռու է թուում այն օրը, երբ «այս ազգը պիտի կատաղի»։ Իսկ մինչ այդ հարկաւոր է ապրել, գաւակներ մեծացնել այն երկրում, որի օրինական եւ օրինաւոր տէրը՝ հայը, զրկուել է Հայրենիքից։ Բանաստեղծի յանցանքը թուրքի համար հայրենիք չդարձած հայի Հայրենիքում ճշմարտութիւնն ասելն է, իր Հայրենիքը քարոզելը։ Թուրք քննիչը յամառօրէն պնդում է, թէ հայն այդ երկրում հող չունի, եւ բժիշկ Սեւակը կարող է փրկել կեանքը՝ իր ազգի պէս «անխոհեմ» չլինելու պայմանով։

Պետութիւնների բարեկամութիւնը յենուում է պետական յարափոփոխ շահերի վրայ, իսկ արդարութիւնը քաղաքական խաղերի հետ կապ չունի։ «Մենք ամէն միջոց պիտի գործադրենք եւ գնդակը դարպասը պիտի հասցնենք»,- պնդում է դեսպան Վանկընհայմը՝ համոզուած, որ «Հայ ժողովուրդը պատմութենէն արտաքսուած ժողովուրդ մըն է այլեւս»։ Խօսքի հետ բանակներ չեն կարող մրցել, խօսքի ազդեցութիւնից զարհուրում են անգամ պետութիւնները, ու բանավէճի երանգներ ունեցող զրոյցի վերջում տիկին Եանին համոզուում է՝ Հայը պիտի ապրի, իսկ ինքը հայ ժողովրդի բանաստեղծի գաւակներին Հայ պիտի մեծացնի, պարտաւոր է Հայ մեծացնել...

Պակաս գարշելի չեն դաւաճան հայերը. նրանցից մէկի ջանքերով ձերբակալուում է նաեւ Միկեր դարձած Միքայէլը, եւ դժբախտաբար բանտում, բայց այնուամենայնիւ միաւորուում են Հայաստան երկրի ապագայի երկու ամենայաղթ ուժերը՝ խօսքն ու զէնքը։ Ու այդպէս՝ միասին էլ դիմաւորում են մահը, քանզի Ռ. Սեւակ մարդու մէջ յաղթում է բանաստեղծը, անմահ բանաստեղծը, որի համար կեանքն անիմաստ է առանց խղճի, առանց սրբութիւնների։ Ռ. Սեւակի ու Վարուժանի թեւերին յենուած՝ կանգնած է Միկերը... Շարունակութիւնը յայտնի է. խաղաղ, լուռ այգաբաց

է. «Արեւն անգամ լո՛ւռ է»։ Լուռ է մարդու ու մարդկութեան խղճի պէս։

Մեծ եղեռնի անմեղ զոհերի արդար վրէժի կանչը երկի վերջում հնչում է Սեւակի «Ջարդի խենթ» բանաստեղծութեան տողերով։ Բանաստեղծի կրակոտ խօսքը կամուրջ է դառնում 20րդ դարի սկզբին եաթաղանազարկ ժողովրդի նահատակների եւ 21րդ դարի զաւակների միջեւ։ Յիշողութեան, ցաւի, վրէժի այդ կամրջով անցնում է պատմութիւնը՝ աշխարհի քաղաքական քարտէսի վրայ գծագրուած ազատ Հայաստանով, որը մեր ազգային վրէժի երկար ճանապարհի առաջին քայլն է։

***

1921ի Մարտի 15ին Պերլինում հնչեց կրակոց, որի արձագանգը հասաւ աշխարհի չորս ծագերում ապրող հայերի սրտերին։ Թուրքական նախճիրի ժամանակ հեղուած արեան ծովի համեմատ Հարտենբուրգ փողոցի սալայատակին յայտնուած արեան կարմիր շերտը չնչին է, ոչինչ է Հայը մարդ է սպաննել։

Հայ քաջորդին՝ Սողոմոն Թեհլիրեանը, մարդասպան չէ, վրիժառու է («Թեհլիրեան»)։

Քաղաքակիրթ կոչուող աշխարհի յամառ լռութիւնն ու 1915ի ողբերգութիւնը չճանաչելու անգիջող յամառութիւնը հայ ժողովրդի զաւակների սրտում բորբոքեց վրէժխնդրութեան կրակը։ Միամիտ ու լաւատես պապերի ոգով դաստիարակուած հայ երիտասարդը մարդասպան չի դառնում պարզապէս կատարուած ցեղասպանութեան վրայ մարդկութեան ուշադրութիւնը սեւեռելու ուրիշ միջոց չկայ։ Նախճիրի ականատես մի խումբ հայ երիտասարդներ վճռել են վրէժխնդիր լինել։ «Ամէն մէկուն հոգիին վրայ ժամանակի սպին կայ։ Անոնց համար եղեռնը վերացական բան մը չէ, այլ՝ հոգիներուն վրայ դրոշմուած վէրք։ Իսկ Սողոմոնը, Լիպարիտ, համա՛կ նուիրում է»,- ասում է երկի հերոսներից մէկը։

Սողոմոնը ապրում է դժուար օրեր ոչ մի կերպ չի կարող մոռանալ տեսած դժոխքը։ «Օր մը ըլլալ պատմութիւն կերտող ազգ, հո՛ղ ու ջո՛ւր սիրող, ա՛րտ մշակող, ցորեն ցանող, յետոյ դառնալ այսպէս թափառական՝ անցեալի մը հսկայ գեղեցկութիւնը միայն երազելով ...»,- մտորում է նա։ Մօր ուրուականը Սողոմոնի զրուցընկերն է, ու որդին երդուում է «Պիտի լուծե՛մ, լուծեմ՝ վրէ՛ժը արեան, վրէ՛ժը ազգիս։ Մա՛յր, հաւատա՛ ինծի, հաւատա՛ ինծի, Մայր ...»։

Դատարանում յաղթում է արդարութիւնը։ «Սողոմոնի մէջ մեր մշուշոտած արդարութեա՛ն կանչն է, որ կը լսուի։ Սողոմոնի զարկին մէջ մեր ջարդուած բանաստեղծներու պահանջող վրէժն է, որ կը բարձրանայ։ Մեր արնոտած պատմութիւնն է, որ կը բռնկի»։ «Մարդ մը սպաննած եմ, բայց մարդասպան չեմ»,- պնդում է Թեհլիրեանը դատարանում։ Յովհաննէս Լեփսիւսը դատարանում վկայում է, որ 1915ին կատարուած պետական ծրագրուած ցեղասպանութիւն էր, իսկ Սողոմոնը առաջին հայերից է, որ փորձում է պաշտպան կանգնել հայ ժողովրդի ազգային իրաւունքին։

«Մա՛յր,
Նահատա՛կ Մայրեր,
Սրբացա՛ծ Մայրեր,
Մեր կոչումը՝ Ձեր բեկուած երազները
կեանքի կոչել պիտ ըլլայ»,-
հայութեանն ուղղուած այս կոչով է աւարտուում երկը։

***

Աճապարանքով ու Երազից հեռու մեր օրերում դժուար է գտնել բանաստեղծական այն տողը, որ կ՚ապրի յիշողութեանդ ծալքերում։

Ես սորվեցայ չերազել ...

Սա բանաստեղծ Հրանդ Մարգարեանի տողն է։ Խոստովանեմ՝ տարիներ առաջ, երբ ձեռքս առայ «Ենթաեսէն փչրուած» տպարանահոտ ժողովածուն, թերթեցի, կարդացի, ուշադրութիւնս գրաւեցին առանձին պատկերներ, բայց անորոշութեան զգացում ունէի՝ ցաւի պէս չօշափելի։ Յաջորդ ամիսներին երբեմն-երբեմն վերընթերցում էի, սակայն չէի գտնում տողի, պատկերի, գրքոյկի բանալին։

Դուռ։ Բանալին հայի քառատուած հոգին է, որն իր մէջ պարփակում է բնօրրան՝ Վան անունով, ծննդավայր՝ Բասրա անունով, հասցէ՝ Նիւ Եորք ու ամենակարեւորը՝ Հայաստան աշխարհ։ Այս ամէնին զումարուում է մարդուն Մարդ տեսնելու երազանքը, որ անվերջ փչրուում է, բայց կայ, ապրում է ու ապրեցնում.

Մէջս ամէն ինչ արձագա՛նգդ է, ՄԱՐԴ։
Դժուար է հսկայ քաղաքի «յորձանուտ ծովուն մէջ» տեսնել, որ
Կառչած է մարդը
վրձինին,
խօսքին,
խելառ նօթերուն։
Եւ իր օրերուն կերպարը կը կերտէ։

«Խօսքին կառչած» մէկը՝ հայ մարդը, դառնում է յաւերժութեան մաս՝ միանալով երթին ինքնաթամբուած, ինքնապայտուած, սանձը բերաններին դրած այն ուղեւորներին, որոնք չհասկացան ձիու սլացքն ու ազատ հովի տենչը։

Աշխարհը դարձել է սին ու սնապարծ **Ես**-երի մրցադաշտ, որտեղ իշխում են կրկէսի անողոք օրէնքները, բայց բանաստեղծի համար թանկ են ձախողակները՝ ճանաչողութեան ու ինքնաճանաչողութեան ստոյգ ու փորձարկուած միջոցներով։ Ի՞նչ դափնիների մասին կարելի է երազել, երբ անկեղծութեան եզակի պահերն էլ դառնում են կեանքի թատրոնի մաս։ Դառն է գիտակցել, որ կեանքի «երեք քառորդը փչրուած անորոշին է նետուած», ու միակ յոյսը լռութիւնն է՝ «նոր արար մը սկսելու միտումով»։

Բնօրրանի յիշողութիւնները, որ անբաժան են մանկութիւնից, ծնողներից, խառնւում են էրգրի կարօտին, որ աղաջրի պէս չի յագեցնում, այլ աւելի է բորբոքում։ Աչքով տեսած աւերակների մէջ մեռնում են անցեալի յուշ ու յիշատակ, եւ անցեալի խորանի վրայ զոհաբերուում է ապագան. չէ՞ որ առանց երէկուայ փառքի անհասկանալի է այսօրը, իսկ ապագան երազ չէ, պատրանք չէ, ապրածի ու չապրածի իմաստնաւորուած չարունակութիւնն է։

Պատմական Հայրենիքի ցաւից անբաժան է Հայաստան երկրի ոչ վաղ անցեալի պատկերը, որ Հրանդ Մարգարեանի գրքում «Ժաժք» անունն է կրում՝ իրար յաջորդող ցնցումներով։ Զուսպ, արցունքները խնամքով թաքցրած, ցաւը, ճիչը չչուկի վերածած՝ յիշատակներով ապրում են կործանուած քաղաքը, բնաշխարհը ...

«Մենքութիւնը մեռած է, յաւերժ ապրի եսութիւն»,- սա դարի ու մարդկութեան սկզբունքն է, բայց Հրանդ Հայը դրա կողքին, դրան հակառակ՝ տեսնում է բռունցքուող Արցախ, ՏՂԵՐՔի յիշատակը պահելու ջանքեր։ Սրան յաւելուում են բանաստեղծի երկու հեքիաթները՝ «Շինահանդէս մեր տունը», «Մարդահանդէս»։ Հեքիա՞թ էր ծռած վզով աշխարհը ծուռ տեսնելու մեր յամառութիւնը, երբ ծուռ էր... մեր տունը։ Բանաստեղծը հարցի արմատները փնտռում է երկրի ու հողի տէր խենթի հետ անկեղծ զրուցելու, նրանից նաւի ու երկրի ղեկը վերցնելու անձնազոհ պատրաստակամութեան մէջ։ Այնինչ

կարծեցեալ այդ խենթը
կանչեց իր մեծ վեգիրը ...

Ես-երով հարուստ աշխարհում, փառք Աստծոյ, կայ ծովը։ Ծովը զրուցընկեր է, անհաս հորիզոն, խաղընկեր... Մարդն ու ծովը ձուլուած են հոգով, անբաժան են յաւերժի ու մահկանացուի կեանքի օրէնքով։ Ծովի հեքիաթի մէջ ապրում են նաեւ պատրանքները, եւ դրանցից ամենամեծը ովկիանոսի ափին աւազից չինած Արարատն է՝ հայ երեխաների թաթիկների ջերմութեամբ շնչող լեռը, որի գագաթը տեսնում են նաեւ անցնող նաւերը։ Նաւերն աշխարհին ու մարդկանց տանում են Արարատի պատկերը, որի մէջ կենդանի է բնօրրանի, պապերի շունչը։ Ծովի մէջ միաւորւում են ծանօթն ու անծանօթը, մօտիկն ու հեռուն, անցեալն ու ապագան, եւ կրկնուում է... կեանքը։

Գրքի վերջին պատկերը Մարդն է՝ բանաստեղծի կենսափորձով իմաստնացած ու հայի ազգային նկարագրով հարուստ Մարդը, որն ապրելու համար պէտք է ունենայ աստուածային համբերութիւն, համբերութիւն ու նորից համբերութիւն.

Դուրս ելայ՝
դուն՝ մարդ,
ես՝ աստուած։

***

Հայի քանի՛ սերունդ մտովի անցաւ 1915ի արիւնոտ ճամբաներով, քանի՛ զաւակի ու քանի՛ թոռան սիրտ ճմլուեց պապերի կենդանի ցաւից, քանի՛ հայ մտովի շրջեց էրգրով, ծարաւ շուրթերին զգաց հայրենի աղբիւրի համը, աշխարհի բոլոր սիրունսիրուն ծաղիկների մէջ գտաւ, տեսաւ դաշտային այն համեստ ծաղիկը, որի հոտն անցաւ ծովեր, ովկիանոսներ ու բնօրրանի բուրմունքով լցրեց աշխարհը։ Կարօտի բուրմունքով, կարօտի համով, որ շնչում է տաք թոնրի՝ հոգին ջերմացնող յուշերով, ունի լաւաշի համուհոտ ...

Տասնամեակներ անց ի՞նչ կարելի է տեսնել՝ կիսաքանդ կամ քարակոյտ դարձած շինութիւննե՞ր, հայրենի թանկ յիշատակնե՞ր, լսել օգնութեան կանչող ճի՞չը հողի, քարերի, աղբիւրների... Չգիտեմ։ Գիտեմ միայն, որ սահմանից այն կողմ փռուած հողերի վրայ քայլելու, անսովոր դիրքով Արարատը տեսնելու համար հոգու կորով է հարկաւոր։ Այլապէս ամէն վայրկեան բողոքելու, փաստերը հաստատելու (մնացածը լրացրէք ինքներդ) անմեղ ու մարդկային ցանկութիւնը կարող է շատ հեռուն տանել ...

Հրանդ Մարգարեանը էրգրում փնտռում է Հայ լինելու, Հայ մնալու կռուաններ-ը, որոնք հասկանալի են եղեռնազարկ ժողովրդի ամէն մի զաւակի։ Ու էրգրի պատկերի մէջ «տեսայ ես ինծի»՝ սա ապրելու համար «Քար, երազ եւ պատմութիւն» բանալին գտած հայի կենսաձեւն է, ապրելու, դիմակայելու կամքը։

Քարը հայի համար ունի մի հոմանիշ՝ գլխագիր ՀՈՂ։ Աւելի ճիշդ՝ ՀՈՂՍ։ Իմ ՀՈՂԸ, քո ՀՈՂԸ...Հողը, որ լուռ ու համբերատար դիմանում է, դիմադրում եւ ուրիշի հայրենիք չի դառնում։ Չի դառնայ՝ քարերի խօսելու ժամանակն էլ կը գայ։ Այնթապից Անի ձգուող ճանապարհի ուղեկիցներն են քարերը։ Մի բուռ քար կը հասնի Նիւ Եորք, ու կը շարունակուի վաղնջական ժամանակներից մինչեւ 21րդ դար ձգուող գրոյցը։ Հանդիպել են պատմութեան վկայ քարերն ու պատմութիւնն էլ առ էլ խմացող, յիշող Հայը։ Այո՛, յիշող։ Ի հեճուկս մոռացութեան հողմերի, որ ալեկոծում են աշխարհն ու մարդկութեան մեռած խիղճը։ «Քարաձայն պատարագը» այդ գրոյցի պատառիկներից է։

Անիի Ս.Փրկիչ եկեղեցին ...

Քարեր կ'առնեմ հետս Անիով տառապող ծանօթներուս տալու համար ...

Երազն անզօր է ծածկել իրականութեան գէշ դէմքը, բայց յամառօրէն ապրում է

էրգրի գաւակների հոգում։ Ապրում է աղօթքով, պատարագով, քարերի յամառ կամքով։ Հրանդ Հայը պապերի ընօրրանում իրագործում է սրբազան իղձեր՝ երգում է Անիի Մայրը տաճարում, մկրտուում Վանայ լճի մէջ, եւ ճակատագիրը պարգեւում է Աշճեան Սրբազանին սուրբ ջրով մկրտելու բացառիկ պատեհութիւնը... Երազը մարդուն տանում է երկնային անհաս ոլորտներ, ու ծնուում է Աղօթքը...

Թուում է՝ Երազը դառնում է իրականութիւն. «Հեռաճայնեցի Ժանէթին. «Ժա՛ն, Վանէն կը խօսիմ»։ Վանից։ Ո՞ր Վանից։ «Անողոք ժամանակի կապանքը բերնին դրած» Վանից, որի տէրերը՝ վանեցի երկու հայերը, պապենական տան մէջ խմում են ոչ մի լեզուով, բառերով չասուող կենացներ... Երազի պէս են նաեւ «մաքուր հնչաբանութեամբ եւ առոգանութեամբ» հայերէն երգերը՝ քրտերէն երգերի շարքում։ Բոլորովին ուրիշ է Հրանդի երգած «Տէր եամանը». ունկնդիրներն օտար են, բայց ծափահարում են հայերէն երգին։

Երազ է նաեւ Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին՝ «ճարտարապետ Մանուէլի մարդկային արուեստի ու մտքի հրաբուխը» տեսնելը։ Այստեղ՝ այս սրբավայրում, տարածուած է խնկահոտը. դա օրէցօր աւերակուող եկեղեցու, քաղաքի, հողի՝ դարերի ընթացքում ամբարած յիշողութեան խնկաբոյրն է, որ փռուել է բնօրրանի վրայ, շնչում է Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու որմնանկարների՝ կամաց-կամաց խամրող գոյներով ու հասնում Արարատին։ Երազն այս դէպքում դառնում է «հոգեքաղց թափառում» պապերի երկրում։

Պատմութիւնը քարտէսից դուրս է՝ փռուած բնօրրանի ամէն քայլափոխում, ամէն անկիւնում. ինչքան էլ ջանան ջնջել հայի ու հայութեան հետքերը, պատմութիւնը չի ջնջուում։ Անցեալի գաղտնիքները թաղուած են հողի մէջ, ապրում աւերակներում, իսկ Արարատի շուքը անցեալի ու ներկայի, Արաքսի երկու ափերին փռուած Հայաստան երկրի միասնականութեան շունչն է, ոգին ու վկան։

Մուսա լերան՝ դիւցազնամարտի յիշատակներով շնչող գիւղերում կան, ապրում են հայրենի հողի «վերջին պահակները»՝ «խնկելի մարդիկ», որ գաւակներ են մեծացնում՝ Հրանդի յիշողութեան մէջ մնալով որպէս երեք անբաժան սերունդների միասնութիւն։ «Հոգեխառն պահ մը»,- գրում է Հրանդը։ Ինչքա՜ն շատ են այդ անմոռանալի հանդիպումներն ու բաժանումները, ու ի՜նչ լաւ է, որ մարդկային սիրտը, Փառք Աստծոյ, դիմացել է ու դիմանում է...

Անարզաբա Կիլիկիայի բերդի աւերակներում «հայ զոյգ մը իր անհատական կեանքը պատմութեամբ կ՚օծէ». պսակադրութիւն է։ Մեսրոպ Աշճեան ուխտաւորը

Ափով սերմեր կը՛ցանէ վաղուան բացուող լոյսերուն...

Հաւաւում ծնուած Մարթայի գաւակն է Սրբազանը, ու դժուար չէ պատկերացնել, թէ ինչ փոթորիկ է ալեկոծում նրա հոգին, մինչդեռ շուրթերն աղօթք են մրմնջում։ Աղօթքի պէս ականջիդ են հասնում Նունուֆար Գէորգեանի՝ Հրանդի մօր խօսքերը Ս. Կարապետի վանքի ուխտագնացութեան մասին. «Հէ՜յ, էնքան մարդ կ՚երթէր։ Էլ ով կ՚ուզէիր կը տեսնայիր էնտեղ։ Պրթու աշխարհ էնտեղ էր»։ Իսկ հիմա հրաշագործ ու մուրազատուր վանքը որբ է. ուխտաւորները չեն կարող, աւելի ճիշդ՝ արտօնութիւն չունեն վանք գնալու, արտօնութիւն չունեն... իրենց կեանքը վտանգելու։

Պատմութեան էջերում ապրում են գրաւոր ու անգիր բազմաթիւ զրոյցներ։ Գրանցից մէկը կենդանի է նաեւ Նիւ Եորքի բնակարաններից մէկում. շուշանցու գաւակ Հրանդը պահում է տժգունած կալուածագիրը՝ հողի տէր լինելու իրաւունքի վաւերագիրը։ Այստեղ էլ եկեղեցին աւերակ է, այնինչ Մանուկ Մարգարեանի որդին լաւ է յիշում, որ հայրը եկեղեցում դպրութիւն է արել... Ապարանջան աղբիւրի, խաչքարի մասին քրտերն անորոշ բաներ են ասում. խզուել է ժամանակների կապը.

Պատմութիւնն անգամ.զլացուած է մեզի։

Խուլ ու համր է անիծեալ պատմութիւնը…

Խուլ ու համր է նաեւ «անիծեալ ներկան»։ Ամէն քարի տակ ոսկի փնտռող քրտերի համար պատմական Հայաստանի քարտէսը թաքցրած գանձերի ուղեցոյց է, ուրիշ ոչինչ։ Ուրիշի հողի վրայ գոյատեւող ցեղի համար զարմանալի զարմանք է, որ այս ամէնի օրինաւոր եւ օրինական տէրը Հայն է։ «Լա՛ւ, եթէ դուն հողը առնես, մենք ի՞նչ պիտի ընենք»,- հարցնում է զարմացած քիւրտը։ «Ինչո՞ւ, մեզի հարցնող եղա՞ւ որ …»,- երկրորդում է հարցը Հրանդը՝ հայրական գիւղից հեռանալով մի չիչ ջուր ձեռքին։ Ջուրը հասցրել է տուն … Ո՛չ, բնակարան, որ հայի համար կացարան է, բայց տուն չէ. այստեղ չկան պապերի շունչը, ծնողների օրհնութիւնը, երեխաների խաղերի, ծիծաղի ու լացի արձագանգները. «Որքա՜ն աղքատ եմ…»։

Հայաստան աշխարհի պատմութեան անմոռանալի էջերից են Այնթապի, Սուսա լերան, Ուրֆայի, Վանի, Շապին-Գարահիսարի հերոսամարտերը, երբ հայութեան ազատատենչ ոգին դիմակայեց ու յաղթեց։ Յաղթեց ու ապրում է սերունդների ծինային յիշողութեան, արցախեան ազատամարտի անձնազոհ հերոսացման մէջ։ Սա Արաքսի հոսանքով բաժանուած Հայոց հողի միաւորման ոգու ակունքն է։ Այդ ոգին է ապրեցնում աշխարհասփիւռ հայութեանը։

Երեւի ոչ բոլոր ժողովուրդների ներկայացուցիչները կարող են հասկանալ, թէ ի՞նչ են բնօրրանից մնացած մասունքները՝ մկրատը, տոպրակն ու «տժգունած կալուածի թուղթը»։ Հայրենիք կորցրած «հազար ու մէկ հոգիներու աչքերով» Հրանդը տեսնում է Հայաստան աշխարհի աւերակները։ Արթուն ու գիտակից (Հրանդի բառերն են) հայի յիշողութեան դաշտում ապրում, շնչում է ընաշխարհը. Հայն անծանօթ ու հոգու աչքերով հազար անգամ անցած ճամբաներով շրջում է գիւղից գիւղ, վանքից վանք… Նայում ու տեսնում տխուր ներկան, փորձում ամերիկացի ընկերոջը բացատրել, թէ ընիկ ժողովուրդը ինչ հրաշքով բնաշխարհից ոչ միայն վտարուել է, այլեւ ոչնչացուել են գրեթէ բոլոր յիշատակները։ «Մենք գոյութիւն չունինք անոնց համար»,- սա է դառը ճշմարտութիւնը։ Բայց դեռ կան պատմութեան լուռ վկաները, դեռ հոսում է «մարդակուլ գետը»՝ հազար-հազարների Անանուն Դամբարան Եփրատը, որի ափին հոգեհանգստեան արարողութիւն է կատարուում, ու տասնամեակներ անց գետի շառաչի հետ լսուում են… Գուցէ միայն հայերն են լսում որբացած էրգրի կանչը, կարօտի ձայնը, ցաւի մորմոքը։ Պոլսում սրան գումարուում է տեղի հայութեան «սակաւաթիւ գիտակից տարրի»՝ հայ ապրելու ճիգը, որ ծանօթ է Սփիւռքի բոլոր գաղթօջախներում ապրողներին։ Ցաւն անօրինակ է. տուն տանող ճամբան ձգուում է դէպի Նիւ Եորք։ Սա՞ է հայի տունը,- հարցնում է գրողը։ Պատասխանը կռահելի է։

*Հրանդ Մարգարեանի համար պատմութեան հին ու հինաւուրց էջերի կողքին ամէնից արժէքաւորը Հայաստանի Հանրապետութեան գոյութեան փաստն է։ Սա պատմական Հայրենիքում երկու ուղեւորութեան ընթացքում միայն մէկ անգամ **Հայ** բառը տեսած բանաստեղծի միաւորման կոչն է հայութեան աշխարհասփիւռ բեկորներին։*

Երեւան ***ՄԱՐԳՐԻՏ ԽԱՉԱՏՐԵԱՆ***

*Մեր խմբագրական կազմի ընկերը՝ Հրանդ Մարգարեան, պարգեւատրուած է ՀՕՄի Ամերիկայի Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան Ակնունի, Հայաստանի Ազգային Գրադարանի Յակոբ Մեղապարտի եւ Համազգայինի Կեդրոնական Վարչութեան շքանշաններով։

«Զորավարը» - Տպիս

ԵՐԳԻԾԱՆՔԻ ԼԵԶՈՒԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ Գ. ՄԱՀԱՐՈՒ ԱՐՁԱԿՈՒՄ

Գ. Մահարու արձակն անպատկերացնելի է առանց երգիծանքի։ Եթէ ասենք, որ նրա ստեղծագործութիւնը լի է երգիծանքի խօսքային արարման մի շարք հնարների վարպետ գործադրութեամբ, քիչ բան ասած կը լինենք։ Այդ արձակն ուղղակի ներծծուած է երգիծանքով, որը մահուրիաէան պատումի էական բնութագրերից է։ Այս առանձնայատկութեան նկատառումով է Գ. Աճեմեանը (գրողի որդին) Գ. Մահարուն համարում երգիծաբան[1]։

Ըստ էութեան՝ գրողի արձակին վերաբերող որեւէ հարց հնարաւոր չէ

քննել՝ անտեսելով առկայ երգիծանքը։ Սակայն, կարծում ենք, հագիւ թէ անառարկելի է Գ. Ահեմեանի տեսակէտը։ Ոչ այն պատճառով, որ արձակագրի երգիծելու տաղանդը կամ վարպետութիւնն է լրացուցիչ հաստատման կարիք զգում։ Այլ այն ակնյայտ պատճառով, որ նրա արձակում գերիշխողը կեցութեան դառնութիւնն ու ողբերգականութիւնն է։ Պատումի նրա զուարթ, խաղացկուն ոճը յաճախ քողարկում է իրականում ապրուած եւ ստեղծագործելու պահին վերապրուող անանց կսկիծ ու ցաւ։ Գ. Մահարու երգիծանքին յարմար է գալիս «ծիծաղ արցունքի միջից» (Գոգոլ) յայտնի բնութագիրը։ Ողբերգականի հեղինակային գիտակցումը եւ ապրումն այնքան խորն է, որ նրա երգիծանքը կարելի է նաեւ բնութագրել մարդկային հոգեկանի սահմանային վիճակի բանաձեւով՝ որպէս ծիծաղ, որը լացի աւելցուկն է[2]։ Ժամանակին այդ առանձնայատկութիւնը նկատել է Ս. Աղաբաբեանը եւ բնութագրել այսպէս. «... արձակագիրը (Գ. Մահարին - Ս.Ա.) յաճախ է ընտրում այնպիսի դրութիւններ եւ մատուցում հիւսուածքի մէջ, որոնք ծիծաղելի են արտայայտման ձեւով եւ կատարելապէս ողբերգական իրենց բովանդակութեամբ»[3]։

Կենսական հանգամանքի եւ մարդկային հոգեվիճակի բովանդակութեան ու դրա խօսքային ձեւակերպման այս հնարանքը կիրառելի է երկու տարբերակով։ Ոչ միայն իրական ողբերգութիւնը կարելի է նկարագրել երգիծանքի լեզուարտայայտչամիջոցներով, այլ նաեւ հակառակը՝ երգիծելին՝ որպէս ողբերգութիւն։ Հետաքրքիր է, որ դեռեւս վաղ միջնադարի մեր մատենագրութիւնն է երգիծելու այդպիսի հնարանքի օրինակ տալիս։ Ի պատասխան պարսից գօրավար Վախթանգի նամակի յաւակնոտ բովանդակութեան եւ ինքնավստահ ոճի՝ Վահան Մամիկոնեանը պատասխանում է. «Թէեւ Միհրանիդ մահուամբ շատ խնդացինք, բայց նոյնպէս էլ քո անմտութեանդ վրայ լաց եղանք...»[4]։

Գ. Մահարու երգիծանքը յաճախ ծնուում է ողբերգական հոգեվիճակի այնպիսի իրադրութիւններից, որոնք անբացատրելիօրէն կարող են նաեւ ծիծաղ յարուցել[5]։ Նրա արձակի իւրաքանչիւր էջում ազատօրէն չնչող երգիծանքի առկայութիւնը փաստելը դժուար չէ։ Սակայն դժուար է վերլուծել այդ երգիծանքը՝ տարանջատելով տեքստից։ Դժուար է եւ մարդկային հոգու վարքագծի, եւ լեզուական մարմնաւորման հնարների առումով։ Գ. Մահարու հերոսները, նկարագրած կենսական հանգամանքները միապլան, միանշանակ ու միագիծ չեն, ինչպէս որ չէ իր յաճախ նաեւ պարադոքսալ (տարօրինակ) լեզուամտածողութիւնը։ Նրա խօսքը յանկարծակի անցումներ ունի, ենթատեքստ, լեզուական չարաճճի խաղ։ Ակնյայտ է, որ Գ. Մահարին այն սակաւաթիւ վարպետներից է, ովքեր իրենց արուեստի արհեստին՝ լեզուն գործադրել-աշխատեցնելուն տիրապետում են եզակի հմտութեամբ։

Նրա արձակն ազատ-անկաշկանդ, ինքնաբուխ պատումի մի տարբերակ է, ուր զարմանալի ներդաշնակութիւն են լուրջն ու երգիծանքը, աննկատ ու անճիգ անցումը մէկից միւսին։ Քիչ է ասելը, թէ հեղինակը պատմելու, ասելիքը խօսքի վերածելու համար ջանք չի գործադրում։ Եթէ նոյնիսկ դժուար էլ չէ նրա արձակում ցոյց տալ էջեր, որոնց մէջ ասուածին կարող ես եւ չհամաձայնել, միեւնոյն է, հնարաւոր չէ չընդունել, որ ինքնաբուխ-ինքնօրինակ խօսքը նրա տարերքն է, բացարձակ ազատութեան նրա գոյակերպը։ Այդ յորդուն ազատութեան մէջ յաճախ չի էլ նկատուում մահարիական ժպիտի, հումորի, հեգնանքի, նոյնիսկ կսմիթների առատ, ասելիքին միաձոյլ ներկայութիւնը։

Գ. Մահարու եւ գրողական վարպետութեան, եւ արձակի ինքնատիպու-

թեան ցուցիչներից մէկն էլ երգիծանքն է, որին բնորոշ է լեզուական արտայայտման հնարների բազմազանութիւնը։ Բառագործածութեան մակարդակում այն ոչ միայն երգիծական բառարան է («Ազատ բառարան»[6]), այլ նաեւ միանգամայն ինքնատիպ բառախաղ։ Նրա արձակում բառախաղն ինքնանպատակ չէ, չի գործադրուում որպէս հայերէնին հրաշալի տիրապետելու կարողութեան ապացոյց։ Բառախաղի իւրաքանչիւր դէպք գեղարուեստական պատկերի կոնտեքստում որոշակի պատճառաբանութիւն եւ նպատակ ունի։ Գիտարկենք մի քանի օրինակ։

Երբեմն այն ուղղակի անմեղ հումորի, կատակի բովանդակութիւն ունի, ինչպէս «ածող օրիորդի» հպանցիկ պատմութիւնը (2, 83)[7]։ Պատկերը կառուցուել է «ածել» բառի բազմիմաստութեան վրայ։ Բառախաղի մի այլ եւ պատմուածքի բովանդակութիւնը համապատասխան օրինակ է «մուդռի»-«մունդռիկ» (5, 249) զոյգը։ Աքսորավայրից տնեցիներին մշեցի Առաքելի գրած փոխաբերական նամակում առօրեայ երգիծանք է դա։ Որոշակի հեգնանքով չաղախուած այս բառազոյգը Գ. Մահարու արձակում Ստալինին վերաբերող թերեւս ամենամեղմ երգիծանքն է։

Ասես նոյնպիսի մի կատակ է եւ «որս է» բառի կոչտ, «նենգափոխուած» (5, 125) արտասանութեամբ ստեղծուած բառախաղը։ Բայց իրականում գգալիօրէն հենց նրանով է ամբողջանում պատկերի բովանդակութիւնը։ Անարդար երկրում յանիրաւի բռնադատուած քիմիկոս գիտնականն այնքան ազնիւ է, որ թէեւ վատառողջ, չի համաձայնում դառնալ գրասենեակային կալանաւոր՝ աշխատել գրասենեակում։ Այդ բառախաղով ինքն է հեգնում կալանաւորի (այն էլ՝ քաղբանտարկեալ) գրասենեակային տեսակը։ Պատիժն անարդար է, բայց ինքն այն կրում է ազնուօրէն... ու մեռնում՝ ֆիզիկապէս չդիմանալով։ Ի միջի այլոց, Գ. Մահարին այս բառախաղը մի անգամ էլ օգտագործել է «Այրուող այգեստաններ» (1935-1964) վէպում՝ որպէս Օհանէս աղայի դժգոհութեան արտայայտման հնարանք[8]։

Բառախաղից ի հարկէ տարբեր, բայց բառի մակարդակով երգիծանքի շրջանակներում դիտարկելի է արձակագրի յաճախակի գործադրած հնարանքներից մէկը եւս։ Խօսքը վերաբերում է բառի անսպասելի, հնարամիտ, ասես «ոչ իր տեղում» գործածութեանը։ Սակայն ամէն ինչ աւելի բարդ է, գրողական անզուգական վարպետութիւն պահանջող, քան կարող է առաջին հայեացքից թուալ։ Այդ հնարանքը կարելի է պայմանականօրէն անուանել բառագործածութեան երգիծանք։ Իւրաքանչիւր դէպքում բառն ըստ գործածութեան ձեռք է բերում ենթատեքստային, իրադրական-լրացուցիչ իմաստ, որն էլ դառնում է առաջնային։ Յաճախ հենց այդ բառն է պատկերի առանցքը, հեղինակի մտայղացումն իրագործող գլխաւոր միջոցը։ Այդպիսի մի քանի պատկերներ դիտարկել ենք հեղինակի քաղաքական երգիծանքի վերլուծութեան առիթով։ Մասնաւորաբար, Օհանէս աղայի աւանակին Սիմոն եւ Փանոս աղաների աւանակների ձայնակցութեան պատկերը, որը կառուցուած է «նախաձեռնող մարմին»[9] բազմախօսուն արտայայտութեան վրայ։ Սպանդանոց տարուող հարբուխ ընկած այծի պատկերի առանցքը «բնական լաւատեսութեամբ»[10] գոհի օժտուած լինելն է։ Օհանէս աղայի եւ Արամի հանդիպումը մի քանի առանցքներ ունի՝ «նշանաւոր մարդ», «մեծ մարդ», «մեծ գործիչ», «անկատար նահատակ», «անցեալ կատարեալ նահատակ»[11]։ Եթէ այս դէպքերում ակնյայտ է հեգնանքը (իրոնիա), ապա «Վասպուրական» անուան Գէորգ վարժապետի մեկնութիւնը («երկիր որ-

դուց մեծամեծաց»)[12] իրականացուել է սարկագմով (կծու ծաղր)։

Երգիծանքի այս հնարանքը Գ. Մահարին յաճախ կիրառում է հերոսների նաեւ կենցաղային, առօրեայ կեցութիւնը նկարագրելիս։ Վանահայրը հրամայում է վանքի տնտեսութիւնում աշխատող եւ իրար հետ կռուած երկու կանանց խոստովանութեան գալ իր մօտ։ Նրանցից մէկին՝ Գողիկին նա երկար է պահում իր մօտ։ Գրողը տալիս է ենթադրական բացատրութիւն («... երեւի չա՜տ էին սիրուն Գողիկի մեղքերը...»[13]՝ միաժամանակ ի հարկէ ընդգծելով հենց մեղքերի սիրունութիւնը։ Ընդ որում, «մեղքեր» ասելով ակնյայտօրէն այլ բան նկատի ունի, որի վերաբերեալ ասուած «սիրուն» բառը ճիշդ տեղում է։ Թէկուզ վանահայր, բայց Աղթամարի կաթողիկոսական տեղապահ Արսէն հայր սուրբն էլ երկրային մարդ է։

Երգիծական գրականութեան մէջ տարածուած եւ լաւ յայտնի հնարանքներից է խօսքի եւ դրութեան կոմիզմը (երգիծանք)։ Գ. Մահարին յաճախ է հմտօրէն օգտուում այդ հնարանքից։ Սիմոն եւ Փանոս աղաներն արդէն ստացել են «քոլոզների» գրութիւնները, եկել են Օհանէսի մօտ՝ խորհրդակցելու։ Վերջինս ուշք ու մտքով իր նորածնի հետ է, այդ առիթով թեւածող ուրախութեան մէջ։ Այցելուների կիսաբերան-ակնարկներով խօսքը չփոթեցնում է Օհանէսին, ստեղծում երգիծական իրավիճակ։ Նրանք եկել են այլ առիթով, խօսում են այլ բանի մասին, իսկ տանտէրը նոյնիսկ չփոթուում է՝ մտածելով, թէ նրանց սասծը վերաբերում է երեխայ ունենալու մասին իր տեղեակութեանը։ «Այրուող այգեստաններ»ի (1935-64) Երկրորդ ասքի այս պատկերը համեմատաբար չէզոք երգիծանք է։

Այդպիսի կենցաղային, ոչ քաղաքական բովանդակութեամբ դրութեան կոմիզմի (երգիծանքի) բազմաթիւ յաջողուած օրինակներ կարելի է ցոյց տալ հենց միայն վերոյիշեալ վէպում։ Իրաւաբան Հրանտը դժուար կացութեան մէջ է, որովհետեւ ստիպուած է հնարաւորինս նուրբ ու զգուշաւոր բացատրութեամբ Օհանէսին հասկացնել, թէ ինչ «գէշ հիւանդութեամբ» է վարակուած եղել Պոլսում ինքնասպան դարձած նրա եղբայրը (Ասք վեցերորդ)։ Հակասական ապրումներով լի օրուայ վերջը երեք նշանաւոր վանեցիները որոշում են նշել «Ասկերան» կազինոյում։ Նրանք դեռ չգիտեն, որ իրենց համար օրը չի վերջանալու կազինոյի ժամանցով, որ առջեւում ուրիշ փորձութիւն կայ։ Բայց մինչ այդ, երբ դուրս են գալիս կազինոյից՝ մի քիչ գինովցած, մի քիչ ինքնավստահ ու ապագայի համար խաղաղուած, ընկնում են կենցաղային ծիծաղելի իրավիճակի մէջ։ Նրանք չփոթում են իրենց գրաստները (Ասք իններորդ)։

Բոլոր այս օրինակները վիպական հիւսուածքում մի կարեւոր օրինաչափութիւն են հաստատում։ Վերոյիշեալ ասքերից ոչ մէկը ծայրեծայր երգիծական չէ։ Գ. Մահարին այնպէս է կառուցում հերոսների վիպական կեանքը, որ իւրաքանչիւր օրուայ մէջ իրարից տարբեր, նոյնիսկ հակասական կենսական իրավիճակները հերթագայում են միմեանց։ Արձակագիրը նոյնիսկ մէկ իրադրութեան մէջ է ցուցադրում կենսական տարբեր իմաստների առկայութիւնը։ Հանգամանքների, հերոսի վարքի ու ներաշխարհի հեղինակային «տարընթերցումների» տաղանդը լաւագոյնս արտայայտուել է երգիծանքի այս հնարքում։ Հերոսների կեանքը լի է համոզչօրէն իրար հերթագայող եւ երգիծանքով, եւ դրամատիզմով, ե՛ւ ողբերգականութեամբ, նաեւ ոչնչով չնչանաւորուող առօրեականութեամբ։ Գ. Մահարին զարմանալիօրէն վարպետ է այդ ամենի գեղարուեստական մարմնաւորման մէջ։ Բնորոշ օրինակ է վէպի քսանվեցերորդ ասքի վերջին պատկերը։ Օհանէս աղան ռուսական որեւէ քաղաքում նոր

գործ սկսելու մտմտուքով է լցուած։ Գալիս է նրա խանութի արդէն նախկին կառավարիչ Սեթը՝ գովաբանելու Օհանէսին, որ եւ համաձայնել է Վերժինի ու Յակոբ Կանդոյեանի ամուսնութեանը, եւ յանձն առել հարսանիքի ծախսերը։ Երկուսի միջեւ ծաւալուում է թիւրըմբռնման մթնոլորտ։ Մեղաւորը Կանդոյեան Յակոբն է, որը Օհանէս աղայի հետ դրանից առաջ ունեցած զրոյցը տարածել է Վանով մէկ՝ ամէն ինչ մեկնաբանելով իրեն ձեռնտու եւ ցանկալի ձեւակերպումով։

Գ. Մահարու ստեղծագործութեան մէջ դրութեան կոմիզմի (երգիծանքի) ոչ մի պատկեր ինքնանպատակ չէ։ Սակայն դրանց մէջ ոչ միայն լեզուական կատարմամբ, այլ նաեւ գաղափարական նպատակադրմամբ առանձնացողներից է տասնութերորդ ասքի պատկերը։ Նախ Արամ-Մաքրուհի փոխյարաբերութիւնը գիշերային երկխօսութեան ձեւով։ Այստեղ Մաքրուհու հիացումն իր հերոսով, նրա ճակատագրով մտահոգութիւնը, որ միանգամայն անհարկի է, անկարեւորը, ցածրը կարեւոր ու երեւելի դարձնելու ծիծաղելի իրադրութիւնը։ Տեսարանի հրաշալի աւարտը կայանում է խօսքի կոմիզմով (երգիծանքով)։ Արամի արտասանած Vanitas vanitatum («ունայնութիւն ունայնութեանց») բառակապակցութիւնը Մաքրուհին հասկանում է իւրովի, որից աւելանում է կանացի մտահոգութիւնն իր խնամակալի համար «- Ինչ ասա՞ց, Վանի թաս, Վանի թութո՞ւն... չլինի՞ խեղճ մարդ խելագարուի...»[14]։

Գ. Մահարին այսքանով չի աւարտում։ Հերոսուհուն հետեւելով՝ ձեւաւորում է մի նոր պատկեր՝ այս անգամ արդէն նկարագրելով ամուսնու՝ Սեդրակ աղայի կենսական խնդիրը։ Իսկ դա պարզից էլ պարզ է. կինն իրեն դաւաճանում է, եւ ինքը դա գիտի։ Գիտի նաեւ ողջ Վանը։ Բայց Սեդրակ աղան նաեւ հասկանում է իր դրութեան ամբողջ նրբութիւնն ու գտել է դրա փիլիսոփայական ճիշդ ձեւակերպումը. «Վերը թքեմ՝ Աստուածն է, վարը թքեմ՝ մօրուքս»[15]։ Պատկերը շարունակուում է մինչ յաջորդ ասքը եւ ամբողջացնում թուլամորթ, կարծիքից ու կամքից զուրկ մարդու նկարագիրը թէ՛ տանը, թէ՛ համաքաղաքացիների հետ յարաբերութիւններում, թէ՛ ինքն իր ներաշխարհում։ Յաջողութեամբ մտածուած դրութեան ու խօսքի կոմիզմի (երգիծանք) հնարանքներով արձակագիրն ստեղծում է կերպար, որի կենսական իրադրութիւնն ինքնին ողբերգական է, սակայն մատուցուում է որպէս զաւեշտ։ Ողբերգութեան եւ երգիծանքի սահմանագծում յայտնուած այս հերոսի վիճակը համընկնում է Ա. Բերգսոնի նկարագրած երգիծական ստանդարտ դէպքերից մէկին։ Ելնելով նրանից, որ երգիծանքն ուղղորդուում է ընկալողի գիտակցութեանը եւ անհամատեղելի է հոգեկան ապրումների հետ, նա պնդում է, որ աննշան անգամ արատի նկարագրութիւնը, որը կարող է յուզել, համակրանք առաջացնել, այլեւս չի կարող ծիծաղ առաջացնել։ Եւ հակառակը։ Անգամ ամենամերժելի արատը, եթէ ներկայացուի այնպէս, որ ընկալողն անհաղորդ մնայ, կարող է դառնալ ծիծաղելի։ «Այն (արատը - Ա.Ս.) չպէտք է յուզի. ահա միակ, իսկապէս անհրաժեշտ պայմանը...»[16],- ամփոփում է Ա. Բերգսոնը։ Գ. Մահարու Սեդրակ աղան մարդկային էութեան եւ վարքի բազմազան արատների ամբողջութիւն է։ Բայց նրա կեցութիւնը չի յուզում, չի առաջացնում կարեկցանք կամ համազգացում։ Դրանում, ի հարկէ «մեղաւոր է» Գ. Մահարին։

Խօսքի եւ դրութեան կոմիզմի (երգիծանք) համադրումով երգիծական պատկերներ կառուցելը չի մնում եզակի օրինակների չրջանում։ «Ծաղկած փշալարեր» (1965) վիպակի այդպիսի հետաքրքիր պատկերներից է «ուտուչ-

խմուչի» փիլիսոփախոհարար Մեսրոպի գլխին եկածի նկարագրութիւնը։ Սրա եւ պատմող հեղինակի միջեւ փոխըմբռնման դժուարութիւնը հետեւանք է Մեսրոպի՝ սեւծովեան ափի հայկական բարբառներից մէկի սահմաններում հայերէնն իմանալը։ Պատկերում դրութեան կոմիզմն (երգիծանք) աւելի է ընդգծուում Մեսրոպի յուսահատական զարմանքով. «Ծօ, դու փոսփոլն է՞լ չգիտես ինչ է, ի՞նչ հայ ես...» (5,130)։ Մինչդեռ եղելութիւնը կենցաղային մի բան էր. փոսփոլները (մկները) կերել էին Մեսրոպի հոգապահուստ կոստիլները (կարտոֆիլները)։

Գ. Մահարու երգիծանքում լաւագոյնս յաջողուող երգիծական հնարանքներից է հեգնանքը։ Նա կարող է այնքան տեղին ու դիպուկ հեգնել անհրաժեշտը, որ յաճախ անէականը, հենց այնպէս շարադրուած ծիծաղելին դառնում է գաղափարական բեռի՝ ասելիքի հսկայական բաժինը կրողը։ Այդպէս Գ. Մահարին հեգնում է ոչ միայն բռնադատուածի, երկրից, կեանքից մեկուսացուածի իր անձը (5, 330)։ Առաւել տպաւորիչ եւ հեգնանքի անմոռանալի օրինակ է «Մշեցի Առաքելը եւ ուրիշները» (1965) պատմուածքի նամակը։ Հերոսի թելադրած նամակի տեքստը ձեւաւորուում է իրենց թշուառ կեցութեան այլաբանական նկարագրութեամբ։ Առաջին հայեացքից թուում է, թէ հեգնանքը վերաբերում է հենց միայն այդ կեցութեանը։ Բայց Գ. Մահարին դրանով չի բաւարարուում։ Հնարամտօրէն մտածուած պատկերի հեգնանքը նա ուղղորդում է գլխաւոր մեղաւորի՝ «դարագոյ հօր» դէմ։ Այս ուղղորդուածութեամբ հեգնանքն աւելի է թանձրանում հերոսի համոզմունքի ճիշդ հակառակ բովանդակութիւնն ունեցող խօսքով. «Մեր մեծ հայրը չի թողնի, որ մենք սիրիրներում կորենք գնանք...» (5, 249)։

Գ. Մահարու արձակում հնարաւոր չէ անտեսել կենցաղային նիւթով ձեւաւորուած երգիծանքը։ Այստեղ գրողը պատկերը «հաւաքում է» կենսական ու գրական ոչ նշանակալի մանրամասնութիւններից՝ լեզուական կոլորիտ, կենցաղային, առօրեայ հանգամանք, հերոսի կենսափորձին բնորոշ վարք ու փիլիսոփայութիւն։ Այդպիսի բնորոշ օրինակ է Վանում Վ. Շեքսպիրի բեմադրուած «Օթելլո»յի ընկալման կերպը։ Երգիծանքը սկսուում է նրանից, որ բեմի վրայ խաղարկուող տեսարանը վանեցի հանդիսատեսն ընկալում է շատ անմիջականօրէն՝ որպէս ռէալութիւն, իրականութիւն։Թատերական պայմանականութիւն գոյութիւն չունի, հերոսներին վերաբերուում են որպէս իրենց ժամանակակիցների։ Գրանից էլ այն կենսափիլիսոփայութիւնը եւ «թատերագիտական» ինքնավստահութիւնը, որով Սարգիս աղան խրատում է Եագօ մարմնաւորած իր որդուն[17]։ Նոյնպիսի կենցաղային մի երգիծանք էլ խօսքաշէն ու սրամիտ վանեցիների օգնութեամբ Գ. Մահարին ծաւալում է իր հայրենակիցների բառապաշարը թարմացրած նորամուծութիւնների՝ «պրոպականտա», «տէռոր» եւ «պանթէոն» բառերի օգնութեամբ։ Միայն թէ այս դէպքում արձակագիրը պատկերն աւարտում է Վանի նշանաւոր մարդկանցից մէկի՝ Յակոբ Կանդոյեանի քաղաքական կսմիթով[18]։

Գ. Մահարու երգիծանքի մասին խօսելիս պիտի նկատի ունենալ այդ երգիծանքի ամբողջացման համար էական նշանակութիւն ունեցող մի կարեւոր գործօն եւս։ Խօսքը վերաբերում է երգիծանքի արտալեզուական միջոցներին՝ շարժուձեւ, միմիկա (դիմախաղ), խօսքի հնչերանգ եւ այլն։ Պարզ է, որ թուարկուած միջոցները դրսեւորուում են առաջին հերթին բեմական արուեստներում։ Ասելիքի մարմնաւորման ու կերպարակերտման համար սրանք

կարեւոր եւ նշանակալի են այնքան, որ անգամ առանց խօսքի հետ համադրման էլ դարձել են որոշ արուեստների (մնջախաղ, պար, ծաղրածուութիւն եւ այլն) գոյութեան եւ գործառնութեան գլխաւոր միջոց։ Հասկանալի է, որ վերը թուարկուած արտալեզուական միջոցները խօսքարուեստում չեն կարող նոյն առաջնահերթութիւնն ունենալ։ Դրանց ընկալման կարեւորագոյն նախապայմանը՝ տեսանելիութիւնն ու լսողական տպաւորութիւնն այստեղ չեն կարող անմիջական հաղորդակցման կարեւորութիւն ունենալ։ Սակայն վարպետ գրողը կարող է իր խօսքով լրացնել գեղարուեստական խօսքով ստեղծուող պատկերներին բնորոշ տեսանելիութեան եւ բանաւոր խօսքի կենդանի հնչերանգի լսելիութեան պակասը։ Այս առումով եւս Գ. Մահարու արձակը նշանակալի է։ Որտեղ անհրաժեշտ է, նա դառնում է համբերատար ու մանրակրկիտ շարադրող, հերոսի ներաշխարհին համարժէք վարք ու միմիկայի (դիմախաղ), խօսքային հնչերանգի նկարագրող։ Թերեւս տեղին է նկատի ունենալ նաեւ այն, որ երգիծանքի միջոցների բաժանումը լեզուականի եւ արտալեզուականի, զգալի չափով պայմանական է։ Թէկուզ եւ հենց այն էական պատճառով, որ գեղարուեստական տեքստում երկուսն էլ ստեղծուում են հեղինակի կամ հերոսների լեզուանիւթով։ Օրինակ, երգիծանքի այնպիսի տարածուած ստանդարտ ձեւեր, ինչպէս ասենք, դրութեան եւ խօսքի կոմիզմը (երգիծանք)։ Եթէ առաջինը տեսանելի է, կայանում է հեղինակի նկարագրող խօսքով, ապա երկրորդը հաւասարապէս հնարաւոր է նաեւ հերոսների մենախօսութեան կամ երկխօսութեան ձեւով։

Յամեմայն դէպս, դիտարկենք պայմանականօրէն արտալեզուական անուանուած երգիծանքի միջոցներից մի քանիսի առկայութիւնը Գ. Մահարու ստեղծագործութիւններում։ Այսպէս, հնարաւոր չէ չնկատել դատապարտուած քաղաքական «յանցագործ» պրոֆեսոր քիմիկոսի տխուր-չարաճճի, «մանկական, վարակիչ» (5, 125) ժպիտը, որն իր փիլիսոփայութեան եւ բառախաղի հետեւանքն է։ Բայց ժպտում է ոչ միայն հերոսը, նաեւ հեղինակը։ Գ. Մահարու տեղին եւ բազմանշանակ ժպիտի մասին բառացի ակնարկ-նկարագրութիւն կարող է եւ չլինել։ Բայց չարաճճի, ոչ անտարբեր հեղինակային խօսքը տողերի ետեւում յաճախ դժուարութեամբ է թաքցնում Գ. Մահարու ժպիտը։ Ինչպէս, օրինակ, Դողիկի սիրուն մեղքերի մասին ակնարկը։ Ճիշդ այդպէս էլ հնարաւոր չէ չտեսնել «... ցուցամատը սեփական գլխից բարձր բռնած»[19] եւ բառերը հատիկ-հատիկ արտասանող Գէորգ վարժապետին ողջ «հմայքով», երբ ստուգաբանում է «Վասպուրական» բառը։ Վարքի, մարմնի կեցուածքի, շարժ ու ձեւի, դէմքի արտայայտութեան տեսանելիութեան եւ ըստ տեղին միանգամայն պատճառաբանուածութեան առումով անմրցելի է Սեղրակ աղան։ Տասնութերորդ ասքի 2-րդ եւ 3-րդ մասերը նուիրուած են այս հերոսի մտքերի, հոգեկանի եւ կենսակերպի նկարագրութեանը։ Կամազրկութեան, ապուշութեան, ինքնախաբէութեան եւ նման այլ արատների մարմնացում այս վանեցին այնքան ամբողջական, անթերի եւ տեսանելի է վէպի այդ մի քանի էջերում, որ ասես խաղում է բեմի վրայ եւ ոչ թէ տող առ տող «հաւաքուում» հեղինակի գործադրած բառերով։

Օրինակները կարելի է բազմապատկել. դրանք նորից ու նորից կը գան հաստատելու արդէն ասուածը։ Այն, որ Գ. Մահարին կերպարակերտման մէջ հմտօրէն գործածում է նաեւ արտալեզուական միջոցները։ Թէեւ դրանք երգիծանքի ձեւաւորման լեզուական միջոցների համեմատ երկրորդ պլանում են, բայց էա-

ԲԱԳԻՆ

կան նշանակութիւն ունեն մահարիական երգիծանքի ձեւաւորման մէջ։

Ինչ խօսք, Գ. Մահարու արձակում երգիծանքի լեզուական միջոցներն այս յօդուածում նկատուածներով չեն սահմանափակուում։ Ոճական աւելի մանրակրկիտ ուսումնասիրութեան դէպքում կարելի է աւելի հարուստ նիւթ փաստարկել։ Մենք անդրադարձանք լեզուական արտայայտման միայն այն միջոցներին, որոնք աւելի յաճախակի են հանդիպում։

ՍԵՐԳԷՅ ԱՂԱՋԱՆԵԱՆ

1 Աճեմեան Գ., Մահարու հումորը։ Տե՛ս Գ. Մահարի, «Երգիծանք եւ հումոր», Ե., 2004թ., էջ 5-8։

2 Մարդու հոգեկան վարքի պարադոքսալ դրսեւորումներից այս մէկը վաղուց է նկատուել։ Մասնաւորաբար, ասացուածքի ուժ ունի ժողովրդական հետեւեալ խօսքը. «Ծիծաղի վերջը լացն է»։ Գ. Մահարու արձակում առկայ է հակառակ իրավիճակը։

3 Աղաբաբեան Ս., Գուրգէն Մահարի, Ե., 1959թ., էջ 121։

4 Մամիկոնեան Յովհ., Տարօնի պատմութիւն, Ե., 1989թ., էջ 83։

5 Գ.Մահարու արձակի այս առանձնայատկութեան մասին աւելի մանրամասն տես հեղինակի «Գ.Մահարու երգիծանքի իւրօրինակութիւնը» յօդուածում (ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազօտութիւնների կենտրոնի Գիտական աշխատութիւններ, 2007թ., հ. X)։

6 Մահարի Գ., Երգիծանք եւ հումոր, Ե., 2004թ., էջ 207-213։ «Ազատ բառարան» բաժնում բառերի վերաիմաստաւորումներն իրականացուել են երգիծանքի որոշ հնարանքների գործադրմամբ։ Հարկ է նաեւ նկատել, որ բազմաժանր այս ժողովածուն լի է երգիծանքով։ Այդ ստեղծագործութիւնները գրուել են հասարակական ու գրական կեանքին համընթաց։ Սակայն դրանք գեղարուեստական արձակի մեջ ներառելի չեն, որի պատճառով էլ ժողովածուի գործերին չենք անդրադառնում։

7 Այստեղ եւ այսուհետ առաջին թուանիշը Գ. Մահարու Երկերի ժողովածուի հինգհատորեակի (1966-89) համապատասխան հատորի, երկրորդը՝ էջի համարն է։

8 Մահարի Գ., Այրուող այգեստաններ, Ե., 2004թ., էջ 172։

9 Մահարի Գ., Այրուող այգեստաններ, Ե., 2004թ., էջ 164։

10 Մահարի Գ., Այրուող այգեստաններ, Ե., 2004թ., էջ 165։

11 Մահարի Գ., Այրուող այգեստաններ, Ե., 2004թ., էջ 201-204։

12 Մահարի Գ., Այրուող այգեստաններ, Ե., 2004թ., էջ 97-98։

13 Մահարի Գ., Այրուող այգեստաններ, Ե., 2004թ., էջ 103։

14 Մահարի Գ., Այրուող այգեստաններ, Ե., 2004թ., էջ 369։

15 Մահարի Գ., Այրուող այգեստաններ, Ե., 2004թ., էջ 370։

17 Մահարի Գ., Այրուող այգեստաններ, Ե., 2004թ., էջ 297-298։

18 Մահարի Գ., Այրուող այգեստաններ, Ե., 2004թ., էջ 302-303։

19 Մահարի Գ., Այրուող այգեստաններ, Ե., 2004թ., էջ 97։

ԱՆՏԵՍՈՒՈՂ ԽՈՐԻՄԱՍՏ ՄՇԱԿՈՅԹ ՄԸ՝ ՄՆՆԴԱՌՈՒԹԻՒՆԸ ՀՈԳԵԿԱՆ ԵՒ ԿՐՕՆԱԿԱՆ ԸՄԲՌՆՈՒՄՆԵՐՈՒ ՈՒՂԻՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

Կրօններու եւ հոգեկան հիւանդութիւններու միջեւ եղած կապը յաճախ լռութեամբ կը դիմաւորենք։ Այսպէս, երբ կը լսենք՝ «Բժիշկ, անօթի չեմ» խօսքը, կը մտածենք ֆիզիքական պատճառներու մասին եւ այդպէս կ՚ուզենք դարմանել։ Մինչդեռ սննդառութիւնը, իր բազմապիսի արտայայտութիւններով, պարզ, աննշան եւ սովորական ընթացք մը չէ։ Ան ձեւով մը կը դարպասէ կեանքը եւ մահը միաժամանակ, սերտօրէն կ՚առընչուի անոնց։ Մտածենք այն երեւոյթին մասին որ կը պարզուի ամէն ատեն, իւրաքանչիւր անձի համար՝ կ՚ընդունինք սնունդ մը, զոր պիտի քանդենք, մարսողութեան ճամբով պիտի փճացնենք։

Այն պահուն երբ սրբացման ըմբռնումը կ՚ունենանք, նաեւ սնունդը կը դրոշմենք ընդունելիի եւ մերժելիի ի վերուստ ստացուած օրէնքներով, կը ստեղծուի ինքնատիպ յարաբերութիւն մը, տեսակ մը քերականութիւն, մարդու մտածական աշխարհին եւ իր սնունդին միջեւ։

Բոլոր կրօնները սննդականոնի օրէնքներ եւ թելադրութիւններ ունին, արտօնեալի եւ արգիլեալի սահմանագծումներով, ճշդելով սննդատեսակները, պատրաստութեան ձեւերը եւ սպառման օրերը։ Միաստուածեան առաջին կրօնք հանդիսացող հրէութեան գոյգ սուրբ գիրքերը, Թորան եւ Թալմուտը, սննդականոնի պատուիրաններ ունին, յստակութեամբ կը ճշդեն արգիլեալ սնունդի տեսակները։ Կենդանիները ճշգրտօրէն դասակարգուած են՝ ցամաքային, ջրային, միջատներ եւ թռչուններ։

Առաջին «արգելք»ը կը վերաբերի արեան, որ «պիտի չուտուի եւ պիտի չխմուի» (միսը իր արիւնով), որուն ճակատագիրն է հոսիլ եւ վերադառնալ հողին, կենդանիներու զոհաբերման ընթացքին (հոսեցնելու համար անոր արիւնը)։

Կը հետեւին այլ կանոններ։ Այսպէս՝

Կարելի է ուտել միայն այն կենդանիները

որոնք կճղակաւոր են, այսինքն ոտքի ծայրի կոտոշը երկուքի ճեղքուած է, եւ կ՚որոճան։ Այսպէս, ուղտը (ինչպէս ձին եւ նապաստակը) որոճացող է, բայց կճղակաւոր չէ (անոր ոտքերը օժտուած են մատներով, որոնք հաստ բարձիկներ ունին այրող աւազին վրայ քալելու համար), կամ խոզը՝ որ ճեղքուած կճղակներ ունի, բայց չ՚որոճար, արգիլուած է ուտել։

Ջրային կենդանիներէն կարելի է ուտել միայն անոնք որոնք թեփ ունին, խեցեմորթները կարելի չէ ուտել, ինչպէս նաեւ օձաձուկը՝ որ ողնայար չունի։

Արգիլուած է ուտել մսայինի եւ կաթնեղէնի խառնուրդը։

Ինչպէս կը տեսնուի, կայ սննդականոնի քերականութիւն։

Այս բոլոր արգելքները կամայական կանոններ են, բացատրութիւն չունին, աստուածային հրամաններ են։ Հրէական կրօնքին մէջ, Օրէնքի առարկան ընդհանուր բնոյթ ունի, բարոյական գնահատումներով չ՚առաջնորդուիր, մինչ իսլամական կրօնը, մասնաւորաբար խոզի պարագային, մեկնելով Աստուածաշունչի տուեալներէն, կը դիմէ նաեւ արժեւորման, կը ներմուծէ «աղտոտ»ի եւ «պղծութեան» գաղափարները։ Այսպէս, հրեան պարզապէս չ՚ուտեր ինչ որ արգիլուած է, մինչ հաւատացեալ մահմետականին համար նոյնիսկ խոզի միսին դպնալ պղծութիւն է։

Քրիստոնէութեան պարագային ճաշասեղանը կարեւորութիւն ունի, քանի որ ան առիթ է միասին ըլլալու, հաց կիսելու, բաժնելու։ Յիսուս իր կեանքը կ՚աւարտէ ճաշասեղանի մը շուրջ՝ Վերջին Ընթրիքը։ Վերջ տալով ուտելիքներու նկատմամբ դրուած արգելքներու, քրիստոնէութեան հրէութեան հետ խզումը վերջնական բնոյթ կը ստանայ։ Յիսուսի համար «ինչ որ կը մտնէ (բերնէն) կարեւորութիւն չունի, բայց ինչ որ դուրս կու գայ (բերնէն) էական է, բանը, խօսքը»։ Հետեւաբար ամէն բան միայն հոգիին մէջ է։ Այս խզումը էական նշանակութիւն ունի, կ՚ենթադրէ նիւթական աշխարհի ստորադասումը հոգեկանի։ Այսինքն, քրիստոնէութեան հետ հոգեկան սնունդները կը դառնան գերակշռող եւ աստուածաբանական արժէքները սովորական եւ աւանդական արգելքներէն առաջ կու գան։ Պօղոս Առաքեալ սննդառական ոչ մէկ արգելք կը պարտադրէ, ինչ որ Աստուածաշունչի մէջ ըսուածէն տրամագծօրէն տարբեր է։

Հետագային սննդառական արգելքները պիտի սահմանուին եւ կախում պիտի ունենան էապէս Եկեղեցական ժողովներէն, Հռոմի պապերէն եւ աւանդութիւններէն, առանց աստուածաբանական հիմնաւորումի։ Այսպէս, Գիրգոր Գ պապը պիտի արգիլէ ձիու միս ուտել։

Քրիստոնեաները երբ Ուրբաթ օրերը ձուկ կ՚ուտեն, այդ սննդառական արգելքի մը ենթակայութիւն չէ, այլ ժուժկալութեան փաստ մը, ապաշխարհելու ձեւ մը, որ կրօնական կամ աստուածաբանական նշանակութիւն չունի։

Իսլամութեան պարագային յաւելեալ յստակացման կը հանդիպինք։ Գուրանի մէջ կան շուրջ քսան եղանակներ, գլուխներ (սուրաթներ), որոնք յատկացուած են սննդառական արգելքներու։ Յստակօրէն բանաձեւուած ցանկ չկայ, բայց կան արգիլեալ ուտելիքներ. ինչպէս խոզի միսը, միսը այն կենդանիներուն որոնց արիւնը չէ հոսած, ոգելից ըմպելիները։

Ծոմը (Ռամատան), մաս կը կազմէ իսլամութեան հինգ սիւներուն (ծոմը, աղօթքը, ողորմութիւնը, հաւատքի հաստատումը եւ ուխտագնացութիւնը)։ Մինչ հրեաներու մօտ, Քիփուրին, Նոր Տարուան առիթով, քսանչորս ժամուան ծոմ կայ, եւ քրիստոնեաներու պարագային ծոմի գաղափարը միշտ կ՚ընկերանայ ժուժկալութեան եւ ապաշխարհութեան, զրկուելով մաքրուելու։ Իսլամութեան համար Ռամատանը նախ տօն է եւ ուրախութիւն, ան ոչ մեղքերը քաւելու ծոմ է եւ ոչ ապաշխարհութիւն, ան հպարտութեան ծոմ է։ Եթէ մեղանչում եղած է, այդ պարագային ծոմը կը դառնայ նաեւ քաւութեան ծոմ։

Հնդկական կրօնը աւելի մշակութային եւ իմաստասիրական արտայայտութիւն է, Ասիոյ ամբողջ մէկ շրջանին համար, քան ի վերուստ յայտնուած կրօն, աստուածային երեւում եւ պատգամ։ Այսու հանդերձ, երեք աստուածութիւններ կը տիրապետեն հնդկական կրօնի (hindouisme) պարագային եւ կը կազմեն Երրորդութիւն մը. Շիւա, Վիշնու եւ Պրահմա։ Սրբազան գիրքեր, վետաներ, կը կազմեն ծննդոցը այս իմաստասիրութեան, որ կը հաշուէ բազմաթիւ աստուածութիւններ։ Պրահմանները կը կազմեն կրօնականներու բարձր դասը, եւ կ՚իշխեն միւս

դասերուն վրայ։ Վեցերորդ եւ հինգերորդ դարերուն, մեր թուագրութենէն առաջ, կը պարտադրեն սրբազան կովը, զոհուած կենդանիի միսին մէկ մասը, սկզբնական շրջանին, իրենց կը ծառայէր որպէս սնունդ։ Յետոյ, աստիճանաբար, կը հանին հոն ուր կովը երբեք չզոհաբերուի, այլ ըլլայ սիրոյ եւ խնամքի առարկայ, եւ ալ չծառայէ որպէս սնունդ։ Այսօր զարգացած է բուսակերութեան հոսանք մը։ Հնդկական կրօնի պարագային կը տեսնենք թէ ինչպէս սննդառական արգելքները հետեւանք են մարդկային միջամտութեան, քաղաքակրթութիւններու զարգացման ընթացքին, այսինքն աստուածաբանական հիմնաւորում չունին։

Հարկ է խօսիլ սննդառական սովորութիւններու մասին։ Այսօր Հնդկաստանի մէջ սննդառական սովորութիւնները նոյնը չեն ինչ որ էին Ֆլորանսի մէջ, երբ հոն կ՚իշխէին Մետիսիսները, 1450ին, քանի որ սննդառական սովորութիւնները եւ կանոնները հետեւանք են մշակոյթի մը, կրօնի մը, աշխարհագրութեան մը՝ որ կ՚ենթադրէ արտադրութիւն, եւ կամ ընկերութեան մը պատմութեան մէկ պահուն, անոր հոլովոյթին, նաեւ իրեն յատուկ սննդառական պատմութեան։

Այդ սովորութիւնները կը շարունակեն տեւաբար բնաշրջուիլ եւ փոփոխուիլ։ Իական եւ գլխաւոր սննդառական պահանջը բնախօսական եւ հոգեբանական է, կը բխի անօթութենէ, որուն վրայ պարտադրաբար կը պատուաստուի ախորժակի, համի եւ զգուանքի խնդիրը։ Օրինակ, բոլորովին տարբեր կենդանիի վերաբերումէն, որ կը յատկանշուի անմիջականութեամբ, անօթի մարդը ժամանակ կը յատկացնէ ընտրելու համար իր կերակուրը, հետեւելով իր ցանկութեան, ճաշակին, գնահատումներուն։

Բնախօսական անօթութիւնը, կեանքի բնազդը եւ հոգեբանական ներդաշնակ կազմակերպութիւնը (բնական հաւասարակշռութիւն չըսելու համար) կ՚առաջնորդեն դէպի սնունդ ընդունելու արարքը։ Ուտել, մեր մէջ մուծել, կ՚ենթադրեն կեանքի իսկական նուաճում, շարունակութեան եւ վերապրումի ապահովում, հիմնուած յարձակողական արարքի մը վրայ, եւ հսկայական հեշտութեան ու վայելքի ներդրում։

Այս ծիրէն ներս կ՚արժէ երկու խօսք ալ ըսել հիւանդագին կերպով ախորժակ չունենալու կամ մերժումի մասին (որ ծանօթ է anorexie անունով), որ իսկական հիւանդութիւն է եւ կը համապատասխանէ ախորժակի կորուստին։ Հիւանդը կ՚ըսէ որ երբեք անօթի չէ, ուտելու ցանկութիւն չունի։ Մինչդեռ սնունդ ընդունելու արարքը պարզ կը թուի, երբ ամէն բան բնական ընթացքի մէջ է։ Բայց գիտենք, 1500 թուականէն ասդին, մեկնելով Սիմոն Փորթա Օ Փարթիոյի նշումներէն, ապա 1689ի Ռիչար Մորթոնի, որ ուտել այդքան ալ պարզ արարք մը, շարժում մը չէ, հակառակ տեսնուածին։ Ռիչար Մորթոն մանրամասնօրէն կը նկարագրէ հիւանդագին կերպով ախորժակ չունեցողի, anorexie-է տառապողի ընթացքը, այս հիւանդութիւնը ինք կը կոչէ «հիւծախտ» (phtisie, թէեւ այս բառով հետագային կը ընորոշուէր թոքախտը) կամ «ջղային սպառում»։ Իրմէ ետք բազմաթիւ տեսութիւններէ տեսական վարկածներ եւ ախտաբանութիւններ զարգացան, առաջարկուեցան դարմանման մին միւսը հակասող եղանակներ։ 1873ին, Ֆրանսայի մէջ, Հիւշարի աշխատասիրութիւնները կանգ կ՚առնեն anorexie mentale յղացքին (յունարէն anorexia, ախորժակի բացակայութիւն) վրայ, եւ անկէ ետք տեսութիւններ զարգացան, ըստ հոգերուժական բժշկագիտական հոսանքներու։ Այսօր այս հիւանդութեան հոգերանական ախտաբանական բնորոշումը ընդունուած է, չնորհիւ հոգեվերլուծութեան բերած նպաստին, որմէ ետք կ՚առաջադրուէին դարմանումներ, հոգերուժական կամ այլ, ինչպէս ընտանեկան միջավայրէն մեկուսացում։

Եթէ հոգեբանական ախտավարակ մտացնորքը (կամ զառանցանքը) տարբեր հայեացքով կը դիտէ եւ կը կազմակերպէ ենթակային աշխարհը, ախորժակի մերժումի այս հիւանդութիւնը գայթակղեցնող է, քանի որ անչեղ կերպով կ՚առաջնորդէ մահուան, կ՚արհամարհէ մարմինը, սեռը եւ արտաքին իրականութիւնը։ Դեղերը եւ առատ սննդառութիւնը լուծում չեն։ Այսօր այս հիւանդութիւնը դարմանել կարելի է եթէ խնամուի հիւանդը եւ նկատի առնուի իր ընտանիքը, եւ եթէ հոգեբանական դարմանումները սկսին ժամանակին եւ համադրուած ըլլան։

Այս հիւանդութիւնը հոյակապ կերպով ամփոփուած է Շարլ Պոտլէրի “Heautontimoroumenos” բանաստեղծութեան

վերջին քառեակներուն մէջ (Les Fleurs du Mal Spleen, à J-G-F)։

ԺԻՐԱՅՐ ՅՈՎՍԷՓԵԱՆ
Հոգեբոյժ, Փարիզ

…Ne suis-je pas un faux accord
Dans la divine symphonie,
Grâce à la vorace ironie
Qui me secoue et qui me mord?

Elle est dans ma voix, la criarde!
C'est tout mon sang, ce poison noir!
Je suis le sinistre miroir
Où la mégère se regarde.

Je suis la plaie et le couteau!
Je suis le soufflet et la joue,
Je suis les membres et la roue,
Et la victime et le bourreau!

Je suis de mon cœur le vampire,
- Un de ces grands abandonnés
Au rire éternel condamnés
Et qui ne peuvent plus sourire!

Charles Beaudelaire

…Միթէ սխալ դաշն մը չեմ
Մէջն աստուածային համանուագին
Շնորհիւ անկուշտ ծաղրին
Որ զիս կը ցնցէ եւ կը խածնէ։

Ան ձայնիս մէջ է, ճչացո՛ղ։
Ամբողջ արիւնս է, սեւ թո՛յն
Ես չարաղէտ հայելին եմ
Ուր ինքզինք կը դիտէ կի՛նը մոլեգնոտ։

Ես վէրքն ու դանա՛կն եմ։
Ես ապտակն ու թո՛ւշն եմ։
Ես անդամներն ու անիւն եմ,
Եւ զոհն ու դահի՛ճն եմ։

Ես իմ սրտիս արիւն ծծող ուրուական,
- Մին այն մեծ լքեալներէն,
Դատապարտուած յաւերժական քրքիջի
Եւ որոնք այլեւս չեն կրնար ժպտիլ։



ՎԱՀԷ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

ԼՈՒՍԱՐՁԱԿՆԵՐԻ ՀԵՌՈՒ ԳԵՂԱՆԿԱՐԻՉ ՄԸ

ԱՍԳԻՆ



Վահէ Պարսումեանի կարելի չէ պատահմամբ հանդիպիլ: Ինքզինք չի ցուցադրեր: Բայց իրեն հետ զրոյցը երբ սկսի, տասնամեակները կ'անհետանան: Հանդարտ անձ մը, կարծէք լռակեաց, բայց երբ խօսի, երբ լսող գտնէ, պատմութիւն, արուեստ, խորք ու խորհուրդ միաժամանակ կը յայտնուին: Արդէն վաթսունամեակ մը գլորած ու անցած է, բայց պահած է երիտասարդական թարմութեան աւիւն մը, որ կը յատկանշուի նորի եւ թաքնուածի մնայուն որոնումով, տեսածի ետին անտեսը նուաճելու մնայուն լարում մը:

Ե՞րբ սկսած է նկարել. «Պէյրութ ծնած եմ եւ հոն սկսայ նկարել, արտայայտուիլ: Դիպուած մը ճամբայ բացաւ: Հօրաքրոջս տղան արուեստագէտ Կիւվտէր, Երկրորդ Աշխարհամարտէն ետք Փարիզ եկած էր արուեստ սորվելու: Պէյրութ վերադարձին զիս նկատեց, եօթը տարեկան էի: Ես ալ միտքս դրի արուեստի հետեւիլ. համեստ ընտանիքի զաւակ էի, աշխատեցայ, գործատէրերը ազնիւ մարդիկ էին, եւ ժամանակ կը գտնէի նկարելու, սորվելու, կ'աշխատէի տունը, զոր վերածած էի աշխատանոցի: Գործերս առաջին անգամ ցուցադրուեցան Պէյրութի Կալըրի Ամաթէօրի մէջ: Կիւվտէրի Փարիզէն երկրորդ վերադարձին, կրկին հանդիպեցանք: Ինծի ըսաւ որ քիլօ մը թուղթ գնեմ եւ ամէն օր գծեմ: Տասնըհինգ տարեկան էի, եւ արդէն նետուած էի ապրուստ ճարելու ասպարէզ: Բայց այդ ձեւով չէի կրնար շարունակել: Այլ էին հետաքրքրութիւններս: Օր մը ալ որոշեցի Փարիզ երթալ եւ նպատակս իրագործեցի 1974ին: Արուեստից Բարձրագոյն վարժարան, Պոզ'ար գացի եւ դասընթացքը աւարտեցի երեք տարիէն, փոխան վեցի, քանի որ որոշ գիտութիւն եւ պատրաստութիւն ունէի արդէն: Այդ շրջանին, ապրուստի համար, շրջանակներ կը շինէի, եւ իւղաներկ գործերու վերկանգնումով ալ կը զբաղէի»:

Նկարիչները, իրենց ստեղծագործական տարիներուն, կ'անցնին հանգրուաններէ: Այդ մասին երբ կը հետաքրքրուիք, Վահէ Պարսումեան իր առաջին միտումները կը բացատրէ. «Այժմէա-

կան գործ կ'ուզէի ընել, ինչ որ ակադեմիան կը սորվեցնէր, մերժեցի, ես իմ ուղիս կ'ուզէի գտնել: Մեծ հարցական մը ունէի. ինչո՞ւ իրապէս մեծ նկարիչներ կան որոնք թանգարաններու մէջ չեն գտնուիր, մինչ ուրիշներ հոն են: Նկարչութիւնը լուրջ հարց մըն է, ան ձեւական գեղեցիկ եւ ծափահարութիւն չէ, այլ մտային աշխատանք է, բանաստեղծութիւն է: Նկարիչը կը ծնի, բայց ինքզինք կը կազմէ, կը կառուցէ, կը հասկնայ որ նկարչութիւնը կառոյց ունի, չափանիշ ունի, եթէ այդպէս չէ իր գործը, նկարչութիւն չէ»:

Թէ այս պարագային նկարչութիւնը ինչպէ՞ս կ'առընչուի իրականութեան եւ բնութեան, ի՞նչ են յարաբերութիւնները լուսանկարչութեան եւ գեղանկարչութեան միջեւ, Վահէ Պարսումեան կը խօսի. «Կեանքի մէջ կայ խորք՝ զոր չենք տեսներ եւ նկարիչն է որ կ'աշխատի թափանցել այդ խորքը: Ժամանակի ընթացքին հետ խորքի որոնումս կը լրջանայ, կը մօտենամ իմաստասիրական հարցերու, լարում մը՝ որ չի դադրիր: Մարդիկ կամ արուեստասէրը ի՞նչ կը գտնեն գործին մէջ: Շատեր գործը կը սիրեն, բայց չեն գիտեր ինչո՞ւ կը սիրեն, իրենց մէջ եղածը կը գտնեն: Սիրել տարբեր հարց է, հասկացողութիւնն է կարեւորը, եւ ես կը ձգտիմ այդ հասկացողութեան»:

Թէեւ ստեղծագործողը առանձին է, բայց թաքուն ցանկութիւն կ'ունենայ բան մը փոխանցելու: Երբ հարց կը տրուի թէ ինք ի՞նչ կ'ուզէ ըսել, փոխանցել, Վահէ Պարսումեան կը պարզէ իր ընբռնումը. «Արուեստագէտը իր հայեցակէտը ունի, այդ կը պաշտպանէ, կը պայքարի անոր համար: Կոյս երբ նկարեց արքայական ընտանիքի անդամները, նկարեց թագաւորը, զանոնք ներկայացուց որպէս այլասերածներ, անոնք այլասերած էին իրարու մէջ մնալով, այդպէս ըրաւ, որովհետեւ ըսելիք ունէր, ուզեց ճշմարտութիւնը արտայայտել, չգոհացաւ միայն գծելով: Երբ միտք չկայ, արուեստի գործ չկայ: Նոր լեզու կը բերեն մեծերը, տեսնելու, հասկնալու, հաղորդակցելու: Նկարչութիւնը պատերը զարդարելու համար չէ: Կը յիշեմ Փիքասոյի մէկ խօսքը, որ արուստագէտին համար ուղեցոյց պէտք է ըլլայ, ըստ որուն արուեստը չէ եղած պատերը զարդարելու համար, ան յարձակողական եւ պաշտպանողական արուեստ է, l'art n'est pas fait pour dėcorer les murs, l'art est offensif et dėfensif»: Զրոյցը կը շարունակուի եւ Վահէ Պարսումեան կը խօսի իր ստեղծագործական ընբռնումի մասին. «Կարենալ թափանցել խորքը ամէնէն դժուար գործն է, այդ թափանցումը պարզացումն է, որ շատ դժուար է: Հարկ է վերցնել ինչ որ աւելորդ է, եւ ապա կը մնայ էականը, այն ատեն արուեստագէտը կը նուաճէ ճշմարիտը: Իսկ ճշմարիտը այն է որ զիս կը կապէ էութեան եւ թէ՝ ըլլալու, գոյութիւն ունենալու: Էութիւն եւ գոյութիւն զիրար կ'ամբողջացնեն: Սխալ է զանոնք տեսականօրէն անջատել»:

Այս բացատրութիւնները հետաքրքրական ըլլալով հանդերձ, կ'ընբռնուի՞ն արուեստասէրին կողմէ, ան այս մօտեցումը կը ցուցաբերէ՞: Հարց է: Խօսելով արուեստասէրի եւ անոր վերաբերումի մասին, Վահէ Պարսումեան կ'ըսէ. «Արուեստասէրները ընդհանրապէս երկար կը դիտեն գործը, յետոյ կը գտնեն շաղկապումներ, կը խօսին գոյներու եւ տպաւորութիւններու մասին, եւ որպէսզի հասկնան՝ կը բարդացնեն: Երբ կը դիտեն, գործին մէջ չեն մտներ, թէեւ, եթէ ճիգ ընեն, աւելի ուշ՝ կը հասկնան: Արուեստի լեզուն կը ճշդէ իր իսկ տարածութիւնը»:

Վահէ Պարսումեանի գեղանկարները երեւութապէս պարզ են, գիծեր, գիծերով կառուցուած, ստեղծուած եւ թելադրուող ծաւալներ, քանի որ գիծը կը ստեղծէ ծաւալները, որոնք առաջին հայեացքով ոչինչ կրնան ըսել, կը զարմացնեն, կարծէք երկրաչափական բարդ պատկերներ ըլլան: Կա՞յ ընդհանուր ձգտում մը, կամ նկարչական դպրոց մը, որուն շրջագիծին մէջ կը մտնեն այս գործերը: Կ'ըսէ թէ՝ «կայ նման դպրոց, որ կը կոչուի ėcole conceptuelle, բայց ես իրենց պէս չեմ ըներ, իրենց չեմ հետեւիր, իմ ոճս ունիմ: Գաղափարը նիւթին հետ համընթաց պէտք է ըլլայ: Ամէն նկարիչ կեցուածք մը կ'ունենայ, եւ կը

խօսի իր լեզուով: Արուեստագէտը կը տեսնէ, գիտէ, որ ինք ալ կ'ապրի սպառողական ընկերութեան մէջ, ուր կայ առատութիւն, եւ այդ է այսօր ներկայացող աշխարհը: Ան աչք է, եւ ներկայացող պատկերէն անդին կը տեսնէ խորքը: Մարդիկ երբ գնում կ'ընեն, ծրարի կամ պայուսակի մէջ եղածը կը գործածեն, օրինակ՝ ուտելիքը, բայց գնուած ապրանքի ծրարը կը նետեն: Բայց ի՞նչ է այդ միւսը, ծրարը, ան կառուցուած է, ես կ'առնեմ ինչ որ մարդիկ չեն տեսներ, չեն պահեր, ինչպէս կերպընկալ նիւթէ տոպրակները: Այսպէս, թափանցիկութիւնները գումարեցի, բացի եղածէն, ինչ որ մեր տեսողութենէն անդին է, կը զգամ որ իմ մէջ բան մը կայ, կ'ընեմ այնպէս որ սպառող մարդը աչքերով դպնայ այն բաներուն, զորս անմիջապէս չի տեսներ, քանի որ իր հետաքրքրութեան սահմաններուն մէջ չէ: Այս փնտռտուքը, խորացման ճիգը կ'արտահանէ ներքին կառոյցները, ուրկէ կը ծնին տարածքները եւ ծաւալները, ինչ որ իմացական արարք է: Գիծը կը ծնի ծաւալ, որ միաժամանակ նիւթ է, ինչպէս ձեւը եւ գոյնը»:

Այս հայ արուեստագէտին հետ զրոյցը անկատար պիտի ըլլար, եթէ չխօսէինք նաեւ իր ստեղծագործութեան մէջ հայկական շեշտին մասին: Այս մասին խիստ ուշագրաւ արտայայտութիւն ունի Վահէ Պարսումեան. «Հայկական շեշտը գործերուս մէջ կը կայանայ minimalismeի մէջ, որ կը հակադրուի մեծղիութեան: Այդ շեշտը կը կայանայ բիւրեղացումի մէջ: Այդպէս եղած են հայերը եւ այդպէս եղած է հայ արուեստը: Մեր հայրերը մեծ տաճարներ չեն կառուցած, բայց հիւսած են բիւրեղացած պատեր՝ Աստուծոյ հասնելու համար, ինչպէս որ են մեր մատուռները, բիւրեղացածը եղած է մեր չափը: Կորած ենք ամէն անգամ երբ գացած ենք զարդարուեստի ճամբով, երբ յաւելեալ զարդարանքը փնտռած ենք: Նկարիչը եւ արուեստասէրը եթէ նկարի կտաւէն դուրս չելլեն, արուեստի իւրայատուկ աշխարհը չեն նուաճեր»:

Այս լռակեաց եւ ինքնա-

տիպ գեղանկարիչը տեւաբար փնտռտուքի մէջ է, կը մտածէ աչքով, չի բաւարարուիր տեսածով, խորք թափանցելու արկածախնդրութիւնը կ'ապրի: Ինչ որ կը նշանակէ թէ իր ուրոյն աշխարհը ունի, ուր սպառողական ընկերութիւնը չի մտներ, եւ այս ազատութիւնը ինք կը սահմանէ ամենայն պարզութեամբ որ «նկարչութիւնը վաճառականութիւն չէ, գեղանկար մը պարունակ է, հրաւէր՝ մակերեսէն դէպի խորք ճամբորդութեան: Գեղանկարչութիւնը կեցուածք է, կրնանք նոյնիսկ ըսել՝ մարդկութեան լինելութեան հանդէպ քաղաքական կեցուածք»:

Վահէ Պարսումեան մասնակցած է բազմաթիւ երկիրներու մէջ բազմաթիւ հաւաքական ցուցահանդէսներու, Փարիզ թէ Ֆրանսայի տարբեր քաղաքները, Անգլիա, Միացեալ Նահանգներ, ունեցած է անձնական ցուցահանդէսներ, որոնց առաջինը՝ Պէյրութ, 1970ին, եւ ապա Զուիցերիա, Գերմանիա, եւայլն:

Աշխատանոցին մէջ դասաւորուած գեղանկարները, աւարտած, չաւարտած, բաներ կ'ըսեն, եւ այդ ըսուածները հասկնալու համար, հարկ է մտնել արուեստագէտի խաղին մէջ, չդիտել դուրսէն, չմտածել, ինչպէս կրկնեց, պատ զարդարելու մասին: Վահէ Պարսումեանի արուեստի ըմբռնումը իմացական է, եւ ինք կը շեշտէ այդ, ինչ որ կը խտանայ իր հետեւեալ մտածումներուն մէջ. «Երբ արուեստի գործէն կը վերցուին երկրորդականը եւ աւելորդը, կը մնայ էականը, եւ այն ատեն կը յայտնուի խոր մտածման գեղանկարը: Ես կը փորձեմ երթալ խորը ուր իրերը գոյութիւն ունին բառերէ առաջ»: Իր Միւնիխի ցուցահանդէսի պրակին մէջ կան նաեւ հետեւեալ տողերը.

Քառակուսին մարմինն է,
Բոլոր մարմինները:
Ան կը սահմանէ զուգահեռականները
Կը տեղադրէ ձեւերը
Կ'աճի, կը տարածուի
Կը խտանայ, կը կծկուի
Առանց կորսնցնելու բան մը իր էութենէն:

ԲԱԳԻՆ

ԲԱԳԻՆ

«ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՑՈՅՑԸ» - է տարի, 1913
Բ հրատարակութիւն
Թէոդիկ
Հայկական մատենաշար Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան
Հալէպ, 2008



«ՀԱՅԵԱՑՔ ԵՒ ԿԵՑՈՒԱԾՔ - Հրապարակախօսական էջեր»
Մեթր Գ. Տէրտէրեան
Պէյրութ, 2008



«ՅՈՒՇԵՐ»
Գէորգ Մանճիկեան
Մոնթրէալ, 2008

«ՀՐԱՅՐՔ ՄՈՒԹԻՆ»
Եղիա Տէմիրճիպաշեան
Հրատարակութիւն՝ Թրքահայ ուսուցչաց հիմնարկի
Կազմեցին եւ խմբագրեցին՝ Սիրանոյշ Դուոյեան եւ Սեւան Տէյիրմէնճեան
Իսթամպուլ - 2008

«ԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՍՏԵՂՈՒԹԻՒՆ»
Սարգիս Վահագն
Լոս Անճելէս, 2008



«ՊԱՏԻՒ ԱՅՆԹԱՊԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ... ԽՕՍՔ ԱՐԿԱԾԱՀԱՐԵԱԼԷՍ»
Թորոս Թորանեան
Հալէպ, 2008

«ԿԵԱՆՔԸ ԴՌՆՓԱԿ ԱՇԽԱՐՀՈՒՄ»
Եղիսաբէթ Չափչովեան-Մանկասարեան
Սիտնի, 2008

«ԳԱՐԵԳԻՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ» - Ե հատոր
Խմբագիր՝ Վազգէն Ղուկասեան
Ֆրանսերէն բնագիրէն թարգմանեց՝
Գրիգոր Շահինեան
Հրատարակութիւն՝ Հայկ եւ Էլզա
Տիտիզեան Ֆոնտի